



Հեղափոխության խնդիրն էլ է կապար՝

ՋՈՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Կրթության հարցերի վարչության պրոֆեսոր, պրոֆեսոր

Հեղափոխության խնդիրն էլ է կապար՝

ՎԱՀԵ ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ

Կրթության հարցերի վարչության թեկնածու, դոցենտ

Հեղափոխության խնդիրն էլ է կապար՝

ԹԱԴԵՎՈՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կրթության հարցերի վարչության թեկնածու, դոցենտ

ՏԱԹԵՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Կրթության հարցերի վարչության թեկնածու, դոցենտ

ԴԻԱՆԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային կրթության հարաբերությունների

ամբիոնի ասպիրանտ

ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ

ՀՊՏՀ կրթության մեթոդական մեթոդների

ամբիոնի ասպիրանտ

ՀԱՄԼԵՏ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային կրթության հարաբերությունների

ամբիոնի ասպիրանտ

**ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

DOI: 10.52174/978-9939-61-272-0

Ե Ր Ե Վ Ա Ն

«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2023

Մասնագիտական խմբագիր՝

Վ. Բուլանիկյան
տ.գ.թ., դոցենտ

Գրախոսներ՝

Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆեսոր
Լ. Սարգսյան
տ.գ.թ.

Խմբագրական խորհուրդ՝

Գ. Գալոյան
տ.գ.դ., պրոֆեսոր
Թ. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆեսոր
Դ. Հախվերդյան
տ.գ.դ., պրոֆեսոր
Գ. Նազարյան
տ.գ.թ., դոցենտ

Կենսաթոշակային, աշխատանքի և զբաղվածության քաղաքականությունները սոցիալական
Կ 414 պետության ձևավորման համատեքստում / Զ. Թաղևոսյան և ուրիշներ.- Եր.: Տնտեսագետ, 2023.
186 էջ («Ամբերդ» մատենաշար 64):

Սոցիալական կողմնորոշում ունեցող տնտեսություններում մարդկային կապիտալի ձևավորման, պահպանման և զարգացման խնդիրը մղվում է առաջին պլան: ՀՀ մարզերի և Երևան քաղաքի աշխատաշուկան բնութագրող հիմնական և մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների փոխառնչությունների վերլուծության, դրանց միտումների գնահատման, կենսաթոշակային, աշխատանքային և զբաղվածության հարաբերությունների միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա սույն հետազոտությունում մշակվել և ներկայացվել են ՀՀ պետական և ոչ պետական հատվածների աշխատավարձերի ձևավորման մեթոդաբանական հիմքերին, գործող կանոնակարգումներին, աշխատանքային կենսաթոշակների չափերի ասիմետրիան ու ավելացմանն առնչվող հիմնախնդիրների լուծման նոր մոտեցումներ, զբաղվածության աջակցության պետական ծրագրերի և արդյունքների գնահատման, ինչպես նաև նշված բնագավառներում սոցիալական քաղաքականության անկա բացերի վերացման և գործող համակարգերի բարելավման առաջարկություններ:

Հետազոտությունը կարող է օգտակար լինել կենսաթոշակային, աշխատանքի և զբաղվածության քաղաքականությունները մշակող պատկան մարմինների, նշված ոլորտների զարգացման առնչությամբ գիտական հետազոտություններ իրականացնող անձանց և այլ շահառուների համար:

Հետազոտական խումբը խորին երախտագիտություն է հայտնում փորձագետներ՝ «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ-ի նախագահ, տնտեսագետ Մովսես Արիստակեսյանին, Գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանին, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության բաժնի պետ Լաուրա Դեմիրջյանին, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի տեղակալ Կորյուն Ղազարյանին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժորա Սարգսյանին:

Ներածություն..... 5

Գլուխ 1. ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... 9

1.1. ՀՀ մարզերի և Երևան քաղաքի աշխատաշուկան բնութագրող հիմնական և մակրոտնտեսական այլ ցուցանիշների փոխառնչությունների վերլուծությունն ու միտումների գնահատումը 9

1.2. ՀՀ աշխատանքի շուկայի ցուցանիշների վիճակագրական վերլուծությունը և մակրոտնտեսական ցուցանիշների միջև կապի մոդելավորումը: Աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշների սեզոնայնության վերլուծությունը..... 24

1.3. ՀՀ զբաղվածության քաղաքականության և զբաղվածության ապահովման պետական ծրագրերի ընթացիկ արդյունքների վերլուծությունը, գնահատումը և առարկայական ներուժի ավելացման լուծումները 34

Գլուխ 2. ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 44

2.1. Պետական և ոչ պետական հատվածներում աշխատավարձերի ձևավորման մեթոդաբանությունների, կառուցակարգերի և քաղաքականության միջազգային փորձի ուսումնասիրությունը և համեմատական վերլուծությունը..... 44

2.2. Տարիքային աշխատանքային կենսաթոշակային համակարգերի միջազգային փորձը: Կենսաթոշակային համակարգերի հայեցակարգային կառուցակարգերը, տիպերը և տարրերը..... 81

2.3 Հայաստանի Հանրապետությունում աշխատավարձերի սահմանման գործող կարգավորումների թերությունների վերացման և կատարելագործման լուծումների մշակումը փորձագիտական գնահատականների հիման վրա 115

Եզրակացություն..... 140

Օգտագործված գրականություն 146

Հավելված 149

Համառոտագրեր..... 155

Ներկա դարաշրջանում սոցիալական պետությունը ժողովրդավարական հասարակարգ ունեցող ցանկացած քաղաքակիրթ երկրի, որտեղ իշխում է իրավունքը, անքակտելի բնորոշումն է: Այն պետության մոդել է, որի քաղաքականության անկյունաքարը նյութական բարիքների վերաբաշխումն է սոցիալական արդարության սկզբունքներին համապատասխան, որտեղ յուրաքանչյուր քաղաքացու համար ստեղծվում են արժանապատիվ ապրելու պայմաններ, առաջանցիկ բարելավվում է ցածր եկամուտ ունեցող անձանց կենսամակարդակը, ապահովվում է հանրային կյանքի որակի կայուն առաջընթաց, մեղմվում են սոցիալական տարբերությունները: Պետությունը, որը հիմնվում է ժողովրդի՝ որպես իշխանության աղբյուրի վրա, կարող է գոյություն ունենալ միայն քաղաքացիների բարօրությանն ու բնակչության սոցիալապես անապահով խմբերի պաշտպանությանն ուղղված արդյունավետ սոցիալական քաղաքականության իրականացման պայմաններում:

Սոցիալական ոլորտում պետության կողմից իրականացվող և առկա իրավիճակից բխող համարժեք ռազմավարությունը, սոցիալական իրավունքների ամրապնդումը և գործնականում դրանց լիարժեք երաշխավորումը նպաստում են սոցիալական լարվածության հնարավորինս թուլացմանը, հասարակության և յուրաքանչյուր քաղաքացու ազատության և բարեկեցության կայուն մթնոլորտի ձևավորմանը: Դա նշանակում է, որ պետությունը ծառայում է հասարակությանը և ձգտում է բացառել կամ նվազագույնի հասցնել չարդարացված սոցիալական տարբերությունները:

ՀՀ զբաղվածության ոլորտում և աշխատաշուկայում առկա խնդիրներն էապես կարևորում են սոցիալական քաղաքականության առաջնահերթությունը: Բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովումը պետք է դիտարկել որպես պետության կայուն տնտեսական աճի ապահովման մակրոգործոն:

Արդյունաբերական զարգացած երկրների մեծ մասում տնտեսական զարգացման հաջողությունն ավանդաբար գնահատվում է զբաղվածության և գործազրկության միտումներով: Շուկայական հարաբերությունների ձևավորման արդյունքում աշխատաշուկայի իրավիճակը պայմանավորող գործոնների վրա պետական ազդեցության աստիճանը զգալիորեն նվազում է, հետևաբար նվազում է պետության՝ որպես խոշորագույն գործատուի դերը: Իր հերթին՝ համակարգային արտադրական և ներդրումային ճգնաժամի պայմաններում տնտեսության մասնավոր ոլորտն անկարող է ապահովել զբաղվածության անհրաժեշտ ծավալ, արագորեն հարմարվել շուկայի նոր իրավիճակին: Այդ իրավիճակը շարունակում է պահպանվել՝ խորացնելով

բնակչությանը արժանապատիվ վարձատրվող աշխատանքով, իսկ ձեռնարկություններին՝ որակավորված աշխատուժով ապահովելու խնդիրը:

Տնտեսական առումով, գործազրկությունը կարելի է համարել օրինաչափ երևույթ, սակայն սոցիալական տեսանկյունից այն, անկասկած, չարիք է: Գործազրկությունը հանգեցնում է սոցիալական բազմաբնույթ խնդիրների և հասարակական լարվածության սրմանը, իսկ մյուս կողմից՝ պահանջում է աշխատաշուկայում ընդլայնել զբաղվածության պետական աջակցության գործիքակազմը, որի ռազմավարական նպատակը պետք է լինի արդյունավետ զբաղվածության ապահովումը:

Աշխատաշուկայում, բացի շուկայական սուբյեկտների շահերից, արտացոլվում են տարբեր գործընթացներ. սոցիալ-տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական և այլն: Արդյունավետ գործող աշխատաշուկայի ձևավորումը պետության սոցիալական և տնտեսական գլխավոր խնդիրներից է: Զբաղվածության և գործազրկության հիմնախնդիրների բացահայտումը թույլ է տալիս կանխատեսել ապագա իրավիճակը, որը և աշխատաշուկայի պետական կարգավորման նպատակային և արդյունքահեն միջոցառումների ներդրման հիմքն է: Իր հերթին, զբաղվածության և գործազրկության կարգավորումը թույլ է տալիս կայունացնել ազգային տնտեսությունը, ինչպես նաև բարելավել հասարակության բարեկեցությունը:

Հայաստանի Հանրապետությունում ևս առաջնային պետք է դիտարկվեն ոչ միայն պետության, այլև անհատի սոցիալական կայուն և անվտանգ զարգացման հիմնախնդիրները: Նշված խնդիրները, բնականաբար, ներառում են նաև աշխատավարձի և կենսաթոշակային քաղաքականությունները, որոնք պետության սոցիալական քաղաքականության անկյունաքարային բաղադրիչներն են:

Հետազոտության նպատակը՝ սոցիալական պետության ձևավորման համատեքստում, կենսաթոշակային, աշխատանքային և զբաղվածության հարաբերությունների միջազգային փորձի ուսումնասիրությունն է, Հայաստանի Հանրապետությունում պետական և ոչ պետական հատվածների աշխատավարձերի ձևավորման մեթոդաբանական հիմքերի, գործող կանոնակարգումների վերլուծությունը, աշխատանքային կենսաթոշակների չափերի սահմանման և ավելացման հիմնախնդիրների ուսումնասիրությունը, ՀՀ զբաղվածության պետական քաղաքականության, այդ թվում՝ զբաղվածության աջակցության պետական ծրագրերի և արդյունքների փորձագիտական վերլուծությունը, ինչպես նաև սոցիալական քաղաքականության նշված բնագավառներում առկա բացերի վերացման և գործող համակարգերի բարելավման առաջարկությունների փաթեթի ներկայացումն է:

Հետազոտության խնդիրներն են.

1. ՀՀ մարզերի և Երևան քաղաքի աշխատաշուկայի ընթացիկ իրավիճակի ուսումնասիրությունը, աշխատաշուկան բնութագրող հիմնա-

կան և մակրոտնտեսական մյուս ցուցանիշների փոխառնչություններին և միտումների գնահատումը,

2. ՀՀ գործող զբաղվածության պետական քաղաքականության և զբաղվածության ապահովման պետական ծրագրերի արդյունքների ընթացիկ փորձագիտական վերլուծությունը և գնահատումը, ինչպես նաև պետական այդ ծրագրերի արդյունքային առարկայական ներուժի ավելացման առաջարկությունների ներկայացումը,
3. միջազգային լավագույն փորձի հիման վրա պետական և ոչ պետական հատվածներում աշխատավարձերի ձևավորման հիմքում դրված մեթոդաբանությունների, կառուցակարգերի և պետական քաղաքականության հիմնադրույթների ուսումնասիրությունը և համեմատական վերլուծությունը,
4. Հայաստանի Հանրապետությունում աշխատավարձերի սահմանման գործող կարգավորումների (ՀՀ աշխատանքային օրենսգիրք, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենք, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք և այլն) թերությունների վերացման և կատարելագործման լուծումների մշակումը,
5. ընտրված երկրներում աշխատանքային ստաժի գործոնով պայմանավորված կենսաթոշակների չափերի ավելացման կառուցակարգերի և կանոնակարգերի ուսումնասիրությունը (ըստ համաձայնեցված պարամետրերի), Հայաստանի Հանրապետությունում գործող կարգավորումների հետ համեմատական վերլուծությունը և ամփոփ գնահատումը, ստացված արդյունքների հիման վրա կենսաթոշակառուների սոցիալական իրավունքների բարելավման առաջարկություններին ներկայացումը:

Հետազոտության մեթոդաբանությունը

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի աշխատաշուկայի ընթացիկ իրավիճակի, գործազրկության և զբաղվածության, դրանց առնչվող մակրոտնտեսական ցուցանիշների շարժընթացի ուսումնասիրության ընթացքում կիրառվել են վիճակագրության ու էկոնոմետրիկայի ընդհանուր տեսության մեթոդներ:

Հետազոտական բացահայտումներն ու եզրահանգումները հիմնվել են փորձագիտական գնահատումների, միջազգային փորձի համեմատական վերլուծության, օրենսդրափրավական կարգավորումների գնահատման վրա: Ուսումնասիրությունը, մասնավորապես, ներառել է հետազոտության ինստիտուցիոնալ, կառուցվածքային, ֆունկցիոնալ, գործընթացային մեթոդաբանական ուղղությունները:

Բոլոր քանակական ու որակական վերլուծությունների արդյունքները հենվել են հավաստիության, ամբողջականության, համադրելիության ու հասցեականության մեթոդաբանական սկզբունքների վրա:

Տեղեկատվության աղբյուրները Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի պաշտոնական հրապարակումներն են, զբաղվածության կարգավորում իրականացնող պետական մարմինների հաշվետվությունները, Եվրաստատի և տարածաշրջանային այլ վիճակագրական կառույցների, միջազգային կազմակերպությունների՝ Համաշխարհային բանկի, Աշխատանքի միջազգային կազմակերպության և միջազգային հեղինակավոր հետազոտությունների և զեկույցների տվյալները, ուսումնասիրվող երկրների աշխատանքի և սոցիալական նախարարությունների պաշտոնական կայքէջերում տեղադրված օրենսդրական ակտերը:

Հետազոտության արդյունքները

Հետազոտության խնդիրների իրացմամբ՝ մասնագիտական ուսումնասիրությունների, փորձագիտական վերլուծությունների ու գնահատումների հիման վրա ներկայացվել է ամփոփ զեկույց, որը բովանդակային առումով ներառել է ՀՀ մարզերի և Երևան քաղաքի աշխատաշուկայի ընթացիկ իրավիճակի, աշխատաշուկան բնութագրող հիմնական և փոխառնչվող մակրոտնտեսական ցուցանիշների և դրանց միտումների վերլուծությունն ու գնահատումը, ինչպես նաև բարելավման առաջարկությունների փաթեթը, միջազգային լավագույն փորձի հիման վրա պետական և ոչ պետական հատվածներում աշխատավարձերի կարգավորման ամբողջականացման և առավել արդարացի սահմանման կառուցակարգերի ձևավորման լուծումները, Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային կենսաթոշակների չափերի սահմանման և ավելացման գործող կանոնակարգումների բարելավման առաջարկությունները:

**ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԵՎ
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**1.1 ՀՀ մարզերի և Երևան քաղաքի
աշխատաշուկան բնութագրող հիմնական և
մակրոտնտեսական այլ ցուցանիշների
փոխառնչությունների վերլուծությունն ու
միտումների գնահատումը**

Աշխատանքի շուկայում ձևավորված իրավիճակն արտացոլում է ցանկացած երկրի ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը: Այն, միևնույն ժամանակ, հասարակությունում տեղի ունեցող բարեփոխումների կարևորագույն գործոնն է, այն հիմնավորմամբ, որ տնտեսական առաջընթացը և բնակչության բարեկեցության աճն առաջնահերթորեն կապված են աշխատուժի վերարտադրության հետ:


Գործազրկության մակարդակը, թերևս, աշխատաշուկայում տիրող իրավիճակն արտացոլող առանցքային ցուցանիշն է: 2022 թ. աշխարհում գործազուրկների թիվը կհասնի մինչև 207 միլիոն մարդու, ինչը 21 միլիոնով ավելին է, քան մինչգնաժամային 2019 թվականին¹, գործազրկության միջին մակարդակն աշխարհում կազմում է 5.5%:

Թեև գործազրկությունը և թերզբաղվածությունը դեռևս արդյունաբերական զարգացած շատ երկրների հիմնական մտահոգությունն են, այնուհանդերձ, նշված խնդիրները շատ ավելի ծանր հարվածում են զարգացող երկրների տնտեսություններին, և, չնայած այդ հանգամանքին, զարգացող երկրների կառավարությունները հիմնականում նշված մարտահրավերներին համապատասխան զբաղվածության քաղաքականություն մշակելու և իրականացնելու առումով առանձնապես չեն շտապում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բարձր և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համեմատությամբ ՀՀ-ում գործազրկության մակարդակը բավականին մտահոգիչ է, և այդ ցուցանիշը շուրջ 4 անգամ մեծ է միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համապատասխան ցուցանիշից (գծապատկեր 1.1): 2021 թ. ՀՀ-ում գործազրկության մակարդակը կազմել է 15.0%, որը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 3.2%-ով²:

¹ Վերլուծությունը կատարվել է <https://news.un.org/ru/story/2022/01/1417012> կայքէջում բերված վիճակագրական նյութերի հիման վրա:


² https://armstat.am/file/article/sv_12_21a_141.pdf



Գծապատկեր 1.1

Գործազրկության մակարդակը միջինից բարձր և բարձր եկամուտ ունեցող երկրներում և ՀՀ-ում, 2016-2021 թթ.³

2020 թ. բարձր եկամուտ ունեցող երկրներում մեկ շնչի հաշվով արտադրվել է ավելի քան 50000 ԱՄՆ դոլար ՀՆԱ, այն դեպքում, երբ ցածր եկամուտ ունեցող երկրներում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 2056 ԱՄՆ դոլար, որը, զարգացած տնտեսությունների համեմատությամբ, շուրջ 24 անգամ փոքր է (գծապատկեր 1.2):



Գծապատկեր 1.2

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն միջինից բարձր, բարձր եկամուտ ունեցող երկրներում, ԵԱՏՄ-ում և ՀՀ-ում, 2010-2020 թթ.⁴

³ Աղբյուրը՝ <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS?locations=AM>

⁴ Աղբյուրը՝ <https://data.worldbank.org/indicator/>

Պակաս զարգացած թվով 27 երկրներում (բացի աֆրիկյան չորս երկրներից, դրանց կազմում են Աֆղանստանը, Հաիթին, Նեպալը, Տաջիկստանը և Եմենը) մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է 1000 ԱՄՆ դոլարից պակաս: Ինչ վերաբերում է ԵԱՏՄ անդամ պետություններին, ապա դիտարկվող ցուցանիշի միջինը 2021 թ. կազմել է 20603 ԱՄՆ դոլար, Հայաստանում և Ղրղզստանում այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 14630 և 5287 ԱՄՆ դոլար: Ամենաբարձրը Ռուսաստանի ցուցանիշն է՝ 32803 ԱՄՆ դոլար: Ընդ որում, Ռուսաստանում COVID-19-ի ազդեցությունը բացասաբար է անդրադարձել ՀՆԱ իրական աճի, հետևաբար նաև մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի վրա: ՌԴ ՀՆԱ-ն, սկսած 2-րդ եռամսյակից, կրճատվել է 8%-ով⁵: Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն Ռուսաստանում, ընթացիկ գներով, 2-րդ եռամսյակում հասավ 28 662 ԱՄՆ դոլարի⁶ 2019 թ. համեմատ նվազելով շուրջ 1 600 ԱՄՆ դոլարով: Երրորդ եռամսյակում ՀՆԱ-ն նվազել է 3.4%-ով, իսկ նախորդ տարվա 3-րդ եռամսյակի հետ համեմատած 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն, ընթացիկ գներով, գրեթե նույնական էր (183 ԱՄՆ դոլարի տարբերությամբ): Այնուհետև, վարակի դեպքերի նվազումն ուղեկցվեց սահմանափակումների մեղմամբ:


Բելառուսը աշխարհի այն սակավաթիվ երկրներից է, որը COVID-19-ը դիմակայելու նպատակով որևէ սահմանափակում չնույնընդրեց և ԵԱՏՄ միակ երկիրն է, որտեղ 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն 2019-ի համեմատությամբ 2020 թ. աճել է:

Ստեղծված մակրոտնտեսական իրավիճակի ավելի հանգամանակից, պատճառահետևանքային կապերի բացահայտման և աշխատաշուկային առնչվող հիմնախնդիրները պարզաբանելու համատեքստում կարևորվել է ՀՀ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի, գործազրկության ցուցանիշների և տարածքային միավորներում ստեղծված իրավիճակի վերլուծությունը և գնահատումը:

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի կտրվածքով ՀՆԱ-ի կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա 58.4%-ը բաժին է ընկնում Երևան քաղաքին (գծապատկեր 1.3): Ստեղծված իրավիճակը արդարացված է, քանի որ ՀՀ բնակչության 37%-ը կենտրոնացված է մայրաքաղաքում, որը համապատասխանում է արտադրական, գիտատեխնիկական և, ընդհանրապես, բնակչության տնտեսական գործունեության կենտրոնացվածությանը:

⁵ Աղբյուրը՝ https://www.researchgate.net/publication/354149407_Russia_and_the_COVID-19_Pandemic_Economic_and_Social_Consequences

⁶ Աղբյուրը՝ <https://stats.oecd.org/index.aspx?queryid=66948#>



Գծապարկեր 1.3 | ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքը՝ ըստ մարզերի և Երևանի, 2019 թ. դրությամբ⁷

Այսինքն, ՀՀ-ում համախառն արտադրանքի արտադրության տեսանկյունից առկա է ծայրաստիճան բևեռացված իրավիճակ, որն առավել մտահոգիչ է դառնում, երբ դիտարկում ենք ՀՆԱ-ի արտադրության ծավալով առաջին տեղում գտնվող մայրաքաղաք Երևանի և երկրորդ տեղում գտնվող Արարատի մարզի միջև տարբերությունը, որը հասնում է մոտ 750%-ի: ՀՆԱ-ի ամենացածր տեսակարար կշիռն ունի Վայոց ձորի մարզը՝ պայմանավորված և՛ փոքր տարածքով, և՛ ուեսուրսների սակավությամբ: Տավուշի մարզում քննարկվող ցուցանիշը ևս խիստ մտահոգիչ է, քանի որ, զբաղեցնելով բավականին մեծ տարածք, ունենալով գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման բոլոր նախադրյալները, մարզի սոցիալ-տնտեսական վիճակը դեռևս շարունակում է մնալ ոչ բավարար: Հատկանշական է նաև, որ 2017-2019 թթ. ՀՆԱ-ի վերոնշյալ կառուցվածքը գրեթե անփոփոխ է՝ բացառությամբ Երևան քաղաքի, որը, ըստ 2018 թ. տվյալների, կազմել է ընդհանուրի 54.1%-ը (շուրջ 4.3 տոկոսային կետով փոփոխություն):

Ըստ Երևան քաղաքի և մարզերի՝ զբաղվածների, մշտական բնակչության և ՀՆԱ-ի տեսակարար կշիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մայրաքաղաքը բոլոր երեք դիրքերով առաջատար է (աղյուսակ 1.1): Ընդհանուր զբաղվածների 29%-ը բաժին է ընկնում Երևան քաղաքին, Արարատի և Արմավիրի մարզերում տեղաբաշխված է բնակչության մոտ 9%-ը, սակայն զբաղվածության ցուցանիշով Արմավիրի մասնաբաժինը ընդհանուրի մեջ 2%-ով ավելի է Արարատի մարզում զբանցված ցուցանիշից: Ի հակադրություն նշվածի՝ Արմավիրում արտադրվում է ՀՆԱ-ի մոտ 5.9%-ը, իսկ Արարատում՝ մեկ տոկոսային կետով ավելի: Հետաքրքրական է նաև, որ միայն Երևանում և Սյունիքում է մշտական բնակչության տեսակարար կշռի ցուցանիշը փոքր ՀՆԱ-ի տեսակարար կշռի ցուցանիշից, մնացյալ մարզերում պատկերը հակառակն է:

⁷ Աղբյուրը՝ https://www.armstat.am/file/article/marzer_2021_10.pdf


Աղյուսակ 1.1

Զբաղվածների, մշտական բնակչության 2020 թ. և ՀՀ ՀՆԱ-ի տեսակարար կշիռները՝ ըստ Երևանի և մարզերի, 2019 թ.⁸

	Զբաղվածների տեսակարար կշիռը	Մշտական բնակչության տեսակարար կշիռը	ՀՀ ՀՆԱ տեսակարար կշիռը
Երևան	29%	37%	58.4%
Արագածոտն	5%	4%	2.5%
Արարատ	10%	9%	6.9%
Արմավիր	12%	9%	5.9%
Գեղարքունիք	7%	8%	3.6%
Լոռի	9%	7%	3.5%
Կոտայք	10%	8%	6.3%
Շիրակ	8%	8%	4.1%
Սյունիք	6%	5%	5.7%
Վայոց ձոր	2%	2%	1.1%
Տավուշ	4%	4%	2.0%

Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի մակարդակի ամենաբարձր ցուցանիշը ևս տեղ է գտել մայրաքաղաքում՝ 3.527 հազար ՀՀ դրամ, որը շուրջ 3.4 անգամ գերազանցում է Գեղարքունիքի մարզի համանման ցուցանիշը (գծապատկեր 1.4): Երկրորդ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Սյունիքում՝ 2,695 հազար ՀՀ դրամ: Երևանի և մյուս մարզերի բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշների միջև խզվածքն էական է: Ըստ ՀՀ 2016-2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարությամբ սահմանված չափորոշչի՝ 2025 թ. դրությամբ, առանձին վերցված յուրաքանչյուր մարզում, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60%-ը: Սակայն, 2016-2019 թթ. ՀՀ մարզերի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և հանրապետության մակարդակով մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի հարաբերակցության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս Հայաստանի մարզերի 36.3%-ը, այդ թվում՝ Տավուշը, Շիրակը, Լոռին, Գեղարքունիքը սահմանված չափանիշից հետ են մնում:

⁸ Աղբյուրը՝ https://www.armstat.am/file/article/demog_2021_2_.pdf, https://www.armstat.am/file/article/lab-market_2021_4.2.pdf, https://www.armstat.am/file/article/marzer_2021_10.pdf





Գծապատկեր 1.4










ՀՀ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի⁹

Փոքրագույն քառակուսիների մեթոդով կատարվել է նաև գծային կախվածությամբ կանխատեսում, որից հետևում է, որ վերոբերյալ չափորոշիչը պահպանած մարզերը, կանխատեսվող ժամանակահատվածում, կպահպանեն 60%-ի շերտ, իսկ Գեղարքունիքը և Լոռին, մեծ հավանականությամբ, չեն կարողանա հասնել նպատակադրմանը (գծապատկեր 1.5):

Մարզերի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող կարևոր ցուցանիշներից է նաև մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ-ի մեծությունը: Մեկ զբաղվածի հաշվով ՀՆԱ-ն ներկայացնում է աշխատանքի արտադրողականությունը՝ մեկ միավոր աշխատանքի ներդրման դիմաց ստացված արտադրանքը:




⁹ Աղբյուրը՝ https://www.armstat.am/file/article/marzer_2021_10.pdf



Գծապարկեր 1.5 | ՀՀ մարզային՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և հանրապետական՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի հարաբերակցությունը, 2016-2019 թթ.¹⁰

¹⁰ Հաշվարկները կատարել են հեղինակները, տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2018-2021 թթ.:

Փաստենք, որ դիտարկվող ցուցանիշը 2021 թ. հաշվարկվել է 52 երկրների համար, ըստ որի՝ ՀՀ-ում մեկ զբաղվածի հաշվով իրական ՀՆԱ-ի տարեկան աճի տեմպը կազմել է 4.5%, որը 52 երկրների մեջ 25-րդն է¹¹: ԵԱՏՄ անդամ Ռուսաստանը նշված ցուցանիշի գծով 2020 թ. գրանցել է բացասական միտում՝ -1.1%, սակայն 2021 թ. ապահովել է կտրուկ՝ 5.1% աճ՝ առաջ անցնելով Հայաստանից: ԵԱՏՄ անդամ մնացյալ բոլոր պետությունները, ինչպես նաև Ադրբեյջանը և Վրաստանը Հայաստանի գրանցած արդյունքից հետ են մնում:



Գծապարկեր 1.6


Համախառն ներքին արդյունքը մեկ զբաղվածի հաշվով՝ ՀՀ միջին ցուցանիշի նկատմամբ, 2017-2019 թթ., %¹²

ՀՀ մարզերի կտրվածքով, ըստ մեկ զբաղվածի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշի ուսումնասիրության, 2019 թ. Երևան քաղաքի մակարդակով մեկ զբաղվածի հաշվով ՀՆԱ-ի արտադրությունը ՀՀ միջին ցուցանիշը գերազանցում է մոտ 1.84 անգամ, իսկ Սյունիքի մարզը 1.07 անգամ կամ 107.6%-ով (գծապատկեր 1.6): Հատկանշական է նաև, որ 2019 թ., 2017-ի համեմատությամբ, մեկ զբաղվածի հաշվով ՀՆԱ-ի ամենաբարձր ցուցանիշն արձանագրած երկու մարզում առկա է անկման միտում, որը կարող է դրական դիտվել տարածքային համաչափության համատեքստում: Դիտարկվող ժամանակաշրջանում ամենաբարձր աճի միտում գրանցվել է Տավուշում՝ 9%, Արարատում՝ 5.9% և Գեղարքունիքում՝ 2.8%: Անկախացումից ի վեր մեր երկրի մշտական բնակչության թիվը կայուն նվազում է, որը, մասնավորապես, սուր է արտահայտվում աշխատանքային տարիքի բնակչության շրջանում: Բնակ-

¹¹ <https://w3.unece.org/SDG/en/Indicator?id=118>

¹² Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021:

չության նշված հատվածի նվազումը և, դրան զուգահեռ, աշխատանքային տարիքից բարձր տարիք ունեցող բնակչության տեսակարար կշռի ավելացումը թե՛ ներկայում և թե՛ ապագայում ձևավորում են տնտեսական զարգացման առումով յուրջ մարտահրավերներ:




Գծապարկեր 1.7 | Բնակչության խտությունը Երևան քաղաքում և մարզերում

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի աշխատաշուկայի ընթացիկ իրավիճակի գնահատման տեսանկյունից չափազանց կարևոր է բնակչության խտության ցուցանիշի ուսումնասիրությունը: Բնակչության խտությունն, ամենից առաջ, հնարավորություն է տալիս գնահատելու բնակչության կողմից այս կամ այն տարածքում հաստատվելու նախընտրելիությունը: Բնակչության խտությունից է կախած նաև աշխատանքային ռեսուրսների տեղաբաշխվածությունը, տարածքի սոցիալ-տնտեսական զարգացածությունը, մշակութային, կրթական, գիտատեխնիկական առաջխաղացումը: Այսպես, 2021 թ. սկզբի դրությամբ ՀՀ բնակչության խտության ցուցանիշը, աշխարհի երկրների համեմատությամբ, 113-րդ տեղում է՝ 1 քառ. կմ վրա 100 մարդ արդյունքով (գծապատկեր 1.7): Մայրաքաղաքն ամենախիտ բնակեցված տարածքն է՝ 4896 մարդ 1 քառ. կմ հաշվով: Մյուս մարզերից համեմատաբար բարձր, սակայն մայրաքաղաք Երևանին զգալիորեն զիջող տարածքային միավորներ են Արարատը, Արմավիրը և Կոտայքը, այսինքն՝ Երևանին ամենամոտ գտնող մարզերը: Ամենանտար բնակեցած մարզերն են Վայոց ձորը՝ 21 և Մյունիքի

մարզը՝ 30 մարդ 1 քառ. կմ հաշվով: Այսպիսով, ՀՀ-ում բնակեցվածության ամենաբարձր և ամենացածր մակարդակների հարաբերակցությունը շուրջ 233 է: Մարդկային կապիտալի, աշխատանքային ներուժի ոչ բավարար մակարդակը, ինքնին, չի կարող չանդրադառնալ սոցիալ-տնտեսական մյուս ցուցանիշների և առհասարակ տարածքների զարգացվածության վրա:

2020 թ. Հայաստանում աշխատուժի մասնակցության մակարդակը կազմել է 58.5%: Այս ցուցանիշի հիմքում էական տարբերություններ են դիտարկվում տղամարդկանց (69.3%) և կանանց (49.4%), ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև (գծապատկեր 1.8): Զբաղվածության մակարդակը գյուղական համայնքներում առավել դրական միտում ունի՝ համեմատած քաղաքների հետ, հետևաբար, նաև գործազրկության մակարդակը Հայաստանի քաղաքներում բարձր է: Աշխատանքային ռեսուրսների բաշխվածության տեսանկյունից կա էական բևեռացվածություն, և աշխատանքային ռեսուրսների շուրջ 30%-ը բաժին է ընկնում մայրաքաղաքին: Չնայած աշխատանքային ռեսուրսների նման բևեռացվածությանը՝ գործազուրկների շուրջ 41% մասնաբաժնով առաջատարը նույնպես մայրաքաղաք Երևանն է: Այս միտումը պահպանվում է նաև մյուս բոլոր մարզերի պարագայում, այսինքն՝ աշխատանքային ռեսուրսների մեծ տեսակարար կշիռ ունեցող մարզերն առանձնանում են նաև գործազրկության մեծ մասնաբաժնով: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Հայաստանում աշխատանքային ռեսուրսների գրեթե 70%-ը տեղաբաշխված է ՀՀ տարածքային միավորների 36%-ում:



Գծապատկեր 1.8

Աշխատանքային ռեսուրսների, զբաղվածների և գործազուրկների թիվը Երևան քաղաքում և մարզերում, 2020 թ.¹³

¹³ Աղբյուրը՝ <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>

2018-2020 թթ. ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի աշխատանքային ռեսուրսների, ինչպես նաև կենսաթոշակատուների թվաքանակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2018-2019 թթ. ընթացքում Երևանում աշխատանքային ռեսուրսների թվաքանակը շուրջ 89.7 հազարով ավելացել է, սակայն, ի հակադրություն դրա, բնակչության բնական աճի տեմպը նույն ժամանակահատվածում կազմել է ընդամենը 2.5% կամ 2019 թ., 2018-ի համեմատությամբ, բնական աճը կազմել է ընդամենը 140 մարդ (աղյուսակ 1.2):

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ մայրաքաղաքում աշխատանքային ռեսուրսների աճին նպաստել է ոչ այնքան բնակչության թվաքանակի աճը, որքան այլ գործոններ, օրինակ՝ ներգաղթն ինչպես այլ երկրներից, այնպես էլ երկրի այլ մարզերից:

Զուգահեռ ավելացել է նաև կենսաթոշակային տարիքի բնակչության թվաքանակը՝ 2018 թ. 171.4 հազարից 2020-ին հասնելով 173.4 հազարի: Ըստ 2020 թ. վիճակագրական տվյալների՝ աշխատանքային ռեսուրսների աճ է նկատվում Տավուշի, Վայոց ձորի, Լոռու, Արարատի և Արագածոտնի մարզերում, ընդ որում՝ վերոնշյալ մարզերում կենսաթոշակատուների թվաքանակի փոփոխություն գրեթե չկա:

Աշխատանքային ռեսուրսների և կենսաթոշակատուների թվաքանակը 2018-2020 թթ.¹⁴

Աղյուսակ 1.2

	Աշխատանքային ռեսուրսներ			Թոշակատուների թվաքանակը		
	2018	2019	2020	2018	2019	2020
Երևան	↓ 615.9	↑ 705.6	→ 659.3	↓ 171.4	↑ 173.5	↑ 173.4
Արագածոտն	↓ 43.1	↑ 76.1	↑ 87.7	↓ 18.6	→ 18.7	↑ 18.8
Արարատ	↑ 227.6	↓ 213.6	↑ 229.1	↑ 35.8	↑ 36.1	↑ 36.3
Արմավիր	↑ 231	↓ 183.3	↓ 182.8	↑ 33.5	↑ 34	↑ 34.3
Գեղարքունիք	↑ 198.2	↓ 170.7	↓ 170.2	↑ 31.3	↑ 31.3	↓ 31.1
Լոռի	↓ 202.4	→ 208.7	↑ 213.3	↑ 43.5	→ 43.3	↓ 43.1
Վոտայք	↑ 235.1	↓ 219.5	↓ 216	↓ 36.9	→ 37.7	↑ 38.1
Շիրակ	↑ 227.9	↓ 196.5	↓ 197.5	↑ 39.5	↑ 39.5	↓ 39.2
Սյունիք	↑ 103.2	↓ 96.5	↓ 94.4	↓ 22.7	↓ 22.7	↑ 22.8
Վայոց Ձոր	↓ 22.3	→ 31.6	↑ 37.1	↑ 9.2	↑ 9.2	↑ 9.2
Տավուշ	↓ 89.6	→ 99	↑ 112.6	↑ 20.7	↓ 20.6	↓ 20.6

Երևան քաղաքում և մարզերում զբաղվածության և գործազրկության մակարդակների վերլուծությունը ցույց է տալիս, որ զբաղվածության ցուցանիշով առաջատարը Արմավիրի մարզն է՝ 68.3%, որին հաջորդում են Սյունիքի մարզը՝ 61.9% և Արագածոտնի մարզը՝ 56.6% (աղյուսակ 1.3):

¹⁴ Աղբյուրը՝ <https://armstat.am/am/?nid=130>

Ջրաղվածության և գործազրկության մակարդակները՝ ըստ ՀՀ մարզերի և մայրաքաղաք Երևանի, 2018-2020 թթ.¹⁵

	Ջրաղվածության մակարդակ			Գործազրկության մակարդակ		
	2018	2019	2020	2018	2019	2020
Երևան	43.5	48.3	46.7	27.1	22.7	23.6
Արագածոտն	57.6	56.9	56.6	7.5	8.8	10.0
Արարատ	55.7	52.2	46.0	9.6	13.4	12.6
Արմավիր	65.5	70.2	68.3	12.0	11.6	12.6
Գեղարքունիք	42.3	40.3	42.1	11.3	8.6	9.7
Լոռի	41.3	38.5	42.6	15.2	19.9	20.5
Կոտայք	44.1	46	47.6	24.7	20.7	20.1
Ճիբակ	44.5	45.5	41.2	18.8	18	17.3
Մյունիք	60.7	58.8	61.9	13.1	15	13.1
Վայոց ձոր	45.4	45.2	44.3	21.0	22.4	20.4
Տավուշ	36.0	42.5	38.4	31.0	26.9	23.6

Ջրաղվածության և գործազրկության տեսանկյունից, Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում շարունակում է խնդիր մնալ դրանց անհավասարաչափ բաշխումը: Գործազրկության մակարդակը շարունակում է ամենաբարձրը մնալ Երևանում, որը 2020 թ. կազմել է 23,6%, նույնը գրանցվել է նաև Տավուշի մարզում: Գործազրկության ամենացածր մակարդակը տեղ է գտել Գեղարքունիքի մարզում, թեև զբաղվածության մակարդակը մարզում նույնպես 2-րդ ամենացածրն է Տավուշից հետո: 2019 թ. մեկ զբաղվածի հաշվով ՀՀ համախառն ներքին արդյունքի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է մայրաքաղաքում՝ 184.4%, թեև զբաղվածության մակարդակը Երևանում, համեմատած առաջատար հանդիսացող Արմավիրի հետ, ցածր է 21.6%-ով: Ուշագրավ է նաև Արմավիրի մարզի զբաղվածության մակարդակի և մեկ զբաղվածի հաշվով ՀՀ ՀՆԱ-ի միջին ցուցանիշի համեմատությունը: Վերոնշյալ երկու ցուցանիշների համեմատությունից պարզվում է, որ թեև Արմավիրը զբաղվածության մակարդակով ամենաբարձր ցուցանիշ գրանցած մարզն է՝ շուրջ 68.3%, այնուհանդերձ, մեկ զբաղվածի հաշվով ՀՀ ՀՆԱ-ի միջին ցուցանիշով (49.2%) առավել է միայն Լոռու մարզից (47%): Կարող ենք եզրակացնել, որ Արմավիրի մարզում կա աշխատանքի արտադրողականության հետ կապված որոշակի խնդիր: Ինչ վերաբերում է գործազրկության մակարդակին, ապա մարզերի շուրջ 45%-ում (Երևան, Լոռի, Կոտայք, Վայոց ձոր, Տավուշ) գործազրկության մակարդակը հանրապետական միջինից բարձր է:

ՀՀ աշխատաշուկայի առանձնահատկություններից է նաև տղամարդկանց համեմատությամբ կանանց ցածր զբաղվածության մակարդակը:

¹⁵ Աղբյուրը՝ <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>

2020 թ. 1052 հազար զբաղվածներից 566 հազարը կամ 53.8%-ը եղել են տղամարդիկ (աղյուսակ 1.4): Մարզային կտրվածքով կանանց զբաղվածության շրջանում ամենաբարձր աճը, դիտարկվող ժամանակահատվածում, գրանցվել է Արագածոտնի մարզում՝ կին զբաղվածների աճը միջինում կազմել է շուրջ 53%: Կանանց զբաղվածության միջին աճի բարձր ցուցանիշ է գրանցվել նաև Վայոց ձորում և Տավուշում՝ համապատասխանաբար 36.0 և 24.0%: Երևանում նույնպես 2020 թ., 2018-ի համեմատությամբ, կին զբաղվածների թիվն ավելացել է 27,3 հազարով: Ցուցանիշը բացասական միտում ունի Արմավիրում և Արարատում՝ միջինում համապատասխանաբար 8.0 և 7.0%, Շիրակում և Մյունիքում՝ 3.0%: Տղամարդկանց զբաղվածության ամենաբարձր ցուցանիշը դարձյալ գրանցվել է Արագածոտնի մարզում, տարեկան միջինը 38.0% ցուցանիշով, այնուհետև Վայոց ձորի և Տավուշի մարզերում՝ համապատասխանաբար 25.0 և 11.0%, ինչպես նաև Երևանում և Լոռիում՝ 7.0 և 1.0% աճի ցուցանիշով: Մնացած մարզերում ցուցանիշն ունի բացասական միտում. Շիրակում՝ 16.0%, Գեղարքունիքում՝ 11.0%, Կոտայքում՝ 6.0% և այլն:


Զբաղվածների շարժընթացը՝ ըստ սեռի, Երևանում և մարզերում, 2018-2020 թթ.¹⁶ | Աղյուսակ 1.4

	Զբաղվածներ՝ ըստ սեռի հազ. մարդ					
	2018		2019		2020	
	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ
Երևան	30.6	37.4	63.9	77.2	57.9	49.7
Արագածոտն	9.5	5.4	7.6	25.7	2.3	28.3
Արարատ	53.6	73.2	46.5	65.	45.8	59.7
Արմավիր	65.2	86	63.2	65.5	54.9	69.9
Գեղարքունիք	29.6	54.2	25	43.7	28.9	42.9
Լոռի	34.	49.4	30.7	49.6	40.7	50.2
Կոտայք	38.9	64.9	40.8	60.2	45.5	57.2
Շիրակ	42.8	58.7	38.5	5	39.7	4.7
Մյունիք	25.9	36.8	22.7	34	24.	34.3
Վայոց ձոր	4	6.1	5	9.2	7.3	9.1
Տավուշ	3.4	8.9	7.7	24.4	20.4	22.9

Աշխատաշուկայի ուսումնասիրության կարևոր հատվածներից է աշխատավարձի վերաբերյալ բնութագրերի ներկայացումը: Ըստ 2022 թ. ընթացիկ տվյալների՝ սեպտեմբեր ամսին միջին ամսական աշխատավարձը կազմել է 236.743 ՀՀ դրամ, և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճը կազմել է 100.0%¹⁷: 2022 թ. առաջին եռամսյակում, 2021 թ. նույն ժամանակաշրջանի համեմատ, բոլոր մազերում աշխատավարձի մակարդակներն աճել են (գծապատկեր 1.9): Աճի տեմպը հատկապես նշանակալի է եղել

¹⁶ Աղբյուրը՝ <https://www.armstat.am/am/?nid=544>
¹⁷ Աղբյուրը՝ <https://armstat.am/am/?nid=12&id=08001>

մայրաքաղաքում՝ 10.8%, Արարատում՝ 8.7%, Տավուշում և Կոտայքում համապատասխանաբար՝ 7.2 և 6.7%: Միջին ամսական աշխատավարձի ամենաբարձր մակարդակը գրանցվել է Սյունիքի մարզում՝ 271.711 ՀՀ դրամ, իսկ ամենացածրը՝ Շիրակի մարզում՝ 120.881 ՀՀ դրամ. շուրջ 2.3 անգամ պակաս:



Գծապատկեր 1.9

Միջին ամսական անվանական աշխատավարձը՝ ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2022 թ., I եռամսյակ, %¹⁸

Բնակչության բարեկեցության աճը և աղքատության հաղթահարումը երկրի մարդկային կապիտալի զարգացման գլխավոր գրավականներից են: ՀՀ-ում աղքատության կրճատումը նախաճգնաժամային ժամանակահատվածում մեծապես պայմանավորված էր տնտեսական անշեղ աճով: Ճգնաժամով պայմանավորված տնտեսական անկման հետևանքով 2009 թ. գրանցվեց հակառակ՝ աղքատության մակարդակի աճի միտումը: Հայաստանում աղքատությունը և ծայրահեղ աղքատությունը թե՛ նախաճգնաժամային ժամանակահատվածում և թե՛ դրանից հետո, որպես կանոն, առավել տարածված է փոքր ու միջին քաղաքային բնակավայրերում: 2020 թ. աղքատության մակարդակը, 2019-ի համեմատությամբ, ավելացել է 0.6 տոկոսային կետով և կազմել շուրջ 27% (աղյուսակ 1.5): Սակայն, ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1.5-ում բերված տվյալները և նախորդ վերլուծությունները, մյուս տարածքային միավորներում աղքատության խնդիրը է՛լ ավելի մտահոգիչ է: Աղքատության մակարդակը Գեղարքունիքում և Շիրակում հասնում է համա-

¹⁸ Աղբյուրը՝ https://www.armstat.am/file/article/sv_04_22a_142.pdf

պատասխանաբար 48.1 և 42.9%-ի, այսինքն՝ Գեղարքունիքում աղքատությունը հանրապետական միջինից ավելի է շուրջ 21.1 տոկոսային կետով: Աղքատության մակարդակը համեմատելով աշխատավարձի հետ՝ նաև կարելի է փաստել, որ Շիրակի մարզում 2020 թ. բնակչությունն ստացել է ամենացածր միջին ամսական աշխատավարձը, որը կազմել է 117.888 ՀՀ դրամ, իսկ Գեղարքունիքը 3-րդ ամենացածրն է, որից հետո Արագածոտն է: Մյունիքի մարզում պատկերը միանգամայն այլ է, այստեղ աղքատության մակարդակը շուրջ 6.0% է, այն 21 տոկոսային կետով հանրապետական միջինից ցածր է, բարձր է նաև աշխատավարձի մակարդակը՝ 269.784 ՀՀ դրամ:

Աշխատավարձի մեծությունը և աղքատության մակարդակը Երևան քաղաքում և մարզերում, 2018-2020 թթ.¹⁹

Աղյուսակ 1.5

	Աշխատավարձի մեծությունը, ՀՀ դրամ			Աղքատության մակարդակը, %		
	2018	2019	2020	2018	2019	2020
Երևան	194,754	201,527	208,044	19.9	14.1	19.9
Արագածոտն	105,562	113,538	119,464	16.2	51.4	32.9
Արարատ	124,623	168,027	175,721	19.8	29.4	32.8
Արմավիր	128,292	135,081	138,167	23.5	22.5	32.2
Գեղարքունիք	109,133	114,479	121,940	22.4	43.5	48.1
Լոռի	114,123	124,293	129,807	29.4	30.1	19.
Կոտայք	132,557	137,388	146,076	22.7	31.9	17.4
Շիրակ	107,111	110,876	117,888	42.2	48.4	42.9
Մյունիք	234,601	266,832	269,784	16.7	12.1	6.1
Վայոց ձոր	118,280	126,740	134,099	18.6	19.3	21.9
Տավուշ	115,336	118,446	122,894	25.6	25.6	37.5

Համեմատելով նաև աղքատության և զբաղվածության ցուցանիշները՝ կարելի է արձանագրել, որ առանձին մարզերում դրսևորվում են զբաղվածության և աղքատության մակարդակների ակնհայտ հակադարձ կախվածություններ: Հարկ է նշել, որ դիտարկվող ժամանակաշրջանում ՀՀ միայն 3 մարզերում է գրանցվել աղքատության մակարդակի նվազում (Մյունիք, Կոտայք, Լոռի), մյուսներում պատկերը դրական է:

Անփոփոխելով կարող ենք փաստել, որ Հայաստանի տարածքային միավորների աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները պայմանավորել են տարածքային միավորների զարգացման անհամաչափությունները: Տնտեսական զարգացումը հիմնականում կենտրոնացել է Երևանում, հետո նաև Մյունիքում, մասամբ՝ Կոտայքում: Մասնավորապես, ՀՆԱ-ների գնահատականների վերլու-

¹⁹ Աղբյուրը՝ <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>

ծությունը վկայում է, որ տնտեսական զարգացումը կենտրոնացած է հիմնականում Երևանում ու Սյունիքի մարզում: Մեկ շնչի հաշվով մարզային ՀՆԱ-ի ցուցանիշի հարաբերակցությունը միջին հանրապետական նույն ցուցանիշի նկատմամբ այստեղ ամենաբարձրն է: 2019 թ. Երևանում այն կազմել է միջին հանրապետական շնչային ՀՆԱ-ի շուրջ 184.4%-ը, իսկ Սյունիքում՝ 107.6%-ը: Ըստ աշխատաշուկայի ցուցանիշների վերլուծության՝ զբաղվածության ամենաբարձր մակարդակն ունեն Արմավիրի և Սյունքի մարզերը, իսկ ամենացածրը՝ Շիրակի, Գեղարքունիքի մարզերը: Ցուցանիշը մտահոգիչ է նաև մայրաքաղաքում, քանի որ, ունենալով բնակչության, աշխատանքային ռեսուրսների, մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի, միջին ամսական աշխատավարձի բավականին դրական միտումներ, մայրաքաղաքում շարունակում է արդիական մնալ բնակչության գործազրկության խնդիրը:


1.2

ՀՀ աշխատանքի շուկայի ցուցանիշների վիճակագրական վերլուծությունը և մակրոտնտեսական ցուցանիշների միջև կապի մոդելավորումը: Աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշների սեզոնայնության վերլուծությունը

Սեզոնայնության ալիքի քանակական գնահատականն ունենալու համար հաշվարկվել են զբաղվածների, գործազուրկների թվի և անվանական աշխատավարձի սեզոնայնության համաթվերն ըստ ամիսների՝ 2012-2021 թթ. համապատասխան ժամանակային շարքերի²⁰ հիման վրա: Սեզոնայնության համաթիվը հաշվարկվում է տարբեր տարիներին տվյալ սեզոնին զբանցված արժեքների ագրեգացման հիման վրա: Հարաբերական ցուցանիշը՝ համաթիվը ստանալու համար, այդ ագրեգացված արժեքը բաժանվում է բոլոր սեզոնների համար ընդհանուր միտումն արտահայտող ագրեգացված արժեքի վրա:

ՀՀ-ում զբաղվածության սեզոնային անկումը հունվար ամսին է, մինչև օգոստոս ամիսը համեմատաբար կայուն է, սեզոնայնություն չկա, իսկ սեպտեմբերից սկսած՝ զբաղվածության սեզոնայնության պիկերն են (գծապատկեր 1.10):


²⁰ <https://www.ceicdata.com/en/armenia> , <https://tradingeconomics.com/armenia/>



Գծապատկեր 1.10

Զբաղվածության սեզոնայնության համաթիվը


ՀՀ-ում գործազրկության սեզոնային պիկը ապրիլ ամսին է, իսկ մյուս ամիսներին գործազրկյալների սեզոնային պիկը կայուն է (գծապատկեր 1.11):



Գծապատկեր 1.11

Գործազրկության սեզոնայնության համաթիվը

ՀՀ-ում աշխատավարձի սեզոնային պիկերը հուլիս և դեկտեմբեր ամիսներին են, իսկ մյուս ամիսներին սեզոնային պիկը կայուն է, թեև զբաղվածության սեզոնային պիկը սեպտեմբերից է սկսվում, գործազրկության սեզոնայնությունն էլ կայուն է (գծապատկեր 1.12):



Գծապատկեր 1.12 | Անվանական աշխատավարձի սեզոնայնության համաթիվը

Այսպիսով, ՀՀ-ում աշխատավարձ-զբաղվածություն-գործազրկություն առանձգականությունն արտահայտվում է միայն դեկտեմբեր ամսին, այսինքն, ընդհանուր առմամբ, ամենաազդեցիկ գործոնը չէ:

Գործազրկություն-ՀՆԱ մոդելավորումը²¹

ՀՆԱ-ի և գործազրկության կապի մոդելավորման համար կիրառվել է ARIMAX մոդելը, ինչը նշանակում է ավտոռեգրեսիոն, ինտեգրված, սահող միջինով և էկզոգեն փոփոխականներով մոդել: Մոդելի ընտրության համար հիմք է հանդիսացել ԱՄՀ խորհրդատվական մոդելը²²: ԱՄՀ-ն առաջարկում է երկրներին աշխատուժի ցուցանիշների և ՀՆԱ-ի կապի մոդելավորման հետևյալ մոտեցումը՝

$$U_t = e_1 + e_2 \times GDP_t + e_3 \times control_variables_t + \epsilon_t \quad (1)$$

որտեղ՝

U_t -ն t-րդ ժամանակաշրջանում գործազրկությունն արտահայտող ցուցանիշն է,

GDP_t -ն՝ իրական ՀՆԱ-ն t-րդ ժամանակաշրջանում,

$control_variables_t$ -ը՝ փոփոխականների խումբ, որոնք ևս ազդում են գործազրկության վրա՝ ելնելով տնտեսության յուրահատկություններից կամ մոդելավորման առանձնահատկություններից: Այդպիսի փոփոխականներ կարող են լինել ժամանակային շարքի բա-

²¹ Տե՛ս Թադևոսյան Զ. և ուրիշներ, Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վերլուծություն և զբաղվածության պետական կարգավորման ծրագրային լուծումներ, Եր., Տստեսագետ, 2021, 246 էջ («Ամբերդ» մատենաշար 40), <https://amberd.asue.am/wp-content/uploads/2021/06/Amberd-40.pdf>

²² Աղբյուրը՝ <https://www.imf.org/external/pubs/ft/tnm/2012/tnm1201.pdf>

ղաղրիչները՝ միտումներ, սեզոնայնություն, ցիկլայնություն, կեղծ փոփոխականներ և այլն: Ստացվում է, որ այդ գումարելին ցույց է տալիս մնացած բոլոր ազդող փոփոխականների գումարային էֆեկտը:

Նման ձևով գործազուրկների և ՀՆԱ-ի մոդելավորման արդյունքները հետևյալն են.

$$\widehat{U}_t = 316,9 - 0,05520 \times \widehat{GDP}_t + 0,3489 \times \widehat{U}_{t-1} \quad (2)$$

Մոդելի կախյալ փոփոխականը գործազուրկների թիվն է (հազար մարդ): Մոդելի ռեգրեսորներն են իրական ՀՆԱ-ն (մլն ՀՀ դրամ) և գործազուրկների թվի լագ 1-ինը: Էլաստիկության գործակիցը կազմում է -0,26:

Ստացված արդյունքը վկայում է, որ Հայաստանում 1%-ով ՀՆԱ-ի աճը ենթադրում է 0.26%-ով գործազուրկների կրճատում: Տվյալ մոդելը թույլ է տալիս կատարել նաև գործազրկության կանխատեսում: Այսպես, ՀՀ-ն 2022 թ. վերջին նախատեսում է գրանցել 7% տնտեսական աճ, հետևաբար, 2022-ին միայն տնտեսական աճի հաշվին գործազուրկների թիվը 1.8%-ով կնվազի²³: Գործազուրկների թիվը 2021 թ. դեկտեմբերին եղել է 58 հազ., որի 1.8%-ը կազմում է 1070 մարդ:

Օգտվելով էմպիրիկ տեսակարար կշիռների և ՀՆԱ-ի հավաքական/կուտակային ըստ մարզերի լինելու գաղափարներից՝ կարող ենք հաշվարկել վերը գնահատված մոդելով տնտեսական աճ-գործազրկության կրճատում չափը (աղյուսակ 1.6):

Գործազրկության կրճատումը՝ ըստ մարզերի | Աղյուսակ 1.6

Մարզեր	Տարեկան աճ (պլան)	Գործազրկության կրճատում (կանխատեսում)
Երևան	4.09%	625
Արագածոտն	0.18%	27
Արարատ	0.48%	74
Արմավիր	0.41%	63
Գեղարքունիք	0.25%	39
Լոռի	0.25%	37
Կոտայք	0.44%	67
Շիրակ	0.29%	44
Սյունիք	0.40%	61
Վայոց ձոր	0.08%	12
Տավուշ	0.14%	21
Ընդամանը	7%	1070

²³ <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS?locations=AM>

Աղյուսակից երևում է, որ տնտեսական աճի նշանակալից մասը բաժին է ընկնում Երևանին, հետևաբար գործազուրկների թվաքանակի ավելի մեծ կրճատումը կդիտարկվի Երևանում, իսկ ամենաքիչը՝ Վայոց ձորի մարզում:

Զբաղվածություն-ժողովրդագրական համաթիվ²⁴

Զբաղվածության շարժընթացը պայմանավորող առանցքային գործոններից են ժողովրդագրական գործընթացները: Զբաղվածության մակարդակի վրա ժողովրդագրական գործոնների ազդեցության գնահատման նպատակն է պարզել, թե յուրաքանչյուր խմբի ժողովրդագրական ցուցանիշ ինչքանով և ինչպե՞ս է ազդում զբաղվածության վրա: Մոդելավորելով գործոնների ազդեցությունը՝ հնարավոր է կատարել սցենարային վերլուծություն և կանխատեսումներ, այն է՝ ժողովրդագրական ցուցանիշի միավոր փոփոխությունն ինչքանով կնպաստի զբաղվածության աճին կամ նվազմանը, որ գործոնի նկատմամբ է զգայուն ՀՀ զբաղվածությունը, որ գործոնները թիրախավորվեն, որպեսզի կիրառվող քաղաքականությունը լինի արդյունավետ: Զբաղվածության վրա ազդում են բնակչության թվաքանակը, սեռատարիքային կազմը, գյուղական-քաղաքային բնակչության հարաբերակցությունը, միգրացիան: Այս գործոնները մեկ մոդելով հնարավոր չէ դիտարկել (գործոնների խիստ կոռելացվածություն): Այդ խնդիրը լուծելու համար օգտագործվել է գլխավոր կոմպոնենտների եղանակը: Նախ, ընտրվել են նշված գործոնների քանակական բնութագրման ցուցանիշները, մասնավորապես՝ սեռային կազմ՝ կին/տղամարդ հարաբերակցություն, գյուղ/քաղաք հարաբերակցություն, տարիքային կազմ՝ ծանրաբեռնվածության գործակից²⁵, միգրացիայի հավելաճի տեմպ, բնակչության թիվ: Գործոնների առանձնահատկությունից ելնելով (բնակչության վիճակագրություն)՝ օգտագործվել են տարեկան ժամանակային շարքերը, որոնք ներառում են 1999-2021 թվականները²⁶: Կիրառելով գլխավոր բաղադրիչների, կոմպոնենտների եղանակը՝ կառուցվել է ժողովրդագրական համաթիվ, որը կրում է բոլոր գործոնների ազդեցությունը՝ համապատասխան կշիռներով (աղյուսակ 1.7)՝

$$(1) = \frac{\sum_{j,k=1}^5 \lambda_j \times P_k}{\sum_{j=1}^5 \lambda_j}, \tag{1}$$

որտեղ՝

- P_k - ն գլխավոր բաղադրիչներ են,
- λ_j ը՝ գործոնների մատրիցի սեփական արժեքները:

²⁴ Տե՛ս Թադևոսյան Զ. և ուրիշներ, Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վերլուծություն և զբաղվածության պետական կարգավորման ծրագրային լուծումներ, Եր., Տնտեսագետ, 2021, 246 էջ («Ամբերդ» մատենաշար 40), <https://amberd.asue.am/wp-content/uploads/2021/06/Amberd-40.pdf>

²⁵ <https://www.investopedia.com/terms/d/dependencyratio.asp>

²⁶ <https://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL.FE.ZS?locations=AM>

Համաթիվն իրենից ներկայացնում է գլխավոր բաղադրիչները՝ կշռած համապատասխան սեփական արժեքներով²⁷: Աղյուսակ 1.7-ում ներկայացված են կառուցված համաթիվում ընտրված գործոնների տեսակարար կշիռները:

ժողովրդագրական համաթվի կառուցվածքը²⁸

Աղյուսակ 1.7

Գործոն	Կշիռ	Գումարային (կոմունյարիս) կշիռ
Բնակչության թվաքանակ	24.29%	24.29%
Կին/տղամարդ	4.16%	28.45%
Գյուղ/քաղաք	39.20%	67.64%
Ծանրաբեռնվածության գործակից	28.19%	95.84%
Միգրացիայի հավելանի տեմպ	4.16%	100.00%

Ամենամեծ տեսակարար կշիռն ունի գյուղ/քաղաք հարաբերակցությունը, որին հաջորդում է ծանրաբեռնվածության գործակիցը: Այնուհետև հաշվարկվել է զբաղվածության և ժողովրդագրական համաթվի կապը (կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն): Հաշվարկները ցույց են տալիս, որ ժողովրդագրական համաթիվը 42.92%-ով պայմանավորում է ՀՀ զբաղվածության շարժընթացը: Իսկ ժողովրդագրական համաթվի յուրաքանչյուր բաղադրիչի կշիռը կարող ենք հաշվարկել՝ կշիռ համաթիվում $\times 0.4292$:

Այսպիսով, բնակչության թվաքանակը պայմանավորում է զբաղվածության վարիացիայի 10.43%-ը, կին/տղամարդ հարաբերակցությունը՝ 1.79%-ը, ընդ որում, բացասական ազդեցություն ունի, այսինքն՝ բնակչության թվաքանակում կանանց տեսակարար կշռի աճը հանգեցնում է զբաղվածության կրճատմանը: Գյուղ-քաղաք հարաբերակցությունը՝ 16.82%, դրական ազդեցություն ունի, այսինքն՝ գյուղական բնակչության տեսակարար կշռի աճը հանգեցնում է զբաղվածության աճին, ժողովրդագրական ծանրաբեռնվածության 12.10%-ով աճը հանգեցնում է զբաղվածության կրճատմանը: Միգրացիայի հավելանի տեմպի մեկ տոկոսով աճը, իր հերթին, հանգեցնում է 1.79%-ով զբաղվածության կրճատմանը:


Կատարված վերլուծությունը փաստում է, որ ՀՀ-ի համար էական խնդիր է գյուղական բնակչության աճի և կյանքի որակի խթանման թիրախավորումը, քանի որ այն ուղղակիորեն կբարելավի ՀՀ զբաղվածության մակարդակը, հետևաբար կհանգեցնի բնակչության ընդհանուր բարեկեցության մակարդակի աճին:

²⁷ https://www.bbvaesearch.com/wp-content/uploads/2014/09/WP14-26_Financial-Inclusion2.pdf

²⁸ Հաշվարկը կատարել են հեղինակները:

Զբաղվածության կանխատեսում

Իրականացվել է նաև ՀՀ զբաղվածության կանխատեսում երկու սցենարով: Ըստ նշված կանխատեսման՝ մեկ սցենարը դիտարկվում է առանց COVID-19-ի ու պատերազմի, մյուսը՝ COVID-19-ի ու պատերազմի հետևանքներով (գծապատկեր 1.13):



Գծապատկեր 1.13

ՀՀ զբաղվածության կանխատեսումը 2 սցենարով. առանց COVID-19-ի ու պատերազմի և COVID-19-ի ու պատերազմի հետևանքներով

Գծապատկերից ակնհայտ է, որ COVID-19-ի և պատերազմի հետևանքը ապագայում ՀՀ զբաղվածության մոտ 25%-ով նվազումն է: Հարկ է նշել նաև, որ, չնայած շոկային 2 ակիքների ազդեցությանը, կառուցված մոդելից կանխատեսումներն ունեն աճի միտում, այսինքն՝ ըստ մոդելի՝ զբաղվածների թիվն աճելու է, սակայն ոչ այն տեմպով, որով կաճեր, եթե շարքը պահպաներ իր միտումը և շոկերի չենթարկվեր: Այդ մասին են վկայում ավտոռեգրեսիոն գործակիցների (AR1, SAR1, SAR2) դրական արժեքները. միայն մեկ սեզոնային նվազող տատանում կա (MA1), որը բացարձակ արժեքով ավելի փոքր է, քան ավտոռեգրեսիոն գործակիցը (MA1 < AR1): Ավելի մանրամասն մեկնաբանելու դեպքում կարելի է պնդել հետևյալը. քանի որ կառուցված մոդելը ենթադրում է ժամանակային շարքի բացատրում՝ ելնելով նախորդ լազերից, հետևաբար ամեն նոր արժեք ստացվում է համապատասխան նախորդ լազերի և գնահատված գործակիցների գծային կոմբինացիայից, որոնք մոդելում դրական են, հետևաբար՝ տրենդը դրական է: Ընդհանուր առմամբ, ամեն հաջորդ արժեքն ավելի մեծ է, քան նախորդ լազային արժեքը:

Համադրելով կանխատեսումները 2021 թ. մայիսից մինչև 2022 թ. մարտ ամիսը հասանելի փաստացի տվյալների հետ՝ կարող ենք ասել, որ ՀՀ զբաղվածությունը շոկային կանխատեսման սցենարից միջինում 5.08%-ով ավելի է, այսինքն՝ այդքանով ավելի արագ է վերականգնվել կամ, որ նույն է, մոդելը ճշգրիտ է 95%-ով:

Զբաղվածություն-մակրոհամակարգի ցուցանիշների կապի մոդելավորում

Զբաղվածության և մակրոտնտեսական ցուցանիշների կապի մոդելավորման համար կառուցվել է ռեգրեսիոն հավասարումների համակարգ, որը պարունակում է 2 հավասարում: Մեկը Քոբ-Դուգլասի²⁹ ֆունկցիայի հիման վրա կառուցված հավասարումն է, մյուսը հատված է Առևտրի գրավիտացիոն մոդելի կոնցեպտից:

Համակարգն ունի հետևյալ տեսքը՝

$$\begin{cases} \text{Turnover} = c_1 + c_2 * \text{GDP} + \varepsilon_1 \\ \text{GDP} = c_3 + c_4 * L + c_5 * K + \varepsilon_2, \end{cases} \quad (1)$$

որտեղ՝

Turnover՝ ՀՀ արտաքին առևտրաշրջանառություն,

GDP՝ ՀՀ ՀՆԱ,

L՝ աշխատավարձ որպես ծախս՝ ճշգրտված գրադվածների թվով,

K՝ կապիտալ ծախսեր,

c₁, c₂, c₃, c₄, c₅՝ մոդելի անհայտ պարամետրեր,

ε₁, ε₂՝ մոդելի սխալներ:

Համակարգը պարունակում է 2 էնդոգեն և 2 էկզոգեն փոփոխական: Էնդոգեն փոփոխականներն են ՀՆԱ-ն և արտաքին առևտրաշրջանառությունը, իսկ էկզոգենը՝ աշխատանքը և կապիտալը (ծախսեր): Մոդելի առաջին հավասարման մեջ ՀՆԱ-ն էկզոգեն փոփոխական է, իսկ 2-րդում՝ արդեն էնդոգեն:

Մոդելի բերված տեսքը հետևյալն է՝

$$\begin{cases} \text{GDP} = a_{11} * L + a_{12} * K + u_2 \\ \text{Turnover} = a_{21} * L + a_{22} * K + u_1 \end{cases} \quad (2)$$

Բերված տեսքի մատրից.

	<i>GDP</i>	<i>Trade</i>	<i>K</i>	<i>L</i>
Հավասարում 1	-1	0	c ₂	c ₃
Հավասարում 2	c ₅	-1	0	0

⁴⁴ St' u ETUC (European Trade Union Confederation). 2010. Defending the autonomy of collective bargaining in Europe, resolution adopted at the Executive Committee on 1-2 December 2010, <http://www.etuc.org/IMG/pdf/Resolution-EN-Defending-autonomy-collective-bargaining.pdf>

Մեծ Բրիտանիայում աշխատողի աշխատավարձի վճարման եղանակը կախված է բացառապես աշխատանքային պայմանագրում աշխատավարձի վճարման մասին պայմանավորվածություններից: Աշխատանքային պայմանագրերում պետք է նշվի վարձատրության սանդղակը կամ դրույքաչափը կամ վարձատրության հաշվարկման մեթոդը, այն միջակայքերը, որոնցով կատարվում է վարձատրությունը (այսինքն՝ շաբաթական, ամսական կամ այլ՝ որոշակի ժամանակահատվածներով), արժույթը, որով պետք է կատարվի վարձատրությունը և նշվի վճարվող ցանկացած լրացուցիչ վարձատրության մասին: Աշխատավարձը կարող է վճարվել ամեն օր, ամեն շաբաթ կամ որոշակի այլ ժամանակահատվածներով:



Նշում: * Դանիայում, Բուլղարիայում, Կիպրոսում, Ավստրիայում, Ֆինլանդիայում և Շվեդիայում ազգային նվազագույն աշխատավարձ չկա: (*) 2012 թվականի հունվարի տվյալները և վերոնշյալ տեղյակության միջին տարեկան տեմպը հասանելի չեն: (**) Նվազագույն աշխատավարձը ուժի մեջ է 2021 թվականի հուլիսի 1-ից: Աղբյուր՝ Եվրոստատ (աղբյուրը տվյալների կոդ՝ gain_naw_cur):

Գծապատկեր 2.1

ԵՄ անդամ և թեկնածու երկրների ամսական նվազագույն աշխատավարձերը 2012 և 2020 թթ., եվրո⁴⁵

Մեծ Բրիտանիան առաջին անգամ պաշտոնական նվազագույն աշխատավարձ սահմանել է 1999 թվականին: Դա մի քայլ էր, որն ուղղված էր երկրում ցածր աշխատավարձի խնդիրների լուծմանը և տնտեսական աճի

⁴⁵ Աղյուսակը ներկայացվել է վերլուծությունները կատարվել են Եվրոստատի պաշտոնական էջում բերված փոճակագրական տվյալների հիման վրա, https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=Minimum_wage_statistics#Variations_in_national_minimum_wages

խթանմանը: Սկզբնական դրույքը ժամում կազմում էր 3.60 ֆունտ ստեռլինգ՝ 22 տարեկանից բարձր անձանց համար: Մեծ Բրիտանիայի ազգային նվազագույն աշխատավարձի և ազգային կենսապահովման նվազագույնի միջև տարբերությունն այն էր, որ ազգային նվազագույն աշխատավարձը պարտադիր է 16-23 տարեկան աշխատողների համար և, որը յուրաքանչյուր տարիքային կատեգորիայի համար ավելանում է: Ազգային կենսապահովման նվազագույն չափը նվազագույն աշխատավարձի ամենաբարձր դրույքաչափն է և վճարվում է 23 տարեկանից բարձր բոլոր աշխատողներին: Աշխատավարձի նշված երկու մակարդակներն ունեն պարտադիր բնույթ և սահմանվում են Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից:

Յոթ թեկնածուների և հավանական թեկնածուների թվում հինգն ունեն ազգային նվազագույն աշխատավարձ (Մոնտենեգրո, Հյուսիսային Մակեդոնիա, Ալբանիա, Սերբիա և Թուրքիա), ինչը չկա Բոսնիա-Հերցեգովինայում, ինչպես նաև Կոսովոյում:

Եվրոպական որոշ երկրներում նվազագույն աշխատավարձի ազգային համակարգ չի կիրառվում, այն կիրառվում է միայն ոլորտային կամ մասնագիտական մակարդակով: Ազգային նվազագույն աշխատավարձ չեն կիրառում Դանիան, Իտալիան, Կիպրոսը, Ավստրիան, Ֆինլանդիան և Շվեդիան: Վերջինս ավելի շուտ բացառություն է, քանի որ դա միակ երկիրն է, որտեղ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձ գոյություն ունի, սակայն այն կիրառվում է միայն ինը տարբեր մասնագիտությունների նկատմամբ՝ ներառյալ պահակային ծառայության աշխատողները, դոնապահները, հավաքարարները և այլն: Մյուս բոլոր երկրներում նշված խմբում ընդգրկված աշխատողների նվազագույն աշխատավարձը որոշվում է բացառապես ոլորտային և կոլեկտիվ պայմանագրերով: Երկրների մեծ մասում հենց պետությունն է վերջնականապես որոշում ազգային նվազագույն աշխատավարձը՝ ըստ օրենքի:

Կենսապահովման նվազագույնը սահմանվում է Կենսապահովման հիմնադրամի կողմից՝ որպես ենթադրյալ «իրական» կենսապահովման նվազագույն՝ ըստ կյանքի փաստացի արժեքի: Հիմնադրամն այն սահմանում է երկու մակարդակով. մեկը Լոնդոնի համար, մյուսը՝ Մեծ Բրիտանիայի մնացած տարածքների: Այն պարտադիր բնույթ չունի:

16 տարեկան և ավելի բարձր տարիքի աշխատողներն ունեն ազգային նվազագույն ժամանակավարձի օրինական իրավունք⁴⁶: Դա կախված չէ նրանց աշխատանքի վայրից, բիզնեսի չափից կամ աշխատողի զբաղմունքից: Աշխատավարձը կարող է սահմանվել նաև կոլեկտիվ պայմանագրով, սակայն պայմանագրի ցանկացած դրույթ անվավեր է, եթե այն բացառում կամ սահմանափակում է 1998 թ. «Նվազագույն աշխատավարձի մասին ազ-

⁴⁶ <https://wageindicator.org/labour-laws/labour-law-around-the-world/minimum-wages-regulations/minimum-wages-regulations-uk>

գային օրենքի» որևէ դրույթ: Բիզնեսի, նորարարության և հմտությունների վարչությունը (BIS) գործատուների կողմից նվազագույն աշխատավարձի սահմանված դրույթաչափերը չպաշտպանելու դեպքերում տուգանքը 100%-ից հասցրել է 200%-ի⁴⁷:

Նվազագույն աշխատավարձը սահմանվում է ըստ տարիքային կատեգորիաների: 2022 թ. ապրիլի 1-ի դրությամբ դրանց արժեքները հետևյալներն են⁴⁸.

- 4,81 ֆունտ ստեռլինգ (մինչև 18 տարեկան և փորձառություն անցնողներ),
- 6,83 ֆունտ ստեռլինգ (18-20 տարեկան)
- 9,18 ֆունտ ստեռլինգ (21-22 տարեկան)
- 9,50 ֆունտ ստեռլինգ (23 տարեկանից բարձր անձանց համար, նաև հայտնի է որպես ազգային կենսապահովման նվազագույն):

Նվազագույն աշխատավարձի իրավունքը տարածվում է կես դրույթով աշխատողների, պատահական աշխատողների (օրինակ՝ մեկ օրով վարձված), գործակալությունների աշխատողների, աշակերտների, փորձաշրջանի մեջ գտնվող, հաշմանդամություն ունեցողների, գյուղատնտեսական աշխատողների, օտարերկրյա աշխատողների, նավաստիների և օֆշորային աշխատողների վրա: Բանվորներին վճարում են ըստ նրանց կողմից արտադրված արտադրատեսակների քանակի:

Աշխատավարձի սահմանման կառուցակարգերը ԱՄՆ-ում

Միացյալ Նահանգներում աշխատավարձի սահմանման միասնական ձև գոյություն չունի: Ընդհանուր առմամբ, աշխատավարձը սահմանվում է աշխատուժի առաջարկի և պահանջարկի հիման վրա, սակայն դրա վրա կարող են ազդել այնպիսի գործոններ, ինչպիսիք են կոնկրետ տարածքում կյանքի արժեքը, արհմիության առկայությունը, ընթացիկ նվազագույն աշխատավարձը և աշխատանքային փորձը⁴⁹: Չնայած վերջին տարիներին ԱՄՆ-ում արհմիությունների ազդեցությունը նվազել է, սակայն որոշ ոլորտներում դրանք դեռևս գոյություն ունեն և կարողանում են ազդել աշխատավարձի սահմանման վրա: Աշխատանքի վարձատրության դրույթաչափերը տարբերվում են նաև՝ կախված աշխատողի սեռից, ռասայից, կրթական մակարդակից և որակավորումից: Ըստ Աշխատանքի վիճակագրության բյուրոյի տվյալների՝ գործազրկության մակարդակը զգալիորեն ցածր և աշխատավարձը ավելի բարձր է բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների,

⁴⁷ Տե՛ս The National Minimum Wage (Amendment) (No. 2) Regulations 2014 (SI No. 2485 of 2014); The National Minimum Wage Regulations 1999; National Minimum Wage Act, 1998), <https://wageindicator.org/labour-laws/labour-law-around-the-world/minimum-wages-regulations/minimum-wages-regulations-uk>

⁴⁸ <https://www.expatica.com/uk/working/employment-law/minimum-wage-uk-982318/>

⁴⁹ Վերլուծությունները կատարվել են ԱՄՆ Աշխատանքի վիճակագրության բյուրոյի պաշտոնական կայքէջում բերված նյութերի հիման վրա, <https://www.bls.gov/careeroutlook/>

քան նրանց շրջանում, ովքեր ունեն միջնակարգ կամ թերի բարձրագույն կրթություն: Գործատուները կարող են աշխատավարձը սահմանել՝ ելնելով նրանից, թե կոնկրետ պաշտոնը որքան արժեք կստեղծի:

Միացյալ Նահանգներում աշխատանքի վարձատրության համակարգում տեսականորեն առանձնացվում են աշխատավարձի հինգ ձևեր, այդ թվում՝ նվազագույն աշխատավարձը, կենսապահովման նվազագույնը, գերակշռող աշխատավարձը (Prevailing Wage), թեյավճարով աշխատավարձը և արդար աշխատավարձը⁵⁰:

Նվազագույն աշխատավարձը ամենացածր ժամային աշխատավարձն է, որը գործատուն կարող է վճարել աշխատողին՝ աշխատանքի դիմաց:

Կենսապահովման նվազագույնը այն ամենացածր աշխատավարձն է, որի դեպքում վարձու աշխատողը և նրա ընտանիքը կարող են իրենց թույլ տալ ամենատարրական ծախսերը: Քանի որ յուրաքանչյուր աշխատողի կարիքները տարբերվում են՝ կախված ընտանեկան դրությունից, երեխաների թվից, գտնվելու վայրից, կյանքի արժեքից և այլ գործոններից, «կենսապահովման նվազագույն» հասկացությունը հաճախ առաջացնում է բազմաթիվ սուր քաղաքական հարցեր: Նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ կապված օրենսդրական և քաղաքական քննարկումները հաճախ խաչվում են կենսապահովման նվազագույնի քննարկման հետ: Թեև կենսապահովման նվազագույնը և նվազագույն աշխատավարձը հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ, սակայն դրանք տարբեր են, քանի որ նվազագույն աշխատավարձը սահմանվում է և պահպանվում է օրենսդրությամբ, իսկ կենսապահովման նվազագույնը՝ ոչ:

Գերակշռող աշխատավարձը սովորաբար վերաբերում է վճարման այն դրույքաչափին, որը կապալառուները և մատակարարները պետք է առաջարկեն իրենց աշխատակիցներին, երբ նրանք բիզնես են վարում պետական հաստատության հետ: Օրինակ, Լոս Անջելեսը պահանջում է, որ կապալառուները, որոնք մասնակցում են քաղաքի հանրային աշխատանքների պայմանագրերին (օրինակ՝ ճանապարհային շինարարությանը), աշխատողներին վճարեն այն հիմնական մակարդակը, որը սահմանված է Կալիֆոռնիայի նահանգի աշխատանքային հարաբերությունների դեպարտամենտի կողմից:

Թեյավճարով աշխատավարձն այն հիմնական աշխատավարձն է, որը վճարվում է աշխատողին, և որը իր աշխատանքի փոխհատուցման զգալի մասը ստանում է թեյավճարի ձևով: Դաշնային մակարդակով Արդար աշխատանքային ստանդարտների մասին օրենքը (FLSA) նշում է, որ թեյավճար ստացող աշխատողների գործատուները պարտավոր են վճարել աշխատավարձ՝ ժամական 2,13 ԱՄՆ դոլարի չափով միայն այն դեպքում, եթե այդ

⁵⁰ Վերլուծությունը կատարվել է Govdocs կայքէջում բերված նյութերի հիման վրա, <https://www.govdocs.com/5-wage-types-and-how-they-affect-your-employees/>

գումարը ստացված թեյավճարների հետ միասին հավասար է դաշնային նվազագույն աշխատավարձին:

Ընդհանուր առմամբ, **արդար աշխատավարձը** ընկերության գործունեության ամբողջությունն է, որը հանգեցնում է աշխատավարձի կայուն աճին: Արդար աշխատավարձի մեթոդները ներառում են նվազագույն կենսապահովման մակարդակը, աշխատանքի վարձատրության ազգային կանոնների պահպանումը, ինչպիսիք են՝ նվազագույն աշխատավարձը, աշխատավարձի վճարումը, արտաժամյա վարձատրությունը, վճարովի արձակուրդները և սոցիալական ապահովագրության վճարումները, աշխատավարձի պատշաճ ճշգրտման ապահովումը՝ կենսապահովման նվազագույնի և նվազագույն աշխատավարձի փոփոխությանը համապատասխան, կատարվող աշխատանքի համար անհրաժեշտ հմտություններին համապատասխանող աշխատավարձը:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործազուրկ չհանդիսացող ապահովագրված աշխատողներն ունեն նվազագույն աշխատավարձի իրավունք՝ սկսած 2009 թ. հուլիսի 24-ից՝ ժամային 7.25 ԱՄՆ դոլարից ոչ պակաս վարձատրությամբ⁵¹: Աշխատանքային շաբաթվա ընթացքում 40 ժամից ավելի աշխատանքի դիմաց կատարվում է արտաժամյա վճար՝ աշխատանքի վարձատրության սովորական դրույքաչափը առնվազն 1.5 անգամ գերազանցող չափով: 16 տարեկան կամ ավելի բարձր տարիքի աշխատողների աշխատանքային ժամերի քանակը սահմանափակված չէ: Արդար աշխատանքային ստանդարտների մասին օրենքը (FLSA) չի պահանջում վճարել հանգստյան օրերի, տոնական կամ սովորական հանգստյան օրերի արտաժամյա աշխատանքի համար, եթե միայն այդ օրերին արտաժամյա աշխատանք չի կատարվում:

Ինչպես Աշխատավարձի և ժամերի դաշնային օրենքը, Նահանգների օրենսդրությունը հաճախ որոշակի մասնագիտություններ կամ ճյուղեր ազատում է նվազագույն աշխատանքային ստանդարտից, իսկ որոշ տեղական ինքնակառավարման մարմիններ նվազագույն աշխատավարձի դրույքաչափերը սահմանում են համապատասխան նահանգի նվազագույն աշխատավարձից ավելի բարձր: Նվազագույն աշխատավարձի դրույքաչափի պահանջները կամ դրանց բացակայությունը, որպես կանոն, կարգավորվում են առանձին նահանգների օրենսդրական գործունեությամբ: Նվազագույն աշխատավարձի մասին դաշնային օրենքը փոխարինում է նվազագույն աշխատավարձի մասին նահանգային օրենքներին, երբ դաշնային նվազագույն աշխատավարձը գերազանցում է նահանգի նվազագույն աշխատավարձը: Այն նահանգներում, որտեղ նահանգի նվազագույն աշխատավարձը գերազան-

⁵¹ Վերլուծությունը կատարվել է U.S. Department of Labor կայքէջում բերված նյութերով, <https://www.dol.gov/general/topic/wages/minimumwage>

ցում է դաշնային նվազագույն աշխատավարձը, պահպանվում է նահանգի նվազագույն աշխատավարձը:

2022 թ. հունվարի 1-ին ԱՄՆ-ում գործող նվազագույն աշխատավարձի դրույքաչափերը՝ ըստ առանձին նահանգների, ներկայացված են աղյուսակ 2.2-ում: Ամերիկացիների մեծամասնությունը հանդես է գալիս դաշնային նվազագույն աշխատավարձի բարձրացման օգտին: Տասը չափահասներից մոտավորապես վեցը (62%)՝ ներառյալ գրեթե բոլոր ժողովրդագրական խմբերում ներգրավվածների մեծամասնությունը, աջակցում են նվազագույն աշխատավարձի՝ մինչև 15 ԱՄՆ դոլարի չափով բարձրացման նախաձեռնությանը:

ԱՄՆ-ում գործող նվազագույն աշխատավարձի դրույքաչափերը՝ ըստ առանձին նահանգների (01.01.2022)⁵² | *Աղյուսակ 2.2*

Դաշնային նվազագույն աշխատավարձից բարձր, ԱՄՆ դոլար	Դաշնային նվազագույն աշխատավարձին՝ 7.25 ԱՄՆ դոլարին հավասար	Նվազագույն աշխատավարձ չի պահանջվում
Ալյասկա 10.34	Ջորջիա	Ալաբամա
Արկանզաս 11.00	Լուիզիանա	Այովա
Արիզոնա 12.80	Այդահո	Միսսիսիպի
Կալիֆոռնիա 14.00	Ինդիանա	Արևելյան Կարոլինա
Կոլորադո 12.56	Կանզաս	Թենեսի
Մերիլենդ 12.50	Յուտա	
Մեն 12.75	Վիսկոնսին	
Միչիգան 9.87	Վայոմինգ	
Մինեսոտա 10.33	Պուերտո Ռիկո	
Միսսուրի 11.15	Հյուսիսային Մարիանյան կղզիներ	
Մոնտանա 9.20		
Նեբրասկա 9.00		
Նյու Ջերսի 13.00		
Նյու Մեքսիկո 11.50		
Նևադա 9.75/8.75		
Նյու Յորք 13.20		
Օհայո 9.30		
Օրիգոն 12.75		
Ռոդ Այլենդ 12.25		
Հարավային Դակոտա 9.95		
Վիրջինիա 11.00		
Վերմոնտ 12.55		
Վաշինգտոն 14.49		
Արև.Վիրջինիա 8.75		
Վիրջինյան կղզ. 10.50		
Գուամ 8.75		

⁵² U.S. Department of Labor. <https://www.dol.gov/agencies/whd/minimum-wage/state>

Կանադայում նվազագույն աշխատավարձի առաջին դրույքաչափերը սահմանվել են 20-րդ դարի սկզբին և առաջնահերթ կիրառվել են կանանց ու երեխաների աշխատանքի վարձատրությունը կարգավորելու նպատակով⁵³: Մանիտոբան և Բրիտանական Կոլումբիան նվազագույն աշխատավարձի մասին օրենսդրությունը գործողության մեջ են դրել 1918 թ., իսկ Օնտարիոն, Քվեբեկը, Նոր Շոտլանդիան և Սասկաչևանը 1920 թ. հետևել են նրանց օրինակին: Արքայազն Էդուարդի կղզին նվազագույն աշխատավարձի մասին օրենքն ընդունած վերջին նահանգն էր, որն էլ 1960-ին ներառեց ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց աշխատավարձի կարգավորումները:

Դաշնային նվազագույն աշխատավարձը սկզբնապես սահմանվել է 1.25 կանադական դոլարի չափով: 1990-ական թթ. կեսերին տարածաշրջաններում (պրովինցիաներում) և այլ տարածքներում դաշնային դրույքը զգալիորեն հետ էր մնում նվազագույն աշխատավարձից, որը միջին հաշվով կազմում էր ժամական մոտ 5.95 դոլար: 1996 թ. «Նվազագույն աշխատավարձի մասին» օրենքում կատարվել են այդ իրավիճակի վերացմանն ուղղված փոփոխություններ այն նկատառումով, որպեսզի դաշնային նվազագույն աշխատավարձն ավտոմատ ճշգրտվի՝ պրովինցիաներում և տարածքներում տոկոսադրույքների փոփոխություններին համապատասխան:

Պրովինցիաներում և տարածքներում նվազագույն աշխատավարձը շարունակում է կայուն աճել, դրանք այժմ նաև կանոնավոր կերպով վերանայում և/կամ սահմանում են իրենց տոկոսադրույքները, դրույքաչափերն ինդեքսավորում՝ հաշվի առնելով գնաճը: 2021 թ. դեկտեմբերի 29-ից դաշնային նվազագույն աշխատավարձը կազմում էր ժամական 15.00 ԱՄՆ դոլար, իսկ 2022 թ. ապրիլի 1-ից՝ 15.55 դոլար⁵⁴: Այնուամենայնիվ, եթե պրովինցիայի կամ տարածքի կողմից սահմանված նվազագույն աշխատավարձը գերազանցում է դաշնային նվազագույն աշխատավարձը, ապա կիրառվում է պրովինցիայի կամ տարածքի աշխատավարձի դրույքաչափը: Յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ին դաշնային նվազագույն աշխատավարձը կարող է աճել՝ հաշվի առնելով գնաճը: Դաշնային նվազագույն աշխատավարձի բարձրացումը հիմնված է Կանադայի՝ նախորդ օրացուցային տարվա սպառողական գների ինդեքսի վրա (աղյուսակ 2.3):

⁵³ Վերլուծությունը կատարվել է Federal Minimum Wage. Issue Paper. January 2019 <https://www.canada.ca/content/dam/esdc-edsc/documents/services/reports/SPAWID-SPLR-IssuePaper-MinWage-FINAL-EN.pdf> կայքէջում ներկայացված նութերի հիման վրա:

⁵⁴ Կանադայի Կառավարության պաշտոնական կայքէջ՝ <https://www.canada.ca/en/employment-social-development/programs/employment-standards/pay-deductions.html>

Ընթացիկ նվազագույն աշխատավարձի դրույթաչափերը Կանադայում⁵⁵

Իրավասությունը	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Աշխատավարձի դրույթա- չափը, Կանադական դոլար
Դաշնային մակարդակ	01-ապրիլ-2022	15.55
Ալբերտա	26-հունիս-2019	15.00
Բրիտանական Կոլումբիա	01-հունիս-2021	15.65
Մանիտոբա	01-հոկտ.-2021	11.95
Նյու Բրանսուիկ	01-ապրիլ-2022	12.75
Նյուֆաունդլենդ և Լաբրադոր	01-ապրիլ-2022	13.20
Հյուսիսարևմտյան տարածքներ	01-սեպտ.-2021	15.20
Նոր Շոտլանդիա	01-ապրիլ-2022	13.35
Նունավուր	01-ապրիլ-2020	16.00
Օնտարիո	01-հունվար-2022	15.00
Էդուարդ արքայազնի կղզի	01-ապրիլ-2022	13.70
Քվեբեկ	01-մայիս-2022	14.25
Սասկաչևան	01-հոկտ.-2021	11.81
Յուկոն	01-ապրիլ-2022	15.70

Դաշնային մակարդակով կարգավորվող մասնավոր հատվածի (The Federally Regulated Private Sector, FRPS) աշխատակիցները, որոնք կարծում են, որ իրենց չի վճարվում համապատասխան նվազագույն աշխատավարձ, օրենքի համաձայն, իրավունք ունեն բողոք ներկայացնելու Աշխատանքի ծրագրին: «Նվազագույն աշխատավարձի մասին» օրենքի դրույթների խախտումները կարող են հայտնաբերվել նաև Աշխատանքի ծրագրով տեսչական միջոցառումների ընթացքում:

Աշխատավարձի վճարման սկզբունքները Ճապոնիայում

Ճապոնիայում աշխատավարձի քաղաքականությունն իրականացվում է ինչպես պետական, այնպես էլ տեղական մակարդակներում: Վերջին տարիներին աշխատավարձի քաղաքականությունը փոխվում է՝ փոփոխվող տնտեսական պայմաններին համապատասխան:

Աշխատավարձի նկատմամբ պահանջները և աշխատավարձի սահմանման թափանցիկ պրակտիկայի ապահովման պատասխանատվությունը Ճապոնիայում դրված է գործատուների վրա, սակայն կան նաև բազմաթիվ վճարային համակարգեր, որոնք կարող են բավարարել ցանկացած բիզնեսի պահանջները⁵⁶:

Աշխատանքի վարձատրության ճապոնական համակարգը շարունակում է մեծապես կախված լինել տվյալ ընկերությունում աշխատանքի ժամանակահատվածից: Աշխատավարձի վրա կարող են ազդել նաև կրթության մակարդակը, երբեմն նաև աշխատողի տարիքը: Վերջերս Ճապոնիայի Կառա-

⁵⁵ Retail Council of Canada, <https://www.retailcouncil.org/resources/quick-facts/minimum-wage-by-province/>

⁵⁶ Վերլուծությունը կատարվել է Ճապոնիայի «Աշխատանքային ստանդարտների մասին օրենքի» դրույթների հիման վրա, <https://www.ilo.org/dyn/natlex/docs/WEBTEXT/27776/64846/E95JPN01.htm>

վարությունը առաջարկել է սահմանել վճարումներ, որոնք հիմնված են ոչ թե աշխատավայրում անցկացրած ժամանակի, այլ արտադրողականության և աշխատանքի արդյունքների վրա:

Գործատուն չի կարող առանց աշխատողի համաձայնության աշխատավարձը նվազեցնել: Աշխատավարձից պահումները, որպես կանոն, արգելված են, և պահումների դեպքում աշխատակիցների համաձայնությունը օրինական ուժ չունի: Աշխատավարձի պահումը կարգավորվում է աշխատանքային կանոններով. նվազման գումարը, մեկ անգամ, չպետք է գերազանցի միջին օրական աշխատավարձի 50%-ը, իսկ նվազեցման ընդհանուր գումարը չպետք է գերազանցի վճարման մեկ ժամանակահատվածի ընդհանուր աշխատավարձի 10%-ը: Աշխատավարձի մասնակի պահումը թույլատրվում է օրենքներով և նորմատիվ ակտերով նախատեսված դեպքերում կամ երբ առկա է արհմիության կամ աշխատողների մեծ մասը ներկայացնող անձի հետ գրավոր համաձայնություն (եթե արհմիություն չի կազմավորվել):

Ճապոնական ընկերությունները ցուցադրում են աշխատավարձի կառուցվածքի մի շարք առանձնահատկություններ՝

- ամսական վճարում՝ ամառային և ձմեռային պարգևավճարների (բոնուսների) հետ,
- հիմնական աշխատավարձ և մի շարք նպաստներ՝ ներառյալ կեցությունը, ընտանիքը և տրանսպորտը:

Բոնուսները վճարված ընդհանուր աշխատավարձի մեջ մեծ տոկոս են կազմում, ինչի հետևանքով՝

- արտաժամյա աշխատանքի տոկոսադրույքները նվազում են,
- ռեցեսիայի դեպքում աշխատուժի վրա կատարված ծախսերն անմիջապես նվազում են,
- ընկերություններն անցնում են աշխատանքի վարձատրության տարեկան կառուցվածքին, թեպետ ճապոնական աշխատանքային օրենսդրության համաձայն, այդ պրակտիկան ոչ մի առավելություն չի տալիս: Եթե ընկերությունը ներդնում է աշխատանքի վարձատրության տարեկան համակարգ, ապա այն սովորաբար տարածվում է միայն կառավարման օղակի աշխատակիցների վրա:

Ճապոնիայում աշխատակցին աշխատանքից ազատելը չափազանց դժվար է: Օրենքը աշխատողների համար ապահովում է հուսալի պաշտպանություն: Եթե ընկերությունը ցանկանում է աշխատանքից ազատել որևէ մեկին՝ առանց գործը դատարան հասցնելու, ապա գործատուն սովորաբար առաջարկում է միանվագ վճար, որը հաշվարկվում է համաձայն այնպիսի գործոնների, ինչպիսիք են աշխատանքային փորձը և աշխատանքից ազատման պատճառը: Այս վճարումը չի հարկվում սոցիալական ապահովագրության վճարներով և, ի տարբերություն սովորական վճարման, ունի հարկման արտոնյալ ռեժիմ:

Նվազագույն աշխատավարձը Ճապոնիայում կարգավորվում է 1959 թվականին ընդունված «Նվազագույն աշխատավարձի մասին» օրենքով⁵⁷: Նշված օրենքի համաձայն՝ սահմանված նվազագույն աշխատավարձը կիրառվում է բոլոր այն աշխատողների նկատմամբ, որոնք աշխատում են ձեռնարկությունում կամ առևտրային հաստատությունում և աշխատավարձ են ստանում՝ անկախ զբաղմունքի տեսակից: Բացառություն են կազմում ձեռնարկություններում կամ գրասենյակներում զբաղված՝ միասին բնակվող ընտանիքի անդամները և տնային սպասավորները:

Բազային նվազագույն աշխատավարձը սահմանվում է երկրի յուրաքանչյուր առանձին տարածաշրջանի կտրվածքով⁵⁸: Նվազագույն աշխատավարձը Ճապոնիայում սահմանվում է ըստ երկու կարգերի՝ տարածաշրջանային նվազագույն աշխատավարձ և կոնկրետ ճյուղի համար սահմանված հատուկ նվազագույն աշխատավարձ: Տարածաշրջանային նվազագույն աշխատավարձերը սահմանվում են յուրաքանչյուր առանձին շրջանի համար, իսկ ճյուղային սակագները կարող են սահմանվել քիզնեսի որոշակի տեսակների կամ մասնագիտությունների համար այն բանից հետո, երբ շահագրգիռ կողմերը նման հատուկ կարգավորման հայտ են ներկայացնում Նվազագույն աշխատավարձի տարածաշրջանային խորհրդի քննարկմանը: Իր հերթին, ճյուղային աշխատավարձը ևս ունի երկու կարգեր՝ կոնկրետ տարածաշրջանի ճյուղային աշխատավարձ և ընդհանուր ազգային նվազագույն աշխատավարձ:

Ճապոնիայում միասնական համապետական նվազագույն աշխատավարձ գոյություն չունի, այն կախված է տարածաշրջաններից: Օրենքներում նշված չի որևէ գումար, որը կիրառելի կլինի բոլորի համար, սակայն յուրաքանչյուր աշխատողի նվազագույն աշխատավարձի վճարումը երաշխավորվում է տարածաշրջանի կամ զբաղվածության կատեգորիայի շրջանակներում:

Յուրաքանչյուր կատեգորիայի նվազագույն գումարները վերանայվում են յուրաքանչյուր տարվա հոկտեմբերին՝ Առողջապահության, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության կողմից՝ նվազագույն աշխատավարձի քննարկման հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո: Նվազագույն աշխատավարձը հաշվարկվում է ժամային հիմունքներով:

Նվազագույն աշխատավարձը այն գուտ գումարն է, որը աշխատողն ստանում է իր աշխատանքի դիմաց՝ առանց հնարավոր բռնուսների և հավելումների: «Աշխատանքային ստանդարտների մասին» օրենքի և «Նվազագույն աշխատավարձի մասին» օրենքի դրույթներին համապատասխան՝

⁵⁷ <https://wageindicator.org/labour-laws/labour-law-around-the-world/minimum-wages-regulations/minimum-wages-regulations-japan>

⁵⁸ Վերլուծությունը կատարվել է <https://voyapon.com/minimum-wage-in-japan/> կայքէջում ներկայացված նյութերի հիման վրա:

նվազագույն աշխատավարձի վճարմանը վերաբերող դրույթների խախտման համար գործատուների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ պատժազանները՝


- նվազագույն աշխատավարձով վճարվող աշխատողներին նվազագույն աշխատավարձին հավասար կամ գերազանցող աշխատավարձ չվճարելու համար տուգանք 500 000 իենից ոչ ավելի չափով,
- աշխատավայրերում և այլ ձևերով տեսանելի տեղերում մշտապես տեղեկություն տեղադրելու միջոցով աշխատողներին կիրառելի նվազագույն աշխատավարձի մասին չտեղեկացնելու համար տուգանք մինչև 300 000 իենի չափով,
- ստուգումից հրաժարվելու, խոչընդոտելու կամ խուսափելու, ինչպես նաև աշխատանքային նորմերի գծով տեսուչների հարցերի վերաբերյալ դիմում չներկայացնելու կամ կեղծ ցուցմունքներ տալու համար տուգանք մինչև 300 000 իեն,
- աշխատանքային ստանդարտների մասին օրենքի պահանջներին համապատասխան՝ վճարման եղանակին և ժամկետներին վերաբերող, աշխատողներին գործավարձային դրույթաչափով աշխատավարձ չվճարելու, աշխատողներին տույժ-տուգանքները չվճարելու դեպքերում տուգանք ոչ ավելի, քան 300 000 իենի չափով, կամ
- աշխատողին աշխատանքից ազատելու կամ աշխատողի հետ ոչ պատշաճ վերաբերմունքի համար, համապատասխան մարմիններից որևէ մեկում օրենքի ենթադրյալ խախտման մասին հայտնելու դեպքում տուգանք 300 000 իենը չգերազանցող չափով (կամ ազատագրվմամբ մինչև 6 ամիս ժամկետով):

Նվազագույն աշխատավարձի սահմանման կամ թարմացման չափանիշները ներառում են աշխատավարձի միտումները (աշխատավարձի մակարդակը երկրում), տնտեսական պայմանները, զբաղվածության միտումները և սպառողական գների ինդեքսը: Նվազագույն աշխատավարձը բարձր է ավելի ուրբանիզացված պրեֆեկտուրաներում, ինչպիսիք են մեծ Տոկիոյի շրջանի կամ Օսակա քաղաքի պրեֆեկտուրաները: Տոկիոյում նվազագույն աշխատավարձը 1041 իեն է, ինչը երկրի 47 պրեֆեկտուրաների շրջանակներում ամենաբարձր ցուցանիշն է⁵⁹: Եվ հակառակը, այն ավելի ցածր է գյուղական պրեֆեկտուրաներում, ինչպիսիք են Օկինավան (820 իեն), Կոթին (820 իեն), Կյոսյուն, բացառությամբ՝ Ֆուկուոկայի (Միյագակի, Կագոշիմա, Կումատոմո և Նագասակի՝ 821 իեն, Օիտան՝ 822 իեն), Տոհոկու պրեֆեկտուրայում՝ 821 կամ 822 իեն: Վերանայված նվազագույն աշխատավարձն ուժի մեջ է մտել փուլերով՝ սկսած 2021 թ. հոկտեմբերի 1-ից:

⁵⁹ <https://voyapon.com/minimum-wage-in-japan/>

Ճապոնիայում նվազագույն աշխատավարձը, այլ գերտերությունների համեմատ, ցածր է: 2020 ֆինանսական տարում ժամային նվազագույն աշխատավարձը 902 իեն էր: Վերջին չորս տարիների ընթացքում Ճապոնիայում նվազագույն աշխատավարձը յուրաքանչյուր տարի ավելացել է ավելի քան 20 իենով: Ընդհանուր առմամբ, մինչև 2019 թ. ֆինանսական տարվա նվազագույն աշխատավարձը յուրաքանչյուր չորս տարում Ճապոնիայում մոտ 3%-ով աճել է:

2021 թ. հուլիսին նվազագույն աշխատավարձի գծով կենտրոնական խորհուրդն առաջարկել էր միջին նվազագույն ժամային աշխատավարձը բարձրացնել մինչև 930 իեն (մոտավորապես 8,40 ԱՄՆ դոլար) (գծապատկեր 2.2):



Գծապատկեր 2.2

Նվազագույն աշխատավարձի շարժընթացը Ճապոնիայում, իեն, 2012-2021 թթ.⁶⁰

2002 ֆինանսական տարվանից սկսած՝ այդ 3.1% աճը Ճապոնիայում նվազագույն աշխատավարձի չափման և ժամային աշխատավարձի կիրառման ողջ ընթացքի ամենամեծ աճն է: Այն հանգեցրել է նվազագույն աշխատավարձի ռեկորդային աճի՝ 28 իենով, 902-ից այն բարձրացել է 930 իեն մակարդակի: Ամենամեծ աճը տեղ է գտել Սիմանե պրեֆեկտուրայում. 792 իենից մինչև 824 իեն՝ աճելով 32 իենով:

Աշխատավարձի սահմանման կառուցակարգերը Չինաստանում

Օտարերկրյա ներդրողների համար Չինաստանում աշխատավարձի աճը բիզնեսի վարման անխուսափելի առանձնահատկությունն է: Այնուամենայնիվ, արտադրողականությունը, ենթակառուցվածքները, տրանսպորտային ծախսերը և հսկայական ներքին շուկայի հասանելիությունը դեռևս Չինաստանին թույլ է տալիս մնալ այլ երկրների համեմատությամբ աշխատուժի ավելի ցածր նորմատիվ ծախսեր ունեցող երկրի մակարդակում:

⁶⁰ Trading Economics. <https://tradingeconomics.com/japan/minimum-wage>

Չինաստանում միջին աշխատավարձը 2015 թ., 2020 թ. համեմատությամբ, աճել է 56.9%-ով (աղյուսակ 2.4):

Աղյուսակ 2.4

Միջին աշխատավարձի մակարդակը Չինաստանում, յուան, 2015-2020 թթ.

Տարեթիվը	Աշխատավարձի չափը
12.2015	5169,08
12.2017	6193,17
12.2018	6871,75
12.2019	7781,9
12.2020	8114,92

Չինաստանի օրենսդրության դրույթների համաձայն՝ օրինական նվազագույն աշխատավարձը կատարած աշխատանքի դիմաց նվազագույն վարձատրությանն է, որը գործատուի կողմից պետք է վճարվի աշխատողին՝ պայմանով, որ վերջինս սովորական աշխատանքային ժամանակահատվածում կամ աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքային ժամանակահատվածում կատարել է նորմալ աշխատանք⁶¹: Նվազագույն աշխատավարձի ստանդարտները սահմանվում են **մարզերի կառավարությունների կողմից**՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են տեղական աշխատողների և նրանց խնամակալության տակ գտնվողների կյանքի նվազագույն արժեքը, քաղաքային բնակչության սպառողական գների ինդեքսը, աշխատողների կողմից վճարվող սոցիալական ապահովագրության և բնակարանային ֆոնդերի վճարները, աշխատողների միջին աշխատավարձը, տեղական տնտեսական զարգացման մակարդակը, տեղական զբաղվածության կարգավիճակը և այլն: Ընդհանուր առմամբ, նվազագույն աշխատավարձի ստանդարտները ներկայացված են երկու՝ նվազագույն աշխատավարձի ամսական ստանդարտի և նվազագույն աշխատավարձի ժամային ստանդարտի տեսքով: Նվազագույն աշխատավարձի ամսական ստանդարտը կիրառվում է լրիվ դրույքով աշխատողների համար, իսկ նվազագույն աշխատավարձի ժամային ստանդարտը կիրառվում է ոչ լրիվ դրույքով աշխատողների համար, ինչպիսիք են կես դրույքով և ժամանակավոր աշխատողները:

Նվազագույն աշխատավարձը չի ներառում արտաժամյա աշխատանքի վարձատրությունը, գիշերային հերթափոխի, ամռանը բարձր ջերմաստիճանի, աշխատանքի հատուկ պայմանների հավելավճարները և սննդի, տրանսպորտի, բնակարանի սուբսիդավորումը:

Չինաստանում տեղական ինքնակառավարման մարմինները, ընդհանուր առմամբ, պարտավոր են իրենց տարածքում նվազագույն աշխատա-

⁶¹ Վերլուծությունը կատարվել է China Briefing կայքէջում բերված նյութերի հիման վրա, <https://www.china-briefing.com/news/minimum-wages-china-2022/>

վարձը թարմացնել մի քանի տարին մեկ, սակայն ունեն նաև աշխատավարձերը տեղական պայմաններին ճկուն հարմարեցնելու հնարավորություն: Մարզերի մեծամասնությունը տարբեր շրջաններում սահմանում է նվազագույն աշխատավարձի տարբեր մակարդակներ՝ կախված շրջանների զարգացման մակարդակից և կյանքի արժեքից: Օրինակ, ավելի բարձր նվազագույն աշխատավարձ է սահմանվում մարզի մայրաքաղաքի և առավել զարգացած քաղաքների համար, այն դեպքում, երբ փոքր քաղաքները և գյուղական վայրերն ընկնում են ցածր աշխատավարձի կարգի տակ: Այսպես, ներկայումս Շահայի 31 մարզերի շրջանում գրանցվել է ամենաբարձր ամսական նվազագույն աշխատավարձը, որը կազմում է 2590 յուան կամ 400 ԱՄՆ դոլար, իսկ Պեկինում ամենաբարձր ժամային նվազագույն աշխատավարձը 25.3 յուան է կամ 3.9 ԱՄՆ դոլար:

2021 թվականից սկսած՝ Չինաստանի ավելի քան 20 մարզերում նվազագույն աշխատավարձի մակարդակը բարձրացրել է: 2022 թ. Շենչժեն և Հենան մարզերն իրենց նվազագույն աշխատավարձի մակարդակները բարձրացրել են հունվարի 1-ից, իսկ Չունցին, Հունանը և Ֆուցզյանը՝ ապրիլի 1-ից:

Աշխատանքային պայմանագրերի մասին օրենքի 20-րդ հոդվածը նախատեսում է, որ փորձաշրջանի ընթացքում աշխատողի աշխատավարձի չափը չպետք է պակաս լինի գործատուի կազմակերպությունում նույն պաշտոնի համար աշխատավարձի նվազագույն չափից կամ աշխատանքային պայմանագրում նշված աշխատավարձի չափի 80%-ից և չպետք է պակաս լինի գործատուի գտնվելու վայրի աշխատավարձի նվազագույն ստանդարտից: Հետևաբար, փորձաշրջան անցնող և կանոնավոր հաճախող աշխատակիցներին ձեռնարկության կողմից վճարվող աշխատավարձը համապատասխան ստանդարտ գումարից ցածր չպետք է լինի: Գործազրկության ապահովագրության նպաստները սովորաբար վճարվում են նվազագույն աշխատավարձի տեղական ստանդարտի 70-80%-ի չափով:

Աշխատավարձերի սահմանման կառուցակարգերը Ռուսաստանի Դաշնությունում

Պետական ծառայողների աշխատավարձը սահմանվում և կարգավորվում է «Ռուսաստանի Դաշնության պետական քաղաքացիական ծառայության մասին» օրենքի շրջանակներում⁶²: Քաղաքացիական ծառայողի աշխատանքի վարձատրությունը կատարվում է դրամական վարձատրության ձևով, որը նրա նյութական ապահովման և մասնագիտական ծառայողական գործունեության խթանման հիմնական միջոցն է⁶³: Վարձատրության դրամական բովանդակությունը ներառում է քաղաքացիական ծառայողի զբա-

⁶² Ст'я Федеральный закон от 27.07.2004 N 79-ФЗ (ред. от 30.12.2021) «О государственной гражданской службе Российской Федерации», http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_48601/

⁶³ Վերլուծությունը կատարվել է http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_48601/a2d9e9bb6-514cddbc04e026a5aeb45b65562c406/ կայքէջում ներկայացված նյութերի հիման վրա:

ղեցրած պաշտոնին համապատասխանող ամսական աշխատավարձը կամ պաշտոնային դրույքաչափը և քաղաքացիական ծառայողին շնորհված ծառայության դասային աստիճանին (քաղաքացիական, արդարադատության դասային աստիճանին կամ դիվանագիտական աստիճանին) համապատասխան ամսական աշխատավարձը, ինչպես նաև ամսական այլ լրացուցիչ վճարներ:

Դաշնային պետական քաղաքացիական ծառայողների դասային աստիճանի պաշտոնային դրույքաչափերը սահմանվում են Ռուսաստանի Դաշնության նախագահի հրամանագրով՝ կառավարության ներկայացմամբ: Պաշտոնեական դրույքաչափերը և պետական քաղաքացիական ծառայողների դասային աստիճանի պաշտոնային դրույքաչափերը սահմանվում են նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

Լրացուցիչ վճարները ներառում են՝

1. քաղաքացիական երկարամյա ծառայության պաշտոնային դրույքաչափի ամենամյա հավելավճարը՝ ըստ ներքոբերյալ սխեմայի.

Քաղաքացիական ծառայության փարիները/ արածը	Տոկոս
1-ից մինչև 5 տարի	10
5-ից մինչև 10 տարի	15
10-ից մինչև 15 տարի	20
15 տարուց քարձը	30

2. քաղաքացիական ծառայության հատուկ պայմանների համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ ամսական հավելավճար՝ այդ դրույքաչափի մինչև 200%-ի չափով,
3. պետական գաղտնիք ներկայացնող տեղեկությունների հետ աշխատանքի համար պաշտոնային դրույքաչափի ամենամյա հավելավճարը՝ օրենսդրությամբ սահմանված չափերով և կարգով,
4. հատուկ կարևոր և բարդ առաջադրանքների կատարման համար պարգևավճարները,
5. ամենամյա դրամական խրախուսումը,
6. ամենամյա վճարովի արձակուրդի տրամադրման միանվագ վճարը և քաղաքացիական ծառայողների վարձատրության հիմնադրամի միջոցների հաշվին վճարվող նյութական օգնությունը: Քաղաքացիական ծառայողներին վճարվող ամսական դրամական խրախուսման չափերը սահմանվում են դաշնային պետական մարմինների կողմից՝ նախագահի տարբերակված հրամանագրերով:

Դաշնային քաղաքացիական ծառայության պաշտոններում զբաղվածների դրամական վարձատրության դրույքաչափերը տարեկան մեծանում են (ինդեքսավորվում են) յուրաքանչյուր տարվա դաշնային բյուջեի մասին օրենքին համապատասխան՝ հաշվի առնելով գնաճի (սպառողական գների) մակարդակը:

Ըստ ՌԴ աշխատանքային օրենսդրության (ԱՕ) հոդված 129-ի՝ աշխատավարձի չափը որոշվում է աշխատողի որակավորման մակարդակով, ինչպես նաև բարդությամբ, քանակով, որակով, աշխատանքի իրականացման պայմաններով: Աշխատավարձի մեջ ընդունված է ներառել նաև փոխհատուցման և խթանող բնույթի այլ վճարումներ: Աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված է նաև աշխատավարձի վճարում՝ չաշխատած ժամանակի համար⁶⁴:

Ռուսաստանի Դաշնության սուբյեկտում նվազագույն աշխատավարձի չափը կարող է սահմանվել համապատասխան սուբյեկտի տարածքում աշխատողների համար՝ բացառությամբ դաշնային բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների աշխատողների⁶⁵: Ոչ մի կազմակերպություն իրավունք չունի ամսական աշխատավարձից պակաս աշխատավարձ վճարել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մասնագետն աշխատում է համատեղությամբ կամ ոչ լրիվ աշխատանքային ռեժիմով: Նվազագույն աշխատավարձի չափն օգտագործվում է պետական հարկերի, վճարների, տուգանքների չափերի հաշվարկման համար: Աշխատանքի վարձատրության նվազագույն չափը դաշնային օրենքով սահմանվում է ՌԴ ողջ տարածքում միաժամանակ և չի կարող ցածր լինել աշխատունակ բնակչության կենսապահովման նվազագույն մեծությունից: Նվազագույն աշխատավարձի մասին տարածաշրջանային համաձայնագրի սախագծի մշակումը և դրա կնքումն իրականացվում է ՌԴ համապատասխան սուբյեկտի սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորման եռակողմ հանձնաժողովի կողմից՝ Աշխատանքային օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված կարգով:

2021 թ. հունվարի 1-ից գործում է կենսապահովման նվազագույնի և նվազագույն աշխատավարձի հաշվարկման նոր կարգ: Այժմ նվազագույն աշխատավարձի մեծությունը կախված է միջին աշխատավարձից և նախորդ տարվա միջին եկամտից: Այն կազմում է Ռուսաստանի վիճակագրական կոմիտեի հաշվարկած միջին աշխատավարձի 42%-ը: Նվազագույն աշխատավարձի չափը չի կարող, ընդհանուր առմամբ, ցածր լինել աշխատունակ բնակչության կենսապահովման նվազագույնից:

2022 թ. նվազագույն աշխատավարձը երկու անգամ ավելացել է՝ հունվարի 1-ից և հունիսի 1-ից: Նոր նվազագույն աշխատավարձը հիմնականում կազմում է 15279 ռուբլի⁶⁶: Սակայն, հատուկ բնակլիմայական պայմաններ ունեցող, այդ թվում՝ հյուսիսային շրջաններում և դրանց հավասարեցված

⁶⁴ Ст'у Трудовой кодекс Российской Федерации, Принят Государственной Думой 21 декабря 2001 года, одобрен Советом Федерации 26 декабря 2001 года, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34683/

⁶⁵ Ст'у ТК РФ Статья 133.1. Установление размера минимальной заработной платы в субъекте Российской Федерации. (Введена Федеральным законом от 20.04.2007 N 54-ФЗ), <http://rulaws.ru/tk/CHAST-TRETYA/Razdel-VI/Glava-21/Statya-133/>

⁶⁶ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_291114/

տարածքներում աշխատանքի դիմաց հաշվեգրվող տարածաշրջանային գործակիցների և տոկոսային հավելումների արդյունքում նվազագույն աշխատավարձի մակարդակները տարբեր են: Օրինակ, Մոսկվայում այն կազմում է 23508 ռուբլի, Մոսկվայի մարզում՝ 17930 ռուբլի, Սանկտ Պետերբուրգում՝ 21500 ռուբլի, Լենինգրադի մարզում՝ 15950 ռուբլի⁶⁷:

Աշխատավարձը կարող է նվազագույն աշխատավարձից պակաս լինել, եթե աշխատողն ունի ոչ լիարժեք զբաղվածություն կամ աշխատում է համատեղությամբ: Եթե աշխատողի աշխատավարձը, այնուամենայնիվ, նվազագույն սահմանված աշխատանքի վարձատրության նվազագույն չափից փոքր է, ապա գործատուն պետք է լրացնի այն մինչ նվազագույն աշխատավարձի մեծությունը:

Համաձայն ՌԴ ՔՕ 5.27-րդ հոդվածի 6-րդ մասի՝ եթե աշխատողները նվազագույն աշխատավարձից ցածր են վարձատրվում, ապա Աշխատանքային տեսչությունը սահմանում է վարչական տուգանք, որը պաշտոնատար անձանց համար կազմում է 10000-ից մինչև 20000 ռուբլի, առանց իրավաբանական անձի կարգավիճակի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց համար՝ 1000-ից մինչև 5000 ռուբլի և իրավաբանական անձանց համար՝ 30000-ից մինչև 50000 ռուբլի: Կրկնակի խախտման համար պաշտոնատար անձանց տուգանքը կազմում է 20000-30000 ռուբլի կամ որակազրկում՝ 1-3 տարի ժամկետով, առանց իրավաբանական անձի կարգավիճակի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողներից՝ 10000-30000 ռուբլի, իրավաբանական անձանցից՝ 50000-100000 ռուբլի տուգանք:

Ըստ ՌԴ ԱՕ 133.1 հոդվածի, բացի դաշնային նվազագույն աշխատավարձից, տարածաշրջանները ևս կարող են սահմանել իրենց նվազագույն աշխատավարձերը: Այդ դեպքում դրանց մակարդակը որոշվում է՝ հաշվի առնելով համապատասխան տարածաշրջանում ձևավորված սոցիալ-տնտեսական պայմանները և աշխատունակ բնակչության կենսապահովման նվազագույն մեծությունը:

2022 թ. Ռուսաստանում կենսապահովման նվազագույնը աշխատունակ բնակչության համար սահմանվել է 13793 ռուբլի, թոշակառուների համար՝ 10882 ռուբլի և երեխաների համար՝ 12274 ռուբլի⁶⁸: ՌԴ սուբյեկտում նվազագույն աշխատավարձի չափը չի կարող ցածր լինել դաշնային օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձից: Ընդ որում, տարածաշրջանային իշխանություններն իրավունք ունեն նվազագույն աշխատավարձը հավասարեցնել դաշնային ստանդարտին կամ սահմանել ավելի բարձր:

⁶⁷ Ավելի մանրամասն՝ նույն տեղում:

⁶⁸ <https://ria.ru/20211121/mrot-1760047042.html>

Աշխատավարձերի սահմանման կառուցակարգերը Բելառուսի Հանրապետությունում

Բելառուսում 2020 թ. հունվարի 1-ից մշակվել և ներդրվել է բյուջետային աշխատողների աշխատավարձերի հաշվարկման նոր համակարգ, որի իրավական հիմքը նախագահի՝ «Բյուջետային կազմակերպությունների աշխատողների վարձատրության մասին» 2019 թ. հունվարի 18-ի թիվ 27 հրամանագիրն է:

Համաձայն աշխատավարձի հաշվարկման նոր համակարգի՝ 27 սակագնային փաթեթների փոխարեն բյուջետային աշխատողների բոլոր կատեգորիաների համար ներդրվել է 18 կարգ: Հաշվարկման համար հիմք է հանդիսացել ոչ թե առաջին կարգի, այլ բազային դրույքաչափը, որը մոտ է կենսապահովման նվազագույն բյուջեին⁶⁹: Ըստ այդմ՝ 2022 թ. հունվարի 1-ից աշխատողների վարձատրության բազային դրույքաչափն ավելացել է մինչև 207 ռուբլի (նախկինում դրույքաչափը կազմում էր 198 ռուբլի): Նշված փոփոխությունը նախատեսված էր Նախարարների խորհրդի 2021 թ. դեկտեմբերի 21-ի թիվ 738 որոշմամբ: Իսկ 2022 թ. մայիսի 1-ից այն կազմում է 210 ռուբլի: Կենսապահովման նվազագույն ընթացիկ բյուջեն 311.15 ռուբլի է:

Բազային դրույքաչափը կառավարության կողմից սահմանվող մեծություն է, որի հիման վրա, գործակիցների և հավելավճարների համակարգի միջոցով, ձևավորվում է բյուջետային ոլորտի աշխատողների աշխատավարձը: Նախատեսվում է դրույքաչափը վերանայել յուրաքանչյուր տարի հունվարի 1-ից՝ հիմք ընդունելով սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումը:

Հայտարարվել է նաև, որ բյուջետային ոլորտում իրական աշխատավարձերի իջեցում չի թույլատրվում: Բազային դրույքաչափը կանոնակարգում է բյուջետային կազմակերպությունների, ինչպես նաև այն կազմակերպությունների աշխատողների վարձատրությունը, որոնք հավասարեցվում են բյուջետային աշխատողների վարձատրությանը:

Բացի ընդհանուր կանոններից, նոր համակարգը աշխատավարձի հաշվարկման համար սահմանում է կոնկրետ թվեր:

2020 թ. դեկտեմբերի 22-ին թիվ 482 հրամանագրով «Բյուջետային կազմակերպությունների աշխատողների վարձատրության մասին» 2019 թ. հունվարի 18-ի թիվ 27 հրամանագրում կատարվել են փոփոխություններ, ըստ որի՝ 2021 թ. հուլիսի 1-ից պարզևավճարների չափն ավելացել է 5-20%-ի չափով: Միաժամանակ, 2022 թ. հունվարի 1-ից ավելացել է առողջության վերականգնման միանվագ վճարման չափը՝ 0,5-1 աշխատավարձի չափով:

Սահմանվել են որոշակի չափորոշիչներ, ըստ որոնց՝

- սակագների միջին տարբերությունը չպետք է լինի 6%-ից պակաս,

⁶⁹ Վերլուծությունը կատարվել է Բելառուսի ֆինանսների նախարարության կայքէջում բերված նյութերի հիման վրա, <https://myfin.by/wiki/term/bazovaya-stavka>

- բյուջեից կատարվող հավելավճարը պետք է կազմի աշխատավարձի 20%-ը,
- նյութական օգնությունը պետք է կազմի աշխատավարձի 0,3 մասը,
- առողջության վերականգնման վճարները՝ տարեկան 0,5 աշխատավարձ, իսկ 2022 թ. հունվարի 1-ից՝ մեկ աշխատավարձ:

Վերջին երեք վճարումները պարտադիր բնույթ չունեն:

Հստակ սահմանվել են նաև ստաժի հավելավճարների չափերը.

- 10% - նրանց համար, ովքեր 5 տարվա աշխատանքային ստաժ չունեն,
- 15 % - մինչև 10 տարի,
- 20% - մինչև 15 տարի,
- 30% - ավելի քան 15 տարի աշխատանքային ստաժ ունեցողների համար:

Բելառուսի Հանրապետության Ազգային վիճակագրական կոմիտեի (Բելստատ) տվյալներով՝ երկրում միջին աշխատավարձը 2022 թ. մայիսի դրությամբ կազմել է 1573.4 ռուբլի, գործող փոխարժեքով՝ մայիսի միջին աշխատավարձը՝ 606.1 ԱՄՆ դոլար⁷⁰: Տարվա սկզբից Բելառուսում գրանցվել է միջին աշխատավարձի աճ, ապրիլին, նախորդ ամսվա համեմատությամբ, գրանցվել է 2.2% անկում: Ներկայումս նշված ցուցանիշը կրկին աճում է:

Միջին աշխատավարձը միշտ հաշվարկվում է ռուբլով, որը Ազգային վիճակագրական կոմիտեի իրավասությունն է: Աշխատավարձերը հաշվարկվում են առանց հանելու 13% եկամտահարկը և 1% բնակչության սոցիալական պաշտպանության հիմնադրամին վճարումները: Բացի նշված վճարումներից, Բելառուսում միջին աշխատավարձը ներառում է նաև այլ բարիքներ, որոնցից աշխատողներն օգտվում են, բայց դրանք չեն համարվում աշխատավարձի մաս: Դրանք են աշխատողներին տրվող անվճար սնունդը, ձեռնարկության հաշվին առողջարանային ուղեգրերը, տրանսպորտային ծախսերի փոխհատուցումը, ծառայողական բնակարանների վճարը և այլն:

Ավելի օբյեկտիվ է ոչ թե միջին աշխատավարձի, այլ մեղիան վաստակի ցուցանիշը⁷¹:

Բելառուսի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի մեծությունը տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում նույնն է: Դա համարվում է աշխատողների շահագործումը բացառող սոցիալական երաշխիք: Նվազագույն աշխատավարձի տարեկան մեծությունը ձևավորվում է բազմաթիվ գործոնների ազդեցությամբ: Կառավարությունը հաշվի է առնում նվազագույն կենսապահովման ընթացիկ բյուջեն, երկրում միջին աշխատավար-

⁷⁰ <https://myfin.by/wiki/term/srednyaya-zarplata-v-belarusi>

⁷¹ Եթե մեղիան աշխատավարձից հանվեն 13% եկամտահարկը և Բնակչության սոցիալական պաշտպանության հիմնադրամի 1% վճարումները, ապա կստացվի այն գումարը, որն առձեռն ստանում է աշխատողը: Բելառուսի Հանրապետությունում հիմնական ցուցանիշ է համարվում հենց միջին աշխատավարձը, իսկ մեղիան աշխատավարձը հաշվարկվում է միայն ըստ առանձին ամիսների, սովորաբար՝ տարեկան երկու անգամ:

ծի մակարդակը, գնաճի տեմպերը, գործազրկության մակարդակը, բելառուսական գործատուների ֆինանսական հնարավորությունները:

Նվազագույն աշխատավարձի մեծությունը սահմանվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին: Ընդ որում, տարվա ընթացքում գումարը կարող է մի քանի անգամ ինդեքսավորվել (եթե գնաճը գերազանցում է կանխատեսվող մակարդակը): Նվազագույն աշխատավարձի մեծությունը հրապարակվում է հաջորդ տարվա համար՝ ԲՀ նախարարների խորհրդի որոշմամբ: Ինդեքսավորման ամենամեծ քանակն արձանագրվել է 2012, 2013 և 2015 թվականներին: Այդ տարիներին նվազագույն աշխատավարձն ինդեքսավորվել է տարեկան 3 անգամ: 2022 թ. հունվարի 1-ից Բելառուսում նվազագույն աշխատավարձը կազմում էր 457 ռուբլի, իսկ մարտ ամսին ցուցանիշը ինդեքսավորվել է և կազմում է 479.83 ռուբլի⁷²: Բելառուսի Հանրապետության «Նվազագույն աշխատավարձի սահմանման և բարձրացման կարգի մասին» օրենքի համաձայն⁷³, բացի ամսական նվազագույն աշխատավարձից, սահմանվում է նաև ժամային նվազագույն աշխատավարձ:

Աշխատավարձերի սահմանման կարգը Վրաստանում

Վրաստանում բյուջետային աշխատողների աշխատավարձի սահմանումն ու կարգավորումն իրականացվում է «Հանրային հաստատությունում աշխատանքի վարձատրության մասին» օրենքի համաձայն⁷⁴: Օրենքը կարգավորում է հանրային հաստատություններում աշխատող անձանց վարձատրությունը, վարչական պայմանագրով աշխատող անձանց և աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց թվաքանակի որոշման հարցերը, սահմանում է կես դրույքով, գիշերային ժամերին, հանգստյան և տոն օրերին, առողջության համար վտանգ պարունակող պայմաններում աշխատող համապատասխան անձանց վարձատրության կարգը և սահմանում է ժամանակավոր վերապահված գործառնությունների կատարման համար աշխատանքի վարձատրության տրամադրման կարգն ու պայմանները:

Օրենքի գործողությունը տարածվում է՝

- 1) պետական ծառայողների,
- 2) պետական-քաղաքական պաշտոնատար անձանց,
- 3) քաղաքական պաշտոնատար անձանց,
- 4) պրոֆեսիոնալ հանրային պաշտոնյաների,
- 5) վարչական և աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց վրա:

Դասի, կարգի համար հավելավճարը վճարվում է պաշտոնյայի դասի շնորհման մասին անհատական վարչաիրավական ակտի հիման վրա, իսկ

⁷² <https://take-profit.org/en/statistics/wages/belarus/>

⁷³ St'u Закон Республики Беларусь от 17 июля 2002 г. № 124-З «Об установлении и порядке повышения минимальной заработной платы», <https://mshp.gov.by/documents/trud/d06c757c4b797a33.html>

⁷⁴ <https://matsne.gov.ge/ka/document/download/3971683/2/ru/pdf>

նախատեսված դրամական պարգևատրումը վճարվում է անհատական վարչաիրավական ակտի հիման վրա, որը պետք է բավարարի Վրաստանի Ընդհանուր վարչական օրենսգրքի պահանջները և որում պետք է նշվեն դրամական պարգևատրման հիմքը և չափը:

Նույն օրենքը կարգավորում է պաշտոնատար անձանց բազային աշխատավարձի սահմանման կարգը, ըստ որի՝ Վրաստանի պետական բյուջեի մասին օրենքով, համապատասխան տարվա համար, սահմանվում է բազային պաշտոնային անվանական դրույքաչափը, որը բազմապատկվում է օրենքով սահմանված համապատասխան գործակցով: Դիտարկվող օրենքով կարգավորվում են պետական պաշտոնային աշխատավարձը և աշխատավարձի հավելավճարի սահմանման պայմանները: Դրանք են՝ արտաժամյա աշխատանքը և/կամ լրացուցիչ գործառնությունների կատարումը, այդ թվում՝ գիշերային ժամերին, հանգստյան/տոն օրերին և առողջության համար վտանգ պարունակող աշխատանքի պայմանները:

Օրենքի հոդված 10-ում ներկայացված են պաշտոնային դասին համապատասխանող հավելավճարի տոկոսային չափը՝ ըստ ներքոբերյալ աղյուսակի:

Պաշտոնային դասը	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Դասի հավելավճարի դրույքաչափը	1%	2%	3%	4%	5%	6%	7%	8%	9%	10%	12%	15%

Վարչական պայմանագրով աշխատող անձանց՝ Վրաստանի նախագահի և Կառավարության վարչակազմերի, Վրաստանի նախարարությունների և պետական նախարարների աշխատակազմերի պաշտոնային առավելագույն դրույքաչափերն արտացոլվում են համապատասխան հանրային հաստատության հաստիքացուցակում և չպետք է գերազանցեն պաշտոնային դրույքաչափը: Դրույքաչափը հաշվարկվում է հանրային հիմնարկի սկզբնական կառուցվածքային միավորի համար սահմանված աղյուսակի հիման վրա:

Ընդհանուր առմամբ, Վրաստանում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրերի հիման վրա, որոնք կարգավորվում են Աշխատանքային օրենսդրությամբ⁷⁵: Կոլեկտիվ պայմանագիրը սահմանում է աշխատանքի պայմանները, կարգավորում է գործատուի և աշխատողի, մեկ կամ ավելի գործատուների, մեկ կամ ավելի գործատուների միավորումների, մեկ կամ ավելի աշխատողների միավորումների միջև հարաբերությունները:

Աշխատանքի վարձատրության ձևը և չափը սահմանվում են աշխատանքային պայմանագրով: Աշխատանքի վարձատրությունը տրվում է ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ: Գործատուն պարտավոր է աշխատավարձի վճարման ուշացման յուրաքանչյուր օրվա համար աշխատողին վճարել

⁷⁵ <https://matsne.gov.ge/ru/document/view/1155567?publication=20>

Հայաստանի Հանրապետություն

Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի իրավունքն ամրագրված է ՀՀ աշխատանքային օրենսդրությունում, որի նպատակը ֆիզիկական անձանց աշխատանքային իրավունքների և ազատությունների պետական երաշխիքների սահմանումն է, աշխատանքի բարենպաստ պայմանների ստեղծմանը նպաստելը և աշխատողների ու գործատուների իրավունքներն ու շահերը պաշտպանելը⁸⁰: Աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են կոլեկտիվ և անհատական աշխատանքային պայմանագրերի հիման վրա⁸¹:

Աշխատանքի վարձատրությունը օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է⁸²: Այն ներառում է հիմնական և լրացուցիչ աշխատավարձը: Աշխատանքի վարձատրության առումով ՀՀ-ում սեռային խտրականություն գոյություն չունի: Աշխատողի աշխատավարձը կախված է աշխատողի որակավորումից, աշխատանքի պայմաններից, որակից, քանակից, բարդությունից:

Աշխատավարձի ամսական և ժամավճարի նվազագույն չափը սահմանվում է օրենքով, որի մեջ չեն ներառվում հարկերը, նպատակային սոցիալական վճարները, հավելումները, հավելավճարները, պարգևատրումները և խրախուսական այլ վճարումներ⁸³: Աշխատավարձի ինդեքսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Աշխատանքային օրենսդրությունը կարգավորում է նաև աշխատանքի վարձատրության առնչությամբ գործատու-աշխատող հարաբերությունները՝ ծանր, վնասակար, առանձնապես ծանր և առանձնապես վնասակար աշխատանքների կատարման դեպքում, հանգստյան և ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին, արտաժամյա աշխատանքի և գիշերային աշխատանքի, պարապուրդի ժամանակ, ոչ լրիվ աշխատաժամանակի վճարման, աշխատաժամանակի կրճատ տևողության, խտտան արտադրանքի, աշխատանքային նորմաները չկատարելու և հատուկ դեպքերում⁸⁴:

Աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածով սահմանվում է միջին աշխատավարձը, որի համաձայն՝ միջին աշխատավարձի չափը որոշելու բոլոր դեպքերի համար սահմանվում է հաշվարկման միասնական կարգ: Միջին աշխատավարձի հաշվարկման համար հաշվի են առնվում **աշխատանքի վարձատրության բոլոր տեսակները** (հիմնական աշխատավարձ, լրացու-

Նիդեռլանդները նույնպես կիրառում է կենսաթոշակային տարիքի և կյանքի սպասվող տևողության միջև հարմարեցման մեխանիզմը՝ այն համադրելով սահմանված կենսաթոշակի բաղադրիչի ֆինանսական հաշվեկշռման մեխանիզմի հետ: Կենսաթոշակի մեծության բարձրացումը և վճարման ենթակա կենսաթոշակի ինդեքսավորումը ուղղակիորեն կապված են ֆինանսավորման գործակիցների (ֆոնդերի ընթացիկ արժեքի և ապագա կանխատեսվող պարտավորությունների հարաբերությունը) հետ: Կայուն թերֆինանսավորման դեպքում ինդեքսավորումը կարող է հետաձգվել, իսկ կենսաթոշակի մեծությունը կարող է կրճատվել: Կենսաթոշակային հիմնադրամը, ըստ ՍԳԻ աճի, կարող է ինդեքսավորել և բարձրացնել կենսաթոշակը միայն այն դեպքում, եթե ֆինանսավորման գործակիցը գերազանցում է որոշակի սահմանը, որը տարբերվում է ըստ կենսաթոշակային ֆոնդերի: Եթե գործակիցը գերազանցում է 110%-ը, ապա կենսաթոշակը կարող է բարձրանալ և ինդեքսավորվել ավելի քիչ գործակցով, քան ՍԳԻ աճն է: Եթե ֆինանսավորման գործակիցը 110%-ից փոքր է, ապա կենսաթոշակային եկամուտներն ու ծրագրային վճարները կարող են սառեցվել: 5 տարուց ավելի 104.2%-ից ցածր ֆինանսավորման գործակցի դեպքում ծրագրային վճարները և կենսաթոշակային եկամուտները կրճատվում են: Այդ դեպքում ֆինան-

սավորման գործակիցը պետք է վերադարձնել 104.2% շեմին՝ առավելագույնը 10 տարիների ընթացքում այսպիսի կրճատումների հաշվին¹²¹:

Էստոնիայում հարմարեցումն իրականացվում է ըստ կենսաթոշակային տարիքի և կյանքի սպասվող տևողության միջև կապի՝ միևնույն ժամանակ աշխատանքային տարիքի բնակչության թվաքանակի փոփոխության դեպքում նպաստների մեծությունը հարմարեցնելով ընդհանուր հատկացումների և ՀՆԱ-ի փոփոխություններին:

Շվեդիայում պայմանական սահմանված հատկացումների բաղադրիչի դեպքում կիրառվում է ավտոմատ հաշվեկշռման մեխանիզմ, ըստ որի՝ հաշվեկշռման գործակիցը հաշվարկվում է որպես ընդհանուր կատարվելիք հատկացումների մեծության և կենսաթոշակի պահուստային ֆոնդում պահուստի շուկայական արժեքի հանրագումարի ու կենսաթոշակային պարտավորությունների հարաբերություն: Եթե առկա է պակասուրդ, ապա պայմանական տոկոսադրույքը կրճատվում է աշխատավարձի աճից ցածր, սահմանափակվում են պայմանական հաշիվներում կուտակումները և կրճատվում վճարման ենթական կենսաթոշակների ինդեքսավորումը: 2017 թվականից սկսած՝ պայմանական տոկոսադրույքի և կենսաթոշակի ինդեքսավորման դրույքաչափի կրճատումը տարածվում է եռամյա ժամկետի վրա¹²²:

Նորվեգիայում նվազագույն և երաշխավորված կենսաթոշակը հարմարեցվում է նաև ըստ կյանքի սպասվող տևողության: Ընդ որում, այն չի կարող հարմարեցվել այնպես, որ եկամտից կախված կենսաթոշակից ավելի փոքր լինի: Այդ պատճառով սպասվող տարիների համար այն հարմարեցվում է եկամտից կախված կենսաթոշակից ավելի բարձր կամ համարժեք մեծություն ստանալու պայմանով: Հարմարեցման պայմանը վերաբերում է միայն 1942 թվականից հետո ծնվածներին, եթե նրանք մինչև 2011 թ. հունվարի մեկը կենսաթոշակ չեն ստացել:

Ե. Կենսաթոշակային հատկացումների դրույքաչափը

Սահմանված հատկացումներով համակարգերի համեմատության հաջորդ փոփոխականը կենսաթոշակային հատկացումների դրույքաչափն է: Համեմատվող երկրներից ամենամեծ պարտադիր սահմանված հատկացումների համակարգն ունի Ռուսաստանը՝ աշխատողի տարեկան եկամտի 22%-ը (16%-ը աշխատողի անհատական հաշվի դրույքաչափն է, 6%-ը՝ ապահովագրական կենսաթոշակինը): Նորվեգիայում գործատուներն իրենց աշխատողների կենսաթոշակային եկամտի 18,1%-ը պետք է փոխանցեն եկամտային կենսաթոշակի և նվազագույնը 2%-ը՝ սահմանված հատկացումներով սխեմայի շրջանակներում: Եթե գործատուն առաջարկում է սահմանված կենսաթոշակի սխեման, ապա կենսաթոշակի մեծությունը պետք է առնվազն

¹²¹ St'u Pensions at a Glance 2021, OECD AND G20 INDICATORS, OECD (2021), OECD Publishing, Paris, էջ 103:

¹²² St'u նույն տեղը:

հավասար լինի այն կենսաթոշակի մեծությանը, որը կարելի էր ակնկալել 2% պարտադիր հատկացումներ կատարելու դեպքում: Շվեդիայում կենսաթոշակային եկամտի 16%-ը վճարվում է եկամտային կենսաթոշակի, իսկ 2,5%-ը՝ սահմանված հատկացումների համակարգին: Չիլիում և Չինաստանում դրույքաչափը համեմատաբար փոքր է՝ համապատասխանաբար 10% և 8%: Դանիայում խնայողությունների վրա հիմնված լրացուցիչ կենսաթոշակային սխեմայի դեպքում հատկացումները հաստատուն մեծություն են և կախված են աշխատաժամերից: Հատկացումների 2/3-ը կատարում է գործատուն, իսկ 1/3-ը՝ աշխատողը: Հատկացումները հարմարեցվում են սոցիալական գործընկերների համաձայնությամբ՝ որպես կոլեկտիվ պայմանագրերի մաս: Վրաստանում աշխատողը, գործատուն և պետությունը վճարում են հավասար՝ աշխատողի հարկվող եկամտի 2-ական %-ի չափով:

Էստոնիայում սահմանված հատկացումներով համակարգի դեպքում աշխատողը վճարում էր իր համախառն եկամտի 2%-ը, իսկ պետությունը՝ նրա եկամտից զանձվող սոցիալական հարկի (33%) 4%-ը: Դա նշանակում է, որ այդ պետական կենսաթոշակի 4%-ը ծառայում էր որպես անձի ապագայի ապահովագրություն, և այդ մասով պետական կենսաթոշակ չի վճարվում: 2021 թ. հունվարից ուժի մեջ մտած փոփոխությունների համաձայն՝ 1982 թվականից հետո ծնվածների համար կամավոր հատկացումների համակարգին անցումը ենթադրում է, որ սահմանված հատկացումների համակարգին կատարվող հատկացումների 6%-ից 4%-ը մնում է բաշխողական համակարգում, և այն 2023-2024 թթ. վճարելու է պետությունը, իսկ մնացյալ 2%-ը նվազեցնում է պարտադիր կենսաթոշակային հատկացումների դրույքաչափը 22%-ից մինչև 20%:

գ. Հարկվող եկամտի վերին շերտ

Սահմանված հատկացումների համակարգի դեպքում պետությունը կարող է սահմանել նաև կենսաթոշակային եկամուտների վերին շերտ: Այդ դեպքում բարձր եկամուտ ունեցողները կենսաթոշակային համակարգին հատկացումներ կատարում են ոչ իրենց ամբողջ եկամտի չափով: Վերին շերտը կարող է վերաբերել ինչպես հատկացումների, այնպես էլ կենսաթոշակի մեծությանը: Բարձր շերտը կամ դրանց բացակայությունը ենթադրում են, որ բարձր եկամտով աշխատողներն ունեն բարձր փոխարինման դրույքաչափ և կամավոր կենսաթոշակային համակարգերին անդամակցության դրդապատճառներ չունեն: Համեմատվող երկրներից Դանիայում, Էստոնիայում և Նիդեռլանդներում վերին շերտը բացակայում է: Սահմանված հատկացումներով մասնավոր համակարգի դեպքում վերին շերտն ավելի բարձր է, քան պետականի դեպքում: Օրինակ, Չիլիում այն կազմում է միջին եկամտի 272%-ը, Նորվեգիայում՝ 193%-ը: Համեմատության համար նշենք, որ Նորվեգիայում սահմանված հատկացումներով պետական համակարգի դեպքում վերին շերտը 114% է: Նորվեգիայում, նոր օրենսդրության համաձայն, պետա-

կան կենսաթոշակի հաշվեգրման ենթակա եկամուտ է համարվում երաշխիքային նպաստին 7,1 անգամ գերազանցող կամ դրանից փոքր տարեկան եկամուտը՝ 111477 NOK, իսկ մասնավոր կենսաթոշակի համակարգի դեպքում՝ երաշխիքային նպաստին 12 անգամ գերազանցող եկամտից փոքր տարեկան եկամուտը¹²³: Շվեդիայում պետական կենսաթոշակային երկու համակարգերի դեպքում վերին շերտը 116% է, իսկ մասնավորի դեպքում՝ բացակայում է: Այլ կերպ ասած՝ այդ շերտը հավասար է բազային եկամտի 8,07-ապատիկին և 2021 թ. հավասար է եղել 550374 SEK-ի, իսկ 2022 թ.՝ 572970 SEK-ի¹²⁴:

Բելառուսում միջին աշխատավարձի 130%-ից ցածր աշխատավարձի դեպքում դրա 10%-ը հաշվի է առնվում ամբողջությամբ, իսկ հաջորդող 10%-ները համապատասխանաբար 90, 80, 70, 60, 50, 40, 30, 20 և 10%-ի չափով: Միջին աշխատավարձի 130-140%-ի չափով աշխատավարձի դեպքում (մինչև 500%՝ 36 տարի և ավելի ստաժ ունեցող տղամարդկանց և 31 տարի և ավելի ստաժ ունեցող կանանց դեպքում) այն հաշվի է առնվում 10%-ի չափով¹²⁵:

Է. Վաղ կենսաթոշակի անցնելու մեխանիզմը

Տարբեր երկրների կենսաթոշակային համակարգերը հնարավորություն են տալիս ավելի վաղ տարիքում անցնելու թոշակի, և այս համատեքստում տարբերվում են նորմալ և վաղ կենսաթոշակային տարիքները: Նորմալ կենսաթոշակի անցնելու դեպքում թոշակատուն ստանում է ամբողջական կենսաթոշակ՝ առանց տույժերի: Վաղ կենսաթոշակի անցնելու դեպքում սահմանվում են թոշակի տույժեր՝ դրանք հարմարեցնելու ավելի երկար կենսաթոշակային ժամկետի հետ: Համեմատվող երկրներից ամենաբարձր կենսաթոշակային տարիք սահմանված է Նորվեգիայում՝ 67 տարեկանը, և Դանիայում՝ 65,5 տարեկանը, իսկ ամենացածրը՝ Չինաստանում՝ համապատասխանաբար 60 և 55 տարեկան, և Ռուսաստանում՝ համապատասխանաբար 61,5 և 56,5 տարեկան: Հաջորդ ցածր շերտը Հայաստանում, Բելառուսում և Էստոնիայում է՝ համապատասխանաբար 63, 63 (կանանց համար 58 տարեկանը) և 63,8 տարեկանը: Շվեդիայում և Չիլիում շերտը 65 տարեկանն է, Վրաստանում տղամարդկանց համար՝ 65-ը, իսկ կանանց համար՝ 60-ը: Չիլիում սահմանված հատկացումների համակարգի իրավասության տարիքը կանանց համար 60-ն է, սակայն նրանք թիրախավորված համակարգից կենսաթոշակ ստանալու իրավունք մինչև 65 տարեկանը չունեն, այդ իսկ պատճառով 65-ն է ներկայացվում որպես նորմալ կենսաթոշակային տարիք:

Կյանքի սպասվող տևողության աճի կանխատեսումների համատեքստում աշխարհի շատ երկրներ նախատեսում են նաև կենսաթոշակային տա-

¹²³ <https://www.nav.no/alderspensjon#fodt-1963-eller-senere>

¹²⁴ <https://www.skatteverket.se/privat/skatte/arbetaochinkomst/pensionsgrundandeinkomstpgi.4.4f3d00a710-cc9a6c9c80008300.html>

¹²⁵ <https://etalonline.by/document/?regnum=v19201596>

րիքի շարունակական աճ: Օրինակ, Դանիայում մինչև 2030 թվականը այն հասնելու է 68 տարեկանի, ՌԴ-ում մինչև 2028 թվականը տղամարդկանց համար՝ 65, իսկ կանանց համար՝ 60 տարեկանի, Էստոնիայում՝ մինչև 2026 թվականը 65 տարեկանի, Նիդեռլանդներում մինչև 2024 թվականը՝ 67 տարեկանի:

Վաղ կենսաթոշակի անցնելու հնարավորություն հիմնականում տալիս են սահմանված հատկացումներով և միավորներով համակարգերը՝ ենթադրելով ամբողջական ավտոմատ անուիտետով ճշգրտում՝ ըստ կենսաթոշակային տարիքի: Որոշ երկրներ այս դեպքում սահմանում են նաև տույժեր¹²⁶:

Միավորներով կենսաթոշակային համակարգեր կիրառող ՌԴ-ում և Էստոնիայում վաղ կենսաթոշակի անցնելու համար պահանջվում է հատկացումներ կատարելու որոշակի ժամանակահատված: ՌԴ-ում վաղ կենսաթոշակի անցնելու հնարավորություն ունեն միայն առողջությանը վնասակար աշխատանքային միջավայրում որոշակի տարի աշխատած անձինք: Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շրջանակներում մինչև 2028 թվականը կենսաթոշակային տարիքի բարձրացման (տղամարդկանց համար՝ 65 տարեկանը, կանանց համար՝ 60) հանգամանքը հաշվի առնելով՝ օրենքը հնարավորություն կտա նորմալ կենսաթոշակային տարիքից մինչև 2 տարի առաջ անցնել կենսաթոշակի՝ տղամարդկանց համար առնվազն 42 տարի, կանանց համար՝ 37 տարի հատկացումների դեպքում, սակայն ոչ վաղ քան 60 տարեկանը տղամարդկանց և 55 տարեկանը՝ կանանց դեպքում: Էստոնիայում ժամկետից շուտ կենսաթոշակի կարելի է անցնել նորմալ կենսաթոշակային տարիքից առավելագույնը 5 տարի շուտ և առավելագույնը 40 տարի հատկացումներ կատարելու դեպքում: Նույնատիպ պահանջ ներկայացվում է Դանիայում. 16 տարեկանից մինչև 61 տարեկան հասակում՝ 42, 43 կամ 44 տարի աշխատելու դեպքում թույլատրվում է համապատասխանաբար 1, 2 կամ 3 տարի շուտ թոշակի անցնել՝ ստանալով ամբողջական հիմնական թոշակ: Վաղ կենսաթոշակի համակարգը թույլ է տալիս առնվազն 20-25 տարի լրիվ դրույքով որոշակի մասնագիտություններով և իրենց վերջին աշխատատեղում 15 ժամից ավելի աշխատելու ոչ ունակ անձանց անցնել վաղ կենսաթոշակի: Վաղ կենսաթոշակի անցնելու համար Էստոնիայում և Դանիայում տույժ է սահմանված համապատասխանաբար տարեկան 5.1 և 4.2%-ի չափով կենսաթոշակի նվազեցում՝ յուրաքանչյուր տարվա համար:

Ինչպես ՌԴ-ում, Չինաստանում և Չիլիում նույնպես, վաղ կենսաթոշակի անցնելու հնարավորություն ունեն որոշակի ոլորտներում կամ պաշտոններում ծանր կամ վտանգավոր աշխատանք կատարող անձինք: Չինաստանում վաղ կենսաթոշակային տարիքը տղամարդկանց համար 55 տարեկանն

¹²⁶ Տվյալները վերաբերում են 2020 թ. կենսաթոշակի անցնող և 22 տարեկանից առանց դադարի աշխատանքային գործունեություն իրականացնող անձանց, եթե այլ բան նախատեսված չէ:

է, կանանց համար՝ 45-ը, իսկ Չիլիում յուրաքանչյուր 5 տարվա աշխատանքի համար նորմալ կենսաթոշակային տարիքը կրճատվում է 1 կամ 2 տարով (առավելագույնը 10 տարով): Չիլիում սահմանված հատկացումների բաղադրիչի դեպքում ցանկացած տարիքից անձը կարող է անցնել թոշակի, եթե կուտակված միջոցները թույլ են տալիս վճարել առավելագույն բարեկեցության թոշակի առնվազն 80%-ին և դիմումին նախորդող 10 տարիների միջին եկամտի առնվազն 70%-ին հավասար թոշակ:

Շվեդիայում վաղ կենսաթոշակի կարելի է անցնել միայն պայմանական սահմանված հատկացումների և քվազի պարտադիր մասնագիտական կենսաթոշակային բաղադրիչների դեպքում՝ համապատասխանաբար մինչև 62 և 55 տարեկանը, 2023 թվականից՝ 63 տարեկանը, իսկ 2026 թվականից՝ մինչև 64 տարեկանը: Պայմանական բաղադրիչի դեպքում անուիտետի հաշվարկով ավտոմատ նվազեցվում է կենսաթոշակի մեծությունը՝ կախված կենսաթոշակային տարիքից:

Նորվեգիայում գործում են Պայմանագրային վաղ կենսաթոշակի սխեմաներ (Contractual Early Retirement Schemes՝ AFP), որոնց անդամակցում են մասնավոր հատվածի աշխատողների 2/3-ի գործատուները, ըստ որի՝ վաղ կենսաթոշակի կարելի է անցնել 62 տարեկանից: Անդամակցելու համար աշխատողը պետք է 62 տարեկանում վերջին 9 տարիներից 7-ը հատկացումներ կատարած լինի (կենսաթոշակային եկամտի 4,5%-ը), վաղ կենսաթոշակ ստանալու համար աշխատողի գործատուն պետք է վերջին 3 տարին անդամակցած լինի սխեմային, թոշակի անցնելիս տարեկան եկամուտը պետք է առնվազն հավասար լինի հիմնական կենսաթոշակին:

Էստոնիայում 2021 թվականից մարդիկ կարող են ընտրել իրենց հարմար կենսաթոշակային տարիքը, հետաձգել կենսաթոշակը կամ ստանալ դրա կեսը: Կենսաթոշակի նվազեցումները կամ անը կախված են կենսաթոշակի անցնելու ժամանակից, կյանքի սպասվող տևողությունից և պետական պարտատոմսերի ընթացիկ արժեքի տոկոսադրույքից: Վերջին երկու փոփոխականները կիրառվում են՝ հաշվարկելու կենսաթոշակի կրճատման և բարձրացման բազմարկիչներն ու յուրաքանչյուր տարի հունվարի 1-ին վերանայվում են:

ը. Ժամկետից ուշ կենսաթոշակի անցնելու մեխանիզմը

Կենսաթոշակային համակարգը հնարավորություն է տալիս նաև ժամկետից ուշ անցնելու կենսաթոշակի, որի ընթացքում աշխատողը կարող է շարունակել կատարել հատկացումներ և համատեղել աշխատանքն ու թոշակ ստանալը, որի դեպքում շարունակում են կատարվել հատկացումներ, իսկ թոշակը տարեկան վերահաշվարկվում է (Էստոնիայում, Շվեդիայում, Չիլիում, Նորվեգիայում, Չինաստանում՝ առանց նպաստի վերահաշվարկի, Դանիայում՝ ոչ ավելի, քան 2 անգամ և առավելագույնը ընդամենը 10 տարով): Դանիայում հետաձգման թույլտվության համար պարտադիր պայման

է յուրաքանչյուր տարի առնվազն 170 ժամ աշխատանքի համար վարձատրություն ստացած լինելը: ՌԴ-ում հետաձգված յուրաքանչյուր տարին կրճատում է կենսաթոշակնախագծերինային տարին 1 տարով և մեծացնում ապահովագրական ու հիմնական կենսաթոշակի մեծությունը: Կենսաթոշակի ստացման նվազագույն սպասվող ժամանակաշրջանը 14 տարի է (234 ամիս): Նիդեռլանդներում հիմնական կենսաթոշակային տարիքը 66-ն է և 4 ամսից հետո այն հետաձգել հնարավոր չէ, սակայն աշխատանքն ու նպաստը համատեղելը հնարավոր է: Որոշ երկրներ նաև սահմանում են լրացուցիչ պարգևատրում՝ ժամկետից ուշ կենսաթոշակի անցնելու համար: Էստոնիայում հիմնական կենսաթոշակային բաղադրիչի հետաձգման դեպքում թոշակատուն տարեկան 5.6% հավելում է ստանում՝ կախված տարիքից:

թ. Կենսաթոշակի փոխարինման դրույքաչափը

Կենսաթոշակային համակարգի կողմից եկամուտների փոխարինումն ապահովելու համար կենսաթոշակային եկամտի ապահովման արդյունավետության գնահատականը կենսաթոշակի փոխարինման դրույքաչափն է: Այն կենսաթոշակային համակարգի ապահովագրական դերի ցուցիչն է, քանի որ ներկայացնում է, թե ինչ չափով է պահպանվում աշխատողի նախկին կենսամակարդակը՝ զբաղվածությունից կենսաթոշակի անցնելիս: Կենսաթոշակի փոխարինման դրույքաչափը ցույց է տալիս մինչև կենսաթոշակի անցնելը անձի ցլյանս համախառն եկամուտների մեջ համախառն կենսաթոշակի տեսակարար կշիռը: Ամենաբարձր փոխարինման դրույքաչափն ունեն Դանիան և Չինաստանը՝ գերազանցում է 70%-ը, իսկ ամենացածրը՝ Հայաստանն ու Վրաստանը՝ համապատասխանաբար 23.7 և 17%: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջին եկամտի դրույքաչափի վերաբերյալ կարող են գոյություն ունենալ վիճակագրական շեղումներ, ուստի փոխարինման «իրական» դրույքաչափը կարող է նաև ավելի ցածր լինել: Դա է պատճառը, որ կենսաթոշակային տարիքի շատ անձինք կենսաթոշակի անցնելուց հետո շարունակում են աշխատել տնտեսության ոչ ֆորմալ հատվածում: Այնուամենայնիվ, կենսաթոշակը ծեր և հատկապես ցածր եկամտով բնակչության շրջանում շարունակում է մնալ աղքատությունը կանխելու հիմնական և ամենակարևոր միջոցը: Ուստի, կենսաթոշակային համակարգի ձևավորման հիմքում պետք է լինի ավելի ցածր եկամտով կենսաթոշակատուների համար փոխարինման ավելի բարձր դրույքաչափի ապահովումը:

Դանիայում միջինից կրկնակի ցածր եկամտով անձանց կենսաթոշակի փոխարինման դրույքաչափը 45.1%-ային կետով գերազանցում է միջին եկամտով անձանց նույն ցուցանիշը, Չինաստանում՝ 21%-ային կետով, Էստոնիայում՝ 20.3%-ային կետով, ՌԴ-ում՝ 9.7%-ային կետով: Ընդ որում, Դանիայում ցածր եկամտով անձանց կենսաթոշակը կենսաթոշակի անցնելուց հետո գերազանցում է մինչև կենսաթոշակը նրանց ստացած եկամուտը: Ինչ վերաբերում է միջինից բարձր եկամտով անձանց, ապա ստանում ենք հակառակ

պատկերը. կենսաթոշակի փոխարինման դրույքաչափն ավելի ցածր է: Օրինակ, Դանիայում՝ 18.7%-ային կետով ցածր, քան միջին եկամտի դեպքում, Նորվեգիայում՝ 17.1%-ային կետով, Էստոնիայում՝ 9.8%-ային կետով, Չինաստանում՝ 9,5%-ային կետով: Հակառակ պատկերն է Շվեդիայում. բարձր եկամտով անձանց կենսաթոշակի փոխարինման դրույքաչափը 13.9%-ային կետով գերազանցում է միջին եկամտով անձանց դրույքաչափը, քանի որ ցածր և բարձր եկամտով անձանց հատկացումները կազմում են համապատասխանաբար 4.5 և 30%: Կենսաթոշակի փոխարինման դրույքաչափը կամավոր սահմանված հատկացումների համակարգի դեպքում ավելի բարձր է, քան պարտադիր դեպքում: Օրինակ, Էստոնիայում 2021 թվականից հետո պարտադիր սահմանված հատկացումներից կամավորին անցման արդյունքում կենսաթոշակի փոխարինման դրույքաչափը 28%-ից դարձել է 52,5%¹²⁷:

Ճ. Աշխատանքից հարկադիր բացակայության դեպքում կենսաթոշակի սահմանման մեխանիզմը

Երկրները նաև լրացուցիչ նպաստ են առաջարկում մայրության և երեխաներին խնամելու արձակուրդի համար: Այս արձակուրդների դեպքում խախտվում է առանց դադարի աշխատանքային գործունեության պայմանը, ուստի կենսաթոշակային տարիքը կարող է բարձրանալ: Շատ երկրներ այս ժամանակաշրջանը (սովորաբար մինչև 3 կամ 4 տարի) դիտարկում են որպես ապահովագրված ժամանակաշրջան և համարում են վճարված զբաղվածություն: Այնուամենայնիվ, երեխաների 6 և ավելի տարին բույրելու դեպքում այս երկարացված ժամանակաշրջանի արտոնությունները վերաբերում են միայն վաղ կենսաթոշակի անցնելու և նվազագույն կենսաթոշակ ստանալու իրավասությանը: Որոշ երկրներ երեխայի խնամքի ժամանակաշրջանը հաշվի են առնում կենսաթոշակի իրավասության համար, սակայն չեն ներառում եկամուտների բազան հաշվելիս:

Շվեդիայում՝ 4 տարեկան և ցածր, Նորվեգիայում՝ 6 տարեկանից ցածր, Չիլիում՝ մինչև 2 տարեկան, Էստոնիայում՝ մինչև 3 տարեկան, Դանիայում՝ մինչև 1 տարեկան, ՌԴ-ում՝ մինչև 1,5 տարեկան (ընդամենը՝ առավելագույնը 3 տարի) երեխայի խնամքի համար ամենացածր եկամուտ ունեցող ծնողը ստանում է նպաստ՝ ըստ եկամտի մեծության: Շվեդիայում այդ նպաստը նույնպես համարվում է կենսաթոշակային եկամուտ, որի 7%-ը վճարվում է որպես աշխատողի կենսաթոշակային հատկացում, իսկ պետությունը գործատուի փոխարեն կատարում է 10.21% հատկացումներ և՛ պայմանական հաշիվների, և՛ սահմանված հատկացումների համակարգին: Չիլիում կենսաթոշակային համակարգին նպաստից վճարվում է պարտադիր 10% հատկացում: Էստոնիայում և ՌԴ-ում 3 տարիները համարվում են կենսաթոշակային տարիներ: Դանիայում նպաստ և հատկացումներ կատարվում են միայն միա-

¹²⁷ Տվյալները՝ ըստ Pensions at a Glance 2021, OECD AND G20 INDICATORS, OECD (2021), OECD Publishing, Paris, 15 140:

նվազ պարտադիր խնայողությունների վրա հիմնված լրացուցիչ կենսաթոշակի համակարգին (ATP)՝ հատկացումների կրկնակի չափով, ընդ որում՝ հատկացումների 1/3-ը կատարում է նպաստառուն, իսկ 2/3-ը՝ պետությունը/տեղական ինքնակառավարման մարմինը:

Անհատի կարիերան կարող է ընդհատվել նաև գործազրկության և աշխատաշուկա մուտքի հետաձգման պատճառով, որի հետևանքով նրանց կենսաթոշակային տարիքը կարող է բարձրանալ, կամ ապագա կենսաթոշակը կարող է կրճատվել: Կենսաթոշակային արտոնությունները, ինչպես նաև քաղաքացիության հիմքով վճարվող և նվազագույն կենսաթոշակները նպատակ ունեն նաև զսպելու գործազրկության դադարի ազդեցությունները կենսաթոշակի մեծության վրա: Երկրների մեծամասնությունը նման պաշտպանական մեխանիզմներ կիրառում է գործազրկության նախնական ժամանակաշրջանի (միջինում առաջին 5 տարիների) համար:

Դանիայում լրացուցիչ նպաստ և կենսաթոշակային հատկացումների փոխհատուցում նախատեսված է միայն պարտադիր խնայողությունների հիմքով լրացուցիչ կենսաթոշակային բաղադրիչի համար: Ընդ որում, գործազրկության ապահովագրության հիմնադրամն է վճարում գործատուի հատկացումների 2/3-ը (գործազրկության ապահովագրության բացակայության դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմինը): Գործազրկության նպաստ ստանալու դեպքում հատկացումները կատարվում են կրկնակի դրույքաչափով:

ՌԴ-ում զբաղվածության հնարավորությունների բացակայության, ընկերության փակման, սնանկացման, անձնակազմի կրճատման դեպքում գործազուրկն իրավունք ունի թոշակը ստանալու, եթե բավարարում է վաղ կենսաթոշակի անցնելու համար սահմանված պայմաններին, մինչև կենսաթոշակային տարիքը մնացել է 2 տարի, տղամարդկանց դեպքում՝ 25 և կանանց դեպքում՝ 20 տարի և ավելի ապահովագրության ժամկետ է առկա: Կենսաթոշակի մեծությունը կարգավորվում է օրենքով:

Երկարատև գործազրկության պամաններում գործազրկության ապահովագրության համակարգ կիրառող շատ երկրներ իրավունք են տալիս գործազուրկին անցնելու վաղ կենսաթոշակի: Դանիայում այն անհատները կարող են օգտվել մեխանիզմից, որոնք առնվազն 30 տարի գործազրկության ապահովագրության համակարգի անդամ են և այդ ընթացքում վաղ կենսաթոշակի անցնելու կամավոր հատկացումներ են կատարել: Այդ դեպքում գործազրկության նպաստի մեծությունը չպետք է գերազանցի լրիվ դրույքով աշխատողների նպաստի 91%-ը:

Չիլիում գործազուրկը ստանում է գործազրկության նպաստ համերաշխության ապահովագրության հիմնադրամից և, միևնույն ժամանակ, կենսաթոշակային հատկացումներ է կատարում նպաստի 10%-ի չափով:

Նորվեգիայում և Շվեդիայում գործազրկության նպաստը համարվում է կենսաթոշակային եկամուտ և կախված է նախկին եկամտից: Նորվեգիայում այն առավելագույնը հավասար է հիմնական կենսաթոշակի 7,1-ապատիկին, իսկ Շվեդիայում՝ նախկին եկամուտների առավելագույնը 80%-ին: Նպաստի ժամկետն սպառվելու դեպքում Շվեդիայում նպաստառուն կարող է մասնակցել աշխատանքի և զարգացման երաշխավորման ծրագրին՝ ստանալով գործունեության դրամաշնորհ կամ զարգացման նպաստ՝ մինչև գործազրկությունը իր եկամուտների 65%-ի չափով (եթե ստացել է գործազրկության նպաստ):

Էստոնիայում, Չինաստանում և Նիդեռլանդներում մեխանիզմը բացակայում է:

Եթե դիտարկենք միջին եկամտով 2020 թ. 22 տարեկանում աշխատաշուկա մուտք գործած և 2033 թվականից հետո 5 տարի գործազուրկ հանդիսացող անձանց, ապա Չիլիում 5 տարվա գործազրկությունից հետո անձանց կենսաթոշակի մեծությունը կազմում է անդադար աշխատանքային գործունեությամբ միջին եկամտով անձանց եկամուտների 89.1%-ը, իսկ միջինից ցածր եկամտով անձանց դեպքում՝ 94.5%-ը, որի պատճառը կենսաթոշակի կախվածությունն է նախկին եկամուտներից և նվազագույն ու համերաշխության թոշակների մեծ դերը տնտեսությունում: Նույնատիպ պատկեր է նաև Նորվեգիայում, որտեղ ցուցանիշները համապատասխանաբար 92.5 և 97.8% են: Էստոնիայում, որտեղ բացակայում է նման համակարգը, ցածր և միջին եկամտով անձանց դեպքում ցուցանիշը գրեթե չի տարբերվում՝ համապատասխանաբար 94.3 և 95%¹²⁸:

ի. Ինքնազբաղվածների կենսաթոշակային ապահովման մեխանիզմները

Ինքնազբաղվածների մասնակցության պայմանները հիմնական և պարտադիր կենսաթոշակային բաղադրիչներից տարբերվում են ըստ երկրների: Կան երկրներ (համեմատվող երկրներից Էստոնիայում), որտեղ ինքնազբաղվածները պարտադիր պետք է մասնակցեն եկամուտներից կախված կենսաթոշակային համակարգին և հատկացումներ կատարեն (հաշվարկվում է *(եկամուտը ինքնազբաղվածությունից՝ հանած սոցիալական ապահովության հատկացումներ)* մեծությունից) աշխատողներին և գործատուներին հավասար դրույքաչափով:

Կան երկրներ, որտեղ ինքնազբաղվածների մասնակցությունը եկամուտներից կախված համակարգին պարտադիր է, սակայն կենսաթոշակային ծածկույթը սահմանափակ է, քանի որ նրանք իրավունք ունեն հատկացումներ կատարել աշխատողներին ավելի փոքր դրույքաչափով (Չիլի, Նորվեգիա, Շվեդիա): Ընդ որում, Չիլիում ինքնազբաղվածի միջին ամսական

¹²⁸ St'u Pensions at a Glance 2021, OECD AND G20 INDICATORS, OECD (2021), OECD Publishing, Paris, էջ 159:

եկամտի 80%-ն է համարվում կենսաթոշակային հատկացումների բազա, հատկացումների դրույքաչափը 10% է (9 տարիների ընթացքում այն աճելու է մինչև 17%): Սահմանված է նաև հատկացումների ստորին (սվազագույն ամսական աշխատավարձ) և վերին շեմ (2020 թ. տվյալներով՝ 2452 ԱՄՆ դոլար):

Նիդեռլանդներում պարտադիր է ինքնազբաղվածների մասնակցությունը միայն հիմնական կենսաթոշակային բաղադրիչին: Իսկ Դանիայում որևէ համակարգի մասնակցության պարտադրանք գոյություն չունի: Ինքնազբաղվածները պետությունից ստանում են միայն հիմնական և թիրախավորված կենսաթոշակ, իսկ մասնավոր կենսաթոշակային համակարգերին կամավոր մասնակցության դեպքում ունեն հատկացումների տարբեր շեմեր՝ կախված եկամտից: Ինքնազբաղվածների մոտ 60%-ը իր եկամտի միջինը 7%-ի չափով հատկացումներ է կատարում կամավոր մասնավոր կենսաթոշակային նախագծերին:

1. Կենսաթոշակային ծախսերի բաժինը ՀՆԱ-ում

Թերևս, կենսաթոշակի ծախսերը կազմում են սոցիալական ապահովության ծախսերի ամենամեծ բաժինը, քանի որ, բացի ծերության կենսաթոշակից, կենսաթոշակային հիմնադրամներից վճարվում են նաև հաշմանդամության և կերակրողին կորցնելու նպաստները:

2018 թ. համեմատվող երկրներից ՀՆԱ-ի նկատմամբ ամենավոքոր կենսաթոշակային ծախսերն ունեցել են Չիլին ու Վրաստանը՝ համապատասխանաբար 2,8 և 4%, որոնք համեմատվող երկրների շարքում ունեցել են նաև բնակչության ամենավոքոր մեդիանային տարիքը: Բացի դրանից, այս երկրներն ունեն կենսաթոշակային համակարգի ամենավոքոր արդյունավետ ծածկույթը, համեմատաբար նոր են անցում կատարել կուտակային կենսաթոշակային համակարգին և այն դեռևս ամբողջությամբ չի դրսևորվել: Ավելին, համեմատվող երկրների շարքում այս երկրներում է 65 և բարձր տարիքի անձանց ամենավոքոր տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ՝ համապատասխանաբար 12.2 և 15,3%: Եվ որ ամենակարևորն է՝ այս երկրներում կենսաթոշակային ծախսերը կատարվում են պետական բյուջեից: Համեմատվող երկրներից ամենամեծ ծախսերը պատկանում են Դանիային և Շվեդիային՝ համապատասխանաբար ՀՆԱ-ի 8.0 և 7.2%-ը, որտեղ 65 և բարձր տարիքի անձանց տեսակարար կշիռը կազմում է մոտավորապես 20.2%: Համեմատվող երկրների շարքում՝ այս երկրներում է նաև տեղ գտել առանց հատկացումների պետական ամենամեծ կենսաթոշակային բաղադրիչը:

Ցույց տալու համար, թե 65 և բարձր տարիքի անձանց տեսակարար կշռի աճը, աշխատանքային տարիքի բնակչության կրճատումը և դրա հետևանքով նաև ՀՆԱ-ի աճի տեմպերի դանդաղումը կենսաթոշակների դրույքաչափերի անփոփոխության պայմաններում ինչպես կանդրադառնան

ՀՆԱ-ի մեջ կենսաթոշակային ծախսերի տեսակարար կշռի աճի վրա, ՏՀԶԿ մասնագետների կողմից կազմված մոդելի կանխատեսումների համաձայն՝ մինչև 2050 թվականը Հայաստանում և Վրաստանում այդ ծախսերը կկազմեն մոտավորապես ՀՆԱ-ի 6%-ը, Բելառուսում տեղի կունենա նշանակալի աճ, և ծախսերը կգերազանցեն ՀՆԱ-ի 13%-ը: Նորվեգիայում ծախսերը կաճեն 5.8%-ային կետով՝ կազմելով ՀՆԱ-ի 12.7%-ը, իսկ Նիդերլանդներում՝ 3.7%-ային կետով՝ ՀՆԱ-ի 8.9%-ը: Ոչ նշանակալի՝ մինչև 0.4%-ային կետով անկում կանխատեսվում է Դանիայում, Էստոնիայում և Շվեդիայում¹²⁹:

լւ. Կենսաթոշակի դուրս գրման մեխանիզմը

Նորվեգիայում սահմանված հատկացումների սխեմայի շրջանակներում կենսաթոշակը կարելի է ստանալ՝ որպես կենսաթոշակային անուիտետ կամ առնվազն մինչև 77 տարեկանը: Ընդ որում, թոշակատուն կենսաթոշակը ստանում է որպես գներով ինդեքսավորված անուիտետ՝ հաշվարկված ըստ մահացության գործակիցների:

Չիլիում կենսաթոշակի անցնելու դեպքում թոշակատուն կարող է ընտրել 4 հնարավոր տարբերակների միջև կուտակված կապիտալը կարելի է օգտագործել՝ գնելով անհետաձգելի կենսաթոշակային անուիտետ, ստանալ ժամանակավոր եկամուտ՝ հետաձգված կենսաթոշակային անուիտետի հետ, ստանալ կենսաթոշակ՝ ըստ ծրագրված գրաֆիկի, բաժանվել անհետաձգելի կենսաթոշակային անուիտետի և ծրագրված գրաֆիկով դուրսգրումների միջև: Անուիտետները կարելի է նաև ձեռք բերել այն անձանց կողմից, որոնք կարող են ֆինանսավորել հիմնական համերաշխության կենսաթոշակից բարձր կենսաթոշակ:

Էստոնիայում 2021 թվականից գործում է ակտուարական չեզոքության սկզբունքը, ըստ որի՝ ամբողջ կենսաթոշակային ակտիվների մեծությունը նույնն է՝ անկախ կենսաթոշակի անցնելու ժամանակից, կենսաթոշակի հետաձգումից կամ մասնակի դուրս գրումից: Ըստ ճկուն կենսաթոշակային համակարգի՝ թոշակատուն կարող է բարձրացնել (1/2-ից դարձնել լրիվ), իջեցնել (լրիվից դարձնել 1/2) իր կենսաթոշակի մեծությունը կամ դադարեցնել ստանալը ամսական 1 անգամ կամ տարեկան 12 անգամ: Կենսաթոշակի մեծությունը կփոփոխվի հաջորդ ամսվա սկզբին, քանի որ կենսաթոշակը վճարվելու է նույն ամսվա համար՝ ընթացիկ ամսում:

Դանիայում պարտադիր խնայողությունների վրա հիմնված լրացուցիչ և մասնագիտական կենսաթոշակի սխեմաների դեպքում կենսաթոշակի հաշվեգրումներն իրականացվում են «Ինչ վճարում ես, այն էլ ստանում ես» սկզբունքով: Առաջին սխեմայով կատարված հատկացումների 80%-ն օգտագործվում է նույն սխեմայից՝ նոր անհատական կենսաթոշակային իրավունքներ ձեռք բերելու համար, որը դիսկոնտավորվում է ըստ շուկայական հեջավորվող երկարաժամկետ տոկոսադրույքի: Մնացյալ 20%-ը դառնում է ազատ

¹²⁹ <https://www.oecd-ilibrary.org/sites/4ebaf214-en/index.html?itemId=/content/component/4ebaf214-en>

պահուստ, որը ծառայում է որպես ներդրումային բուֆեր և ֆինանսավորման աղբյուր կյանքի տևողության երկարացման դեպքում: Մասնագիտական կենսաթոշակի սխեմայի դեպքում նպաստն ստացվում է որպես կենսաթոշակային անուիտետ: Որոշ դեպքերում միջոցները կարող են տեղաբաշխվել միանվագ գումարով խնայողությունների համակարգում:

Շվեդիայում եկամուտներից կախված հատկացումներով սխեմայի դեպքում կուտակված պայմանական կապիտալը կարող է վերածվել անուիտետի: Հաշվարկման համար հիմք է ընդունվում անհատի՝ կենսաթոշակի անցնելու տարիքից և ընթացիկ ժամանակում կյանքի սպասվող տևողությունից (հիմնված նախորդող 5 տարիների ընթացքում մահացության ցուցանիշների վրա) կախված գործակիցը: Տարեկան 1,6% դիսկոնտավորման նորման նույնպես հաշվարկվում է անուիտետի հաշվարկման համար: Սահմանված հատկացումներով համակարգի դեպքում կարելի է ընտրել փոփոխական անուիտետ, որի շրջանակներում ֆոնդերը շարունակում են ներդրվել ընտրված ֆոնդերի կառավարչի կողմից: Այս անուիտետները չունեն երաշխավորված արժեք: Կենսաթոշակի մեծությունն այս դեպքում հավասար է՝ հաշվի արժեքը հարաբերած անուիտետի գործակցին (գնահատված ըստ կյանքի միջին սպասվող տևողության)՝ ավելացրած 3% սպասվող տոկոսադրույք՝ հանած վարչական ծախսեր: Եթե եկամուտը գերազանցում է 3%-ը, ապա կենսաթոշակատուն կա՛մ լրացուցիչ վճար է ստանում, կա՛մ աճում է այն հաշվի գումարը, որի հիման վրա հաշվարկվում է տարեկան կենսաթոշակը:

ՀՀ տարիքային աշխատանքային կենսաթոշակի համակարգի առանձնահատկությունները

ՀՀ-ում գործող կենսաթոշակի համակարգը համերաշխության սկզբունքի վրա գործող բաշխողական համակարգ է՝ համալրված պարտադիր կուտակային կենսաթոշակի բաղադրիչով: Գործող տարիքային աշխատանքային կենսաթոշակի բաղադրիչը ունիվերսալ սխեմա է, որն ապահովում է կենսաթոշակի իրավունք՝ օրենքով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում. տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 63 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ¹³⁰:

2014 թվականին ՀՀ-ում ներդրվել է կենսաթոշակային համակարգի երկրորդ բաղադրիչը՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը¹³¹: Պարտադիր կուտակային բաղադրիչի պարտադիր մասնակիցներն են 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված մասնավոր և պետական հատվածի վարձու աշխատողները, նոտարները և անհատ ձեռնարկատերերը, իսկ մինչև 1974 թվականը ծնված վարձու աշխատողները, նոտարները, ձեռնարկատերերն ու ինքնազբաղվածները (անկախ տարիքից) կարող

¹³⁰ Տե՛ս ՀՀ օրենքը «Պետական կենսաթոշակների մասին», Գլուխ 2, հոդված 9:

¹³¹ Տե՛ս ՀՀ օրենքը «Կուտակային կենսաթոշակների մասին»:

են միանալ պարտադիր կենսաթոշակային բաղադրիչին կամավոր: Պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միանալու որոշումը վերջնական է:

Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին պարտադիր մասնակիցների համար կուտակային կենսաթոշակային համակարգին հատկացումները կատարվում են բազային եկամտի 10%-ի չափով: Ընդ որում, 2022 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող անձանց համար սոցիալական վճարի 4.5%-ը վճարում է մասնակիցը, իսկ 5.5%-ը՝ պետությունը: Մինչև 500000 ՀՀ դրամը ներառյալ ամսական աշխատավարձի դեպքում սոցիալական վճարի չափը կազմում է 4.5%, իսկ 500000 ՀՀ դրամից ավելի աշխատավարձի դեպքում՝ 10% և 27500 ՀՀ դրամի տարբերության չափով¹³²:

Կենսաթոշակային տարիքը լրանալու դեպքում մասնակիցը կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունք է ձեռք բերում անուիտետի, ծրագրային վճարների կամ միանվագ վճարների ձևով: Կուտակային կենսաթոշակի չափը որոշվում է մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդի փայերի արժեքի և կուտակային կենսաթոշակների ստացման ժամանակահատվածի հիման վրա: Անուիտետների և ծրագրային վճարների հաշվարկման համար օգտագործվում են երկու սեռի համար ունիվերսալ մահացության աղյուսակներ¹³³:

Հայտնի է, որ կենսաթոշակային համակարգի համարժեքությունն ու ֆինանսական կայունությունը մեծապես պայմանավորված են ընթացիկ ժողովրդագրական վիճակով և դրա սպասվող փոփոխություններով: Բնակչության ծերացումը և կյանքի սպասվող տևողության աճը լուրջ մարտահրավերներ են կենսաթոշակային համակարգի համար: Գլոբալ մեդիանային տարիքը 2020 թ. կազմել է 31 տարեկանը, որն էական աճ է գրանցել 1950 թվականի համեմատությամբ, երբ ցուցանիշը 23,6 էր: Եթե 2020 թ. Հայաստանում մեդիանային տարիքը կազմում էր 34 տարեկանը, ապա մինչև 2050 թվականը այն կհասնի 44-ի¹³⁴, որն առավելապես պայմանավորված է 1980-2021 թթ. ընթացում ծնելիության մակարդակի կրճատմամբ ավելի քան 50%-ով¹³⁵:

Հասարակության ծերացման մասին են վկայում նաև բնակչության ընդհանուր թվաքանակում 63 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշռի աճը: 1990 թ. համեմատությամբ 2021 թ. Հայաստանում ցուցանիշը գրեթե կրկնապատկվել է՝ տարեսկզբին կազմելով 15.1%¹³⁶:

¹³² <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTISocialSecurityPayment>

¹³³ Տե՛ս ՀՀ օրենքը «Կուտակային կենսաթոշակների մասին», Հոդված 48 և 49:

¹³⁴ <https://worldpopulationreview.com/country-rankings/median-age>

¹³⁵ Ըստ UN, Department of Economic and Social Affairs Population Division, World Population Prospects 2022. <https://population.un.org/wpp/Download/Standard/MostUsed/>

¹³⁶ <https://armstat.am/file/doc/99533248.pdf>

Բնակչության ծերացումը և ծնելիության մակարդակի կրճատումը հանգեցրել են տարեցների խնամառության գործակցի աճին¹³⁷, որը 2020 թ. Հայաստանում կազմել է 17.5% և մինչև 2050 թվականը կկրկնապատկվի¹³⁸: Դա նշանակում է, որ Հայաստանում մեկ կենսաթոշակային տարիքի անձի հաշվով աշխատանքային տարիքի բնակչության թիվը պակաս կլինի 3-ից: Ընդ որում, նշենք, որ աճում է նաև մեկ կենսաթոշակատուի հաշվով զբաղվածների թիվը, որը 2020 թ. հանրապետությունում կազմել է 2.3 մարդ¹³⁹: Հայաստանում աշխատանքային տարիքի բնակչության տեսակարար կշիռը ընդամենը բնակչությունում 2020 թ. կազմել է 67.4%, որը մինչև 2060 թվականը, ըստ կանխատեսումների, կկրճատվի մինչև 62.3% (և դա այն պայմաններում, երբ մինչև 2050 թվականը կանխատեսվում է նաև բնակչության ընդհանուր թվաքանակի կրճատում 0.2 միլիոն մարդով՝ 6.7%-ով)¹⁴⁰:

Հայաստանում բարձր է նաև և՛ ծննդյան պահից, և՛ 65 տարեկանում կյանքի սպասվող տևողությունը, որը 2021 թ. կազմել է համապատասխանաբար 72 և 13.9 տարեկան¹⁴¹:

Ակնհայտ է, որ ժողովրդագրական այսպիսի միտումների պայմաններում կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունն ու կենսաթոշակների համարժեքության ապահովումը շարունակելու են լուրջ խնդիր հանդիսանալ:

Կենսաթոշակային համակարգի երկու հիմնական նպատակներն են կենսաթոշակատուների շրջանում հիմնական պահանջմունքների բավարարման ապահովումը և ծերության ժամանակ սպառման կրճատման համահարթեցումը: Հասկանալու համար, թե որքանով է ՀՀ-ում բաշխողական կենսաթոշակի համակարգն ապահովում այդ նպատակների իրացումը, կենսաթոշակի մեծությունը համեմատենք նվազագույն սպառողական զամբյուղի, աղքատության գծի ու ծայրահեղ աղքատության գծի հետ: Ինչպես երևում է աղյուսակ 2.9-ից, թեև աշխատանքային միջին կենսաթոշակը Հայաստանում գերազանցում է ծայրահեղ աղքատության գիծը, այնուամենայնիվ, այն տարեցների շրջանում աղքատության կանխարգելման համատեքստում համարժեք չէ: Ակնհայտ է, որ հիմնական կենսաթոշակի մեծությունը 2020 թ. նույնպես չի ապահովել նվազագույն կենսամակարդակը՝ ցածր լինելով նվազագույն սպառողական զամբյուղից: Կենսաթոշակի անցնելուց հետո սպառման կրճատումը համահարթեցնելու տեսանկյունից կենսաթոշակները շարունա-

¹³⁷ Տարեցների խնամառության գործակիցը հաշվարկվում է որպես աշխատանքային տարիքի 100 անձի հաշվով 65 տարեկանից բարձր անձանց տեսակարար կշիռ:

¹³⁸ Ըստ <https://databank.worldbank.org/> տվյալների: Նշում. Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի կանխատեսումները միմյանցից տարբերվում են:

¹³⁹ <https://armstat.am/file/doc/99533258.pdf>

¹⁴⁰ <https://data.worldbank.org/indicator/SP.POP.I564.TO.ZS>

¹⁴¹ Ըստ UN՝ Department of Economic and Social Affairs Population UN Division, World Population Prospects 2022 տվյալների: Տե՛ս <https://population.un.org/wpp/Download/Standard/MostUsed/>

կել են մնալ ցածր՝ 2020 թ. կազմելով միջին ամսական անվանական աշխատավարձի միայն 23.7%-ը:

Թերևս, կենսաթոշակի ծախսերը կազմում են սոցիալական ապահովության ծախսերի ամենամեծ բաժինը, քանի որ, բացի ծերության կենսաթոշակից, կենսաթոշակային հիմնադրամներից վճարվում են նաև հաշմանդամության և կերակրողին կորցնելու նպաստները: ՀՀ-ում աշխատանքային կենսաթոշակների ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի ընդհանուր մուտքերի հաշվին: 2020 թ. կենսաթոշակների ֆինանսավորմանն են ուղղվել ՀՆԱ-ի 3.9%-ը, համախմբված բյուջեի ծախսերի 13%-ը: Ցույց տալու համար, թե 65 և բարձր տարիքի անձանց տեսակարար կշռի աճը, աշխատանքային տարիքի բնակչության կրճատումը և դրա հետևանքով նաև ՀՆԱ-ի աճի տեմպերի դանդաղումը կենսաթոշակների դրույքաչափերի անփոփոխության պայմաններում ինչպես կանդրադառնան ՀՆԱ-ի մեջ կենսաթոշակային ծախսերի տեսակարար կշռի աճի վրա, ՏՀԶԿ մասնագետների կողմից կազմված մոդելի կանխատեսումների համաձայն՝ մինչև 2050 թվականը Հայաստանում այդ ծախսերը կկազմեն մոտավորապես ՀՆԱ-ի 6%-ը (աղյուսակ 2.9)¹⁴²:

Աղյուսակ 2.9

ՀՀ կենսաթոշակային համակարգի համարժեքության և ֆինանսական կայունության ցուցանիշները 2016-2020 թթ.¹⁴³

		2016	2017	2018	2019	2020
		<i>ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՄՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ</i>				
Աշխատանքային տարիքային միջին կենսաթոշակի համարժեքության ցուցանիշները	Միջին կենսաթոշակ/ՆՍԶ (%)	77,6	96,7	68,4	83,6	74,5
	Միջին կենսաթոշակ/Աղքատության վերին գիծ (%)	104	101,3	98,1	78,1	83,7
	Միջին կենսաթոշակ/Ծայրահեղ աղքատության գիծ (%)	182,2	173,7	168,3	174,4	188,5
	Հիմնական կենսաթոշակ/ՆՍԶ (%)	29,2	36,7	26,2	32,3	29,8
	Հիմնական կենսաթոշակ/Աղքատության վերին գիծ (%)	39,2	38,5	37,5	30,2	33,6
	Հիմնական կենսաթոշակ/Ծայրահեղ աղքատության գիծ (%)	68,6	65,9	64,4	67,3	75,5
	<i>ՄՊԱՌՄԱՆ ԿՐՃԱՏՈՒՄԸ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ</i>					
		2016	2017	2018	2019	2020
	Միջին կենսաթոշակ/Միջին ամսական անվանական աշխատավարձ (%)	24,3	25,4	24,2	22,7	23,7
Կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունը		2016	2017	2018	2019	2020
	Կենսաթոշակի ֆինանսավորման ծախսեր/ՀՆԱ (%)	5,4	5,2	3,7	3,4	3,9
	Կենսաթոշակի ֆինանսավորման ծախսեր/Համախմբված բյուջեի ընդամենը ծախսեր (%)	19,6	20,1	18,7	13,2	13

¹⁴² <https://www.oecd-ilibrary.org/sites/4ebaf214-en/index.html?itemId=/content/component/4ebaf214-en>

¹⁴³ Հաշվարկները հեղինակին են՝ ըստ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017, 2018, 2019, 2020 և https://www.minfin.am/hy/page/petakan_byuj/ տվյալների:

Բացի նրանից, որ ՀՀ-ում բաշխողական համակարգի աշխատանքային կենսաթոշակը չի ապահովում տարեցների նվազագույն կարիքների բավարարումը, չի նպաստում նրանց շրջանում աղքատության կրճատմանը, նաև չի ապահովում նախկին աշխատանքային եկամուտների համարժեք փոխարինում՝ որևէ կապ չարտահայտելով կենսաթոշակառուի նախկին եկամուտների հետ: Կարծում ենք, որ ՀՀ-ում աշխատանքային կենսաթոշակի հիմնական նպատակների իրականացման տեսանկյունից անհրաժեշտ է ուղիղ կապ սահմանել կենսաթոշակառուի նախկին աշխատավարձի և նրա կենսաթոշակի մեծության միջև՝ կախված նաև աշխատանքային ստաժից:

Հաշվի առնելով աշխատաշուկա մուտք գործելուց մինչև կենսաթոշակի անցնելու տարիքը տնտեսությունում գնաճի և միջին աշխատավարձի աճի միտումները՝ կարծում ենք նաև կենսաթոշակի կրճատումից խուսափելու տեսանկյունից հաշվարկման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև գնաճի և միջին աշխատավարձի աճի տեմպերը: Այս ամենը հաշվի առնելով՝ հետազոտական խմբի կողմից առաջարկվում է ՀՀ-ում կենսաթոշակի հաշվարկման ներքոնշյալ բանաձևը՝ որպես կարճաժամկետ միջանկյալ լուծում: Որպես կենսաթոշակի հաշվարկման բազա՝ առաջարկվում է ընդունել նվազագույն աշխատավարձի մեծությունը՝ ինդեքսավորված գնաճի տեմպով՝ համեմատած կենսաթոշակառուի աշխատած տարիներին նրա ստացած միջին ամսական աշխատավարձի հետ: Բանաձևում մյուս փոփոխականը կենսաթոշակառուի աշխատանքային ստաժն է, որն առաջարկվում է համադրել ծեր տարիքում եկամուտների պաշտպանվածության Աշխատանքի միջազգային կազմակերպության ստանդարտներով (No. 128 կոնվենցիա) պարտադիր սոցիալական հատկացումների համար սահմանված առնվազն 30 տարվա ցուցանիշի հետ¹⁴⁴: Այսպիսով, բանաձևն ունի հետևյալ տեսքը՝

$$P = W_{min} \cdot x \frac{T}{30} \cdot K \cdot x (1 + \pi)^T,$$

որտեղ՝

P-ն տարեկան տարիքային աշխատանքային կենսաթոշակի մեծությունն է,

W_{min} -ն՝ նվազագույն աշխատավարձը,

W-ն՝ ամբողջ աշխատանքային գործունեության ընթացքում միջին աշխատավարձի մեծությունը,

T-ն՝ աշխատած տարիների թիվը,

K-ն գործակից է, որը կարող է ընդունել հետևյալ արժեքները.

¹⁴⁴ Տե՛ս ILO, Social protection for older persons: Policy trends and statistics 2017, International Labour Office, Social Protection Department, Geneva: ILO, 2018, էջ 46:

եթե $W \leq 2 W_{\min}$, ապա $K = 1,1$ ¹⁴⁵

եթե $2W_{\min} < W \leq 3 W_{\min}$, ապա $K = 1,2$

եթե $W > 3 W_{\min}$, ապա $K = 1,3$

π -ն գնաճի տեմպն է (գների մակարդակի կրճատման դեպքում փոփոխականը հաշվի չի առնվում):

Ըստ բերված բանաձևի՝ որքան բարձր է եղել կենսաթոշակատուի աշխատավարձի մեծությունը, այնքան պետք է մեծ լինի կենսաթոշակի մեծությունը:

Միջանկյալ բանաձևից բացի, հետազոտական խումբն առաջարկում է նաև հիմնական բանաձև, որտեղ արդեն կենսաթոշակի հաշվարկման բազան ոչ թե նվազագույն աշխատավարձն է, այլ կենսաթոշակատուի աշխատած տարիների ընթացքում նրա միջին աշխատավարձը, ըստ որի՝ բանաձևը կունենա հետևյալ տեսքը.

$$P = W x \frac{T}{30} x A x (1 + r)^T,$$

որտեղ՝

P-ն տարեկան տարիքային աշխատանքային կենսաթոշակի մեծությունն է,

W-ն՝ ամբողջ աշխատանքային գործունեության ընթացքում միջին աշխատավարձի մեծությունը,

T-ն՝ աշխատած տարիների թիվը,

A-ն՝ հաշվեգրման դրույքաչափը (A=45%),

r-ը՝ միջին աշխատավարձի տարեկան աճի տեմպը¹⁴⁶:

Հաշվեգրման դրույքաչափը ցույց է տալիս, թե կենսաթոշակը միջին աշխատավարձի քանի տոկոսն է կազմում: Աշխատանքի միջազգային կազմակերպության վերոնշյալ կոնվենցիայի ստանդարտներով՝ առնվազն 30 տարվա հատկացումների համար կենսաթոշակի մեծությունը պետք է հավասար լինի տարեկան միջին աշխատավարձի 45%-ին: Ուստի, հաշվեգրման դրույքաչափն այդ դեպքում կարող է սահմանվել տարեկան 1,5%: Ընդհանուր միտումն աշխարհում այնպիսին է, որ համահարթ դրույքաչափ է սահմանվում և ըստ աշխատանքային տարիների չի տարբերակվում: Սակայն, կարելի է տարբերակում իրականացնել ըստ աշխատավարձի մեծության, և միջինից ցածր աշխատավարձի դեպքում դրույքաչափը բարձրացնել:

¹⁴⁵ Բազային գործակիցն ընտրվել է որպես 1,1, քանի որ, ըստ ՏՀԶԿ-ի, արդյունավետ համահարթ հաշվեգրման դրույքաչափը կանխատեսվում է, որ պետք է լինի 1,1-ը (տե՛ս Pensions at a Glance 2021, OECD AND G20 INDICATORS, OECD (2021), OECD Publishing, Paris, p. 128):

¹⁴⁶ Ավելի արդյունավետ է և ընդունված, քան գնաճի տեմպով վերահաշվարկը, քանի որ այդ դեպքում աշխատանքային կենսաթոշակի մեծությունը կարող է մինչև 40%-ի չափով ավելի փոքր ստացվել:

2.3

Հայաստանի Հանրապետությունում աշխատավարձերի սահմանման գործող կարգավորումների թերությունների վերացման և կատարելագործման լուծումների մշակումը փորձագիտական գնահատականների հիման վրա

Հայաստանի Հանրապետությունում աշխատավարձերի սահմանման գործող կարգավորումների թերությունների վերհանման և վարձատրության հնարավորինս արդյունավետ լուծումներ մշակելու նպատակով սույն ուսումնասիրության շրջանակներում հետազոտական խումբը, նախապես կազմված հարցաշարի հիման վրա, պարզաբանել է փորձագիտական հանրային մոտեցումներն ու տեսակետները: Հարցմանը մասնակցել է վեց փորձագետ, որոնցից երեքը նշյալ ոլորտի հասարակական կազմակերպությունների, իսկ երեքը՝ պետական կառավարման համակարգի ներկայացուցիչներ են: Փորձագիտական հարցումն իրականացվել է հարցազրույցի միջոցով, որը ներկայացվել է ըստ հարցաթերթի բաժինների:

1. Արդյո՞ք պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության միասնական համակարգը, ինչպես նաև պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պարտականություններին, պատասխանատվությանը համապատասխանող պաշտոնի անձնագրերով նախատեսված գործառույթները և դրանց դիմաց նրանց տրված աշխատավարձերը համադրելի են: Եթե ոչ՝ խնդրում ենք մեկնաբանել:

Ընդհանուր առմամբ, բոլոր փորձագետները նշել են, որ պաշտոնի անձնագրերով նախատեսված գործառույթները և դրանց դիմաց տրված աշխատավարձերը համադրելի չեն: Միևնույն ժամանակ, մեկնաբանելով հարցը, փորձագետներից մեկը նշել է, որ արդեն 8-9 տարի է՝ պետական համակարգում աշխատավարձ ընդհանրապես չի վերանայվում, հետևաբար այն համահունչ չէ ներկայումս գործող վարձատրությանը, այն դեպքում, երբ և՛ կատարված աշխատանքների շրջանակը, և՛ աշխատողների ծանրաբեռնվածությունը տարիների ընթացքում ավելանում են՝ անփոփոխ վարձատրության պայմաններում:

Փորձագետներից մեկի կարծիքով՝ պետական պաշտոնյաները պետք է լավ վարձատրվեն, հագնվեն, սնվեն և հանգստանան, որ կարողանան արդյունքատու աշխատանք կատարել: Գործնականում կատարած աշխատանքի դիմաց վարձատրությունը համապատասխան չէ: Հայաստանում պետական կառույցների աշխատանքը դրակվել է չինստիտուցիոնալացված, և Հայաստանը ևս, միաբժեքորեն, ինստիտուցիոնալ երկիր չէ: Այս համատեքստ

տում փորձագետներից մեկն առաջարկել է կիրառել պետական պաշտոնյաների ամենամյա ատեստավորման համակարգ:

Մեկ այլ փորձագետ կարծում է, որ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնների անձնագրերում նախատեսված իրավասությունները, պարտականությունները, պատասխանատվությունը և դրանց համապատասխան աշխատանքի վարձատրության ու պարգևատրման համակարգերը ներկայումս գործող օրենսդրության կարգավորումներով կրում են «ավտորիտար» համակարգին բնորոշ իրավակարգավորումներ, ինչին ներհատուկ է ուղղահայաց կառավարման ու անպատասխանատվության մշակույթը: Փորձագետը ներկայացրել է վերոնշյալ համակարգերին բնորոշ բացթողումները.

- անբավարար արհեստավարժություն բոլոր մակարդակներում, ոչ արժանիքահեն և ոչ մրցունակ հանրային ծառայություն, վարձատրության, խրախուսման ու առաջընթացի, կարողությունների զարգացման անարդյունավետ համակարգ, հանրային ծառայողի կերպարի խեղաթյուրված ընկալում,
- հանրությանը մատուցվող ծառայությունների անբավարար որակ,
- պատասխանատվության, իրավասության ու դրանք իրացնելու գործիքակազմի միջև աղճատվածություն, հաճախակի ու կամայական կառուցվածքային տեղաշարժեր, արդյունքում՝ անընդհատ ադապտացիոն շրջափոխում ընկղմված, գերազանցապես ինքնապահպանման շարժառիթով առաջնորդվող ու խորքային բարեփոխումների նկատմամբ հակազդեցությամբ օժտված համակարգ,
- քաղաքականության համար պատասխանատու ինստիտուտների ձախողման ռիսկն այլընտրանքային մեխանիզմներով կամ զուգահեռ լուծումներով լրացնելու, ոչ ֆորմալ գործելակերպերով փոխարինմանը խաթարող պրակտիկայի առկայություն և այլն:

Մինևույն ժամանակ, փորձագետը հավելել է, որ հանրային, քաղաքացիական ծառայության կազմակերպման և աշխատանքի վարձատրության ու պարգևատրման համակարգերը մարդակենտրոն չեն: Դրանք ուղղված են սոսկ կառավարման բուրգի ուղղահայաց հարաբերությունների կարգավորմանը և բոլորովին հաշվի չեն առնում ժողովրդին հանրային ծառայություն մատուցելու որակի ու պատասխանատվության հանգամանքները: Այդ համակարգերում հիմնականում բացակայում են մասնակցային, թափանցիկ և հաշվետու գործելաոճերը: Չկա կամ խիստ ձևական է համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ և շատ փոքր է նրանց որոշ իրավասությունների պատվիրակման ծավալը: Վերջինս վերաբերում է հիմնականում հանրային ծառայությունների մատուցման մշտադիտարկմանը:

Վերոհիշյալ համատեքստում խիստ անհրաժեշտ է, որպեսզի բրզանն «հրահանգում և վերահսկում» (command and control) սկզբունքով վարչարա-

րությունից անցում կատարվի համագործակցային ու ցանցային կառավարման մոդելին՝ ապահովելով «ներքևից վերև» սկզբունքի արդյունավետ գործարկում՝ խնդիրների բացահայտման, նախաձեռնության դրսևորման և հորիզոնական համագործակցության նպատակով: Հրամայական է այն մարտահրավերը, որ պետությունը պետք է հաշվետու լինի քաղաքացիների առջև իր գործունեության և արդյունքների համար, և, որպես լիազորված որոշում ընդունող ու կիրարկող «գործակալ», ձգտի ամրապնդել նրանց մասնակցության և ելքի ("voice and exit") հնարավորությունները:

Անհրաժեշտ է Հայաստանում հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունն իրականացնելիս մշտապես հիշել Տարոն Աճեմօղլուի և Ջեյն Ա. Ռոբինսոնի «Ինչո՞ւ են ձախողվում պետությունները»¹⁴⁷ մեկնադրության բազմաթիվ եզրակացություններից մեկը: Այն է. ներառական տնտեսական հաստատություններն ունեն պետության կարիքը և օգտագործում են այն: Ներառական տնտեսական հաստատությունների՝ ներառական շուկաների ներուժը սանձելու, տեխնոլոգիական նորարարությունը խթանելու, մարդկային ռեսուրսներում ներդրումներ անելու և մեծ թվով մարդկանց տաղանդներն ու հմտությունները արթնացնելու հնարավորությունները տնտեսական աճի համար էական դեր ունեն:

Միջազգային պարտավորությունների առումով նշվել է, որ ՀՀ-ն ստորագրել է ԱՄԿ (Աշխատանքի միջազգային կազմակերպություն) 1970 թ.

¹⁵⁴ Աղբյուրը՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=93597>

հունիսի 3-ի «Նվազագույն աշխատավարձի մասին» N 131 կոնվենցիան¹⁵⁵, որի նորմերը ուժի մեջ են մտել 2006 թ. ապրիլի 29-ից և, փաստորեն, այդ ժամանակից ի վեր Հայաստանը խախտում է միջազգային նորմը և ՀՀ զբաղված քաղաքացիների համար երաշխավորում է ոչ արժանապատիվ նվազագույն աշխատավարձ (ներկայումս 68.000 ՀՀ դրամ): Այդ կոնվենցիայով սահմանվում է.

- «Նվազագույն աշխատավարձի օրենքով ամրագրված չափը աշխատողի համար պետության կողմից սահմանված երաշխիք է,
- նվազագույն աշխատավարձն ունի օրենքի ուժ և նվազեցման ենթակա չէ: Այս դրույթի չկիրառումը պատասխանատու անձի կամ անձանց նկատմամբ առաջացնում է քրեական կամ այլ պատասխանատվություն»,
- «Նվազագույն աշխատավարձի մակարդակի սահմանման ժամանակ հաշվի առնվող գործոնները, որքանով հնարավոր և ընդունելի է ազգային գործելակերպին և պայմաններին համապատասխան, ներառում են.
 - ա) աշխատողների և նրանց ընտանիքների պահանջմունքները՝ ուշադրության առնելով երկրում ընդունված աշխատավարձի ընդհանուր մակարդակը, կենսապահովման նվազագույն ծախսերը, սոցիալական նպաստները և այլ սոցիալական խմբերի կյանքի համեմատական մակարդակը,
 - բ) տնտեսական գործոնները՝ ներառյալ տնտեսական զարգացման պահանջները, արտադրողականության մակարդակը և զբաղվածության բարձր մակարդակի ձեռքբերման և պահպանման ցանկալիությունը»:
- Միաժամանակ, կոնվենցիայի 4-րդ հոդվածը ԱՄԿ յուրաքանչյուր անդամ երկրի պարտադրում է նվազագույն աշխատավարձի սահմանման ժամանակ կիրառել այնպիսի ընթացակարգ, որը.
 - ✓ թույլ է տալիս սահմանել և ժամանակ առ ժամանակ վերանայել վարձու աշխատող անձանց խմբերի նվազագույն աշխատավարձը, և
 - ✓ այդպիսի ընթացակարգի ստեղծման, գործադրման և փոփոխման կապակցությամբ նախատեսվում են սպառիչ խորհրդակցություններ գործատուների և աշխատողների շահագրգիռ ներկայացուցչական կազմակերպությունների հետ կամ, որտեղ այդպիսիք չկան, գործատուների և աշխատողների շահագրգիռ ներկայացուցիչների հետ¹⁵⁶:

¹⁵⁵ Աղբյուրը՝ Կոնվենցիա նվազագույն աշխատանքի սահմանման մասին:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24642>

¹⁵⁶ Նույն տեղում:

Փորձագետը ամփոփելով նշում է, որ մեր երկրում աշխատանքի վարձատրության իրականացվող քաղաքականության վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Կառավարությունը նվազագույն աշխատավարձի վերանայման ժամանակ ոչ միայն չի խորհրդակցել գործատուների և աշխատողների շահագրգիռ ներկայացուցչական կազմակերպությունների հետ, այլև սահմանել է այնպիսի նվազագույն աշխատավարձ, որը հակասում է Կոնվենցիայի պահանջին և չի կարող երաշխավորել աշխատողի տարրական պահանջմունքների բավարարումը: Նման պայմաններում խոսք չի կարող լինել արդեն աշխատողի ընտանիքի անդամի պահանջմունքների բավարարման մասին: Ինչ վերաբերում է միջին և նվազագույն աշխատավարձերի հարաբերակցության հարցադրմանը, ապա այն պետք է լինի առաջարկվող միջազգային չափորոշիչների տիրույթում՝ հաշվի առնելով երկրի՝ տվյալ պահի քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակը: Փորձագետը պնդում է, որ այդ հարաբերակցության չափը պետք է համապատասխանեցվի իր կողմից հաշվարկված սպառողական նվազագույն գամբյուղի արժեքին, և նվազագույն աշխատավարձը պետք է կազմի 130.000 ՀՀ դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ առնվազն դրանից 2 անգամ բարձր, որպեսզի ապահովվեն ՀՀ միջին վիճակագրական ընտանիքի նվազագույն կենսապայմանները:

Այսպիսով, հետազոտական աշխատանքի թեմայի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները, հիմնական և մակրոտնտեսական ցուցանիշների շարժընթացի վերլուծությունները ցույց են տալիս, որ Հայաստանի տարածքային միավորների աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները, սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները պայմանավորել են տարածքային միավորների զարգացման անհամաչափություններ: Տնտեսական զարգացումը հիմնականում կենտրոնացել է Երևանում, ապա նաև՝ Սյունիքում, մասամբ՝ Կոտայքում: Մասնավորապես, ՀՆԱ-ների գնահատականների վերլուծությունը վկայում է, որ տնտեսական զարգացումը կենտրոնացած է հիմնականում Երևանում և Սյունիքի մարզում:

Աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշների սեզոնայնության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում աշխատավարձ-գրադվածություն-գործազրկություն առաձգականությունն արտահայտվում միայն դեկտեմբեր ամսին, այսինքն, ընդհանուր առմամբ, ամենաազդեցիկ գործոնը չէ: ՀՆԱ-ի և գործազրկության կապի մոդելավորման արդյունքը վկայում է, որ Հայաստանում 1%-ով ՀՆԱ-ի աճը ենթադրում է 0.26%-ով գործազուրկների կրճատում: Քանի որ ՀՀ-ն 2022 թ. վերջին նախատեսում է գրանցել 7% տնտեսական աճ, հետևաբար 2022-ին միայն տնտեսական աճի հաշվին գործազուրկների թիվը 1.8%-ով կնվազի: Զբաղվածության մակարդակի վրա ժողովրդագրական գործոնների ազդեցության գնահատումը փաստում է, որ ՀՀ-ի համար էական խնդիր է գյուղական բնակչության աճի և կյանքի որակի խթանման թիրախավորումը, քանի որ այն ուղղակիորեն կրթելավի ՀՀ զբաղվածության մակարդակը, հետևաբար կհանգեցնի բնակչության ընդհանուր բարեկեցության մակարդակի աճին: Ընդ որում, մեկ միավոր ՀՆԱ-ի աճը հանգեցնում է 0.51 միավոր առևտրաշրջանառության աճին, մեկ միավոր աշխատավարձի աճը հանգեցնում է 26,582,473 միավոր ՀՆԱ-ի աճին, իսկ մեկ միավոր կապիտալի աճը՝ 0.65 միավոր ՀՆԱ-ի աճին: Յուրաքանչյուր էլաստիկության գործակից ցույց է տալիս կոնկրետ մարզում 1 ԱՄՆ դոլարով աշխատավարձի աճի հետևանքով ստացված համախառն ներքին արդյունքի աճը: Երևանի տնտեսական ներուժի համեմատական առավելությունն ակնհայտ է: Մեկ ԱՄՆ դոլարով աշխատավարձի աճը էական ազդեցություն է թողնում նաև Սյունիքի, Արարատի, Կոտայքի և Արմավիրի մարզերի ՀՆԱ-ի ծավալների աճի վրա, սակայն տնտեսական ոչ բավարար ներուժ ունեցող մարզերում նշված ազդեցությունն էական չէ:

Գնահատված ծրագրային ընթացիկ խնդիրների լուծումների վերաբերյալ ամփոփ առաջարկությունները ներկայացված են հաջորդիվ:

Ելնելով ամենամյա ծրագրերի պլանավորման և իրականացման արդյունքների ընդհանուր գնահատումներից՝ օբյեկտիվորեն կարելի է փաստել:

անհրաժեշտ է նախատեսել 2023 թ. ամենամյա ծրագրի ֆինանսավորման ան առնվազն 7,7%-ով (սոցիալական պաշտպանության ոլորտի տարեկան ֆինանսավորման նախատեսված աճի չափով)՝ նախորդ տարվա հաստատվածի համեմատ: Ֆինանսավորման աճին համաչափ պետք է ավելացվեն նաև ամենամյա ծրագրերում շահառուների ընդգրկման և նրանց կայուն զբաղվածության (աշխատանքի տեղավորման) ապահովման թիրախային ցուցանիշները:

Ի լրումն զբաղվածության առանձին ծրագրերի իրականացման գործընթացներում գնահատված ընթացիկ խնդիրների՝ ֆինանսավորման միջաժամկետ պլանավորման, ինչպես նաև յուրաքանչյուր հաջորդ տարվա ծրագրի մշակման շրջանակներում առանձնակի ուշադրության են արժանի՝

- ամենամյա ծրագրերի ֆինանսական և ոչ ֆինանսական ընդհանուր ցուցանիշների շարունակական ցածր կատարողականները,
- հաստատված ամենամյա ծրագրերի իրականացման տարում միջծրագրային էական վերաբաշխումները և դրանց հետևանքով ամենամյա ծրագրի մեկ շահառուի հաշվով ծախսարդյունավետության փաստացի միջին ցուցանիշի շարունակական նվազումը,
- հաստատված որոշ ծրագրերի գրոյական կատարողականը,
- հիմնական ծրագրերի գծով հաստատված արդյունքային թիրախների և փաստացի ապահովված ցուցանիշների բացասական, խրոնիկ մեծ շեղումները:

Նշված խնդիրների ծանրակշիռ մասը հետևանք է ամենամյա ծրագրերի իրականացման գործընթացների կառավարման, կազմակերպչական և վերահսկողական բացերի: Նշված բացերն ակնհայտորեն նվազեցնում են զբաղվածության պետական աջակցության առաջնային կարևորություն ունեցող և կայուն զբաղվածություն ապահովող պետական ծրագրերի արդյունք ապահովելու իրական ներուժը: Խոսքը հատկապես վերը ներկայացված զբաղվածության այն ծրագրերի մասին է, որոնց անմիջական արդյունքը աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորումն է պետական աջակցությամբ, ինչպես նաև որոշակի թիրախային խումբ շահառուների՝ աշխատանքը կորցնելու ռիսկի կանխարգելումն է: Ամփոփ գնահատված ընթացիկ խնդիրներն ու բացերը հնարավոր է հետևողականորեն նվազեցնել՝ ոլորտի պետական կառավարման մեխանիզմներն ամբողջականացնելու և դրանց գործադրման արդյունավետությունը բարձրացնելու արդյունքում: Այս նպատակով կարելի է առանձնացնել զբաղվածության ոլորտի առաջնային բարեփոխումների հետևյալ երկու հիմնական ուղղությունները՝

- զբաղվածության էլեկտրոնային ծառայությունների և դրանցից օգտվողների ծածկույթի շարունակական ընդլայնումը, զուգահեռաբար՝ զբաղվածության պետական ծրագրերի էլեկտրոնային կառավարման համակարգի լիարժեք ներդրումը՝ բացառելով գործառնական ընթա-

ցիկ ռիսկերն ու ծրագրված թիրախներից անթույլատրելի շեղումները,

- զբաղվածության պետական ծրագրերի իրականացման գործընթացների ընթացիկ մշտադիտարկման գործուն համակարգի ներդրումը՝ առաջնային ապահովելով անհրաժեշտ տեղեկատվության և հաշվետվությունների էլեկտրոնային, ինքնաշխատ եղանակով ստացման լիարժեք հիմքերը:

Աշխատանքի վարձատրության նվազագույն չափը դիտվում է որպես Աշխատանքի միջազգային կազմակերպության արժանապատիվ աշխատանքի հայեցակարգի իրականացման գործիք: Նվազագույն աշխատավարձը դարձել է շատ երկրներում աղքատության դեմ պայքարի քաղաքականության համընդհանուր ընդունելի և ներկայումս ծայրահեղ ցածր աշխատավարձի դեմ պայքարելու լայնորեն կիրառվող գործիք: Նվազագույն աշխատավարձերի սահմանման կառուցակարգերը աշխարհի երկրներում զգալիորեն տարբերվում են: Աշխատողների տարբեր խմբերի համար որոշ երկրներում օգտագործվում են նվազագույն աշխատավարձերի տարբեր դրույքաչափեր. առանձին երկրներում կիրառվում են դրանց սահմանման շատ պարզ կառուցակարգեր, մյուսներում՝ բազմաթիվ ճյուղային և ոլորտային դրույքաչափեր:

Ուսումնասիրվող բոլոր երկրներում աշխատանքային օրենսդրությունն ամրագրում է այն իրողությունը, որ՝

- նվազագույն աշխատավարձը չի կարող ցածր լինել կենսապահովման նվազագույնից:
- Նվազագույն աշխատավարձի սահմանման մեթոդներից մեկը հիմնվում է կենսապահովման նվազագույնի, իսկ մյուսը՝ միջին աշխատավարձի հետ հարաբերակցության վրա: Եթե առաջին մեթոդը թույլ է տալիս սահմանել նյութական բարեկեցության նվազագույն նորմերը, որոնք կիրառվում են պակաս տնտեսական հնարավորություններ ունեցող երկրներում, ապա երկրորդ մեթոդը կարելի է դիտարկել որպես տնտեսապես զարգացած երկրների առավելություն:
- Անցումային տնտեսություն ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ռուսաստանը, Բելառուսը, Վրաստանը և Հայաստանը, նվազագույն աշխատավարձի սահմանման առումով համադրելի չեն: Եթե Ռուսաստանի Դաշնությունում նվազագույն աշխատավարձի մեծությունը կախված է միջին աշխատավարձից ու նախորդ տարվա միջին եկամտից և, ընդհանուր առմամբ, չի կարող ցածր լինել աշխատունակ բնակչության կենսապահովման նվազագույնից, ապա Բելառուսում այն սահմանվում է հետևյալ գործոնների հաշվառմամբ. նվազագույն կենսապահովման ընթացիկ բյուջե, երկրում միջին աշխա-

տավարձի մակարդակ, գնաճի տեմպեր, գործազրկության մակարդակ և այլն:

- Վրաստանում և Հայաստանում նվազագույն աշխատավարձի սահմանումը որևէ տնտեսական ցուցանիշի հետ կապակցված չէ:

Ժամանակակից աշխարհում արժանապատիվ կենսամակարդակ ապահովող եկամտի հաշվարկման համար ընդունելի է գիտականորեն մշակված կենսապահովման նվազագույն զամբյուղը: Ճշգրիտ հաշվարկված կենսապահովման զամբյուղի և դրան համարժեք կենսապահովման բյուջեի հիման վրա է կառուցվում երկրի պետական բյուջեն՝ հիմնական ֆինանսական օրենքը, դրանով են առաջնորդվում մասնավոր ոլորտի տնտեսավարող սուբյեկտները: Կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի միջոցով հիմնավորվում են նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների սահմանվող մեծությունները:

ՀՀ-ում աշխատավարձերի սահմանման գործող կարգավորումների, ինչպես նաև փորձագիտական հարցումների արդյունքում արձանագրվել են հետևյալ խնդիրները՝

- ընդհանուր առմամբ, պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի համակարգային բարձրացում վերջին 8-9 տարվա ընթացքում տեղի չի ունեցել, իսկ պաշտոնի անձնագրերով նախատեսված գործառույթները և դրանց դիմաց տրված աշխատավարձերը, ըստ էության, համադրելի չեն:
- Հանրային և մասնավոր հատվածների աշխատավարձերի մակարդակների միջև տարբերությունը բավականին մեծ է:
- Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնների անձնագրերում նախատեսված իրավասությունները, պարտականությունները, պատասխանատվությունը և դրանց համապատասխան՝ աշխատանքի վարձատրության համակարգը թերի է, իսկ ներկայումս գործող պարզևատրումների կամ լրացուցիչ աշխատավարձի տրամադրման մեխանիզմներն անկատար են, աշխատանքի արդյունավետության խրախուսման խնդիրը չեն լուծում և ունեն վերանայման կարիք:
- Աշխատանքի վարձատրության վերաբերյալ վիճակագրական տվյալներն ամբողջական չեն:
- Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության չափերի տարբերակումը ինստիտուցիոնալ առումով հիմնավորված չէ:
- Գործող աշխատավարձի համակարգը չի ապահովում ավելի բարձր պաշտոն զբաղեցնելու ձգտումը, ինչպես նաև առաջխաղացման

դեպքում աշխատավարձի գործակցային, պատասխանատվության, իրավասությունների ծավալի աճը անհամաչափ է:

- Աշխատանքի արդյունքատվության գնահատման համակարգը թերի է և կամայական, դրանով հնարավոր չէ միանշանակ գնահատել կատարողականի արդյունավետությունը:
- Աշխատավարձերի կարգավորման գործող մեխանիզմներով Հայաստանի վերափոխման մինչև 2050 թ. ռազմավարությամբ նախատեսված երկարաժամկետ թիրախներին հասնել հնարավոր չէ:
- Հանրային կառավարման բարեփոխումների 2022-2024 թթ. ռազմավարությամբ արձանագրված՝ հանրային ծառայողների աշխատավարձի համակարգի և մակարդակի խնդիրները, աշխատավարձերի կարգավորման գործող մեխանիզմներով հնարավոր չէ լուծել:
- 2004 թ. մարտին ընդունված «Կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքը չի գործել, իսկ դրանում նշված դրույթները, բացառությամբ մեկի, երբևէ չեն պահպանվել:
- Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի անվանական չափը ներկայումս կազմում է 66140 ՀՀ դրամ, որն ունի վերանայման կարիք:
- Աշխատավարձի նախատեսվող բարձրացումները համարժեք չեն շարունակվող բարձր գնաճին, որի հետևանքով 1 շնչի հաշվով նվազագույն սպառողական զամբյուղի արժեքն աճում է առաջանցիկ: Մասնավորապես, միայն այս տարվա առաջին կիսամյակում 1 շնչի հաշվով նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը 71 570 ՀՀ դրամից դարձել է 82 198 ՀՀ դրամ: Աճը կազմում է 10 630 ՀՀ դրամ կամ շուրջ 15 տոկոս: Հատկանշական է նաև, որ գնաճային բարձր ճնշումներն ունեն շարունակական միտում:

Որպես արձանագրված խնդիրների լուծումներ՝ առաջարկվում է.

- ներդնել արժանապատիվ և մրցունակ վարձատրության ինստիտուցիոնալ համակարգ՝ բարձր արդյունատվության և «ֆիսկալ տարածության» պահպանման նախապայմանով:
- Իրականացնել աշխատավարձի վերանայում՝ կատարողականի և արդյունքի վրա հենված գնահատման համակարգի սկզբունքների պահպանմամբ:
- Առաջարկվում է, որպեսզի բրգաձև «իրահանգում և վերահսկում» (command and control) սկզբունքով վարչարարությունից անցում կատարվի համագործակցային ու ցանցային կառավարման մոդելին՝ ապահովելով «ներքևից վերև» սկզբունքի արդյունավետ գործար-

կում՝ խնդիրների բացահայտման, նախաձեռնության դրսևորման և հորիզոնական համագործակցության նպատակով:

- Նոր չափորոշիչների հիման վրա ներդնել պարզևատրման համակարգ, որի հիմնական նպատակը շահադրդումն է: Պարզևավճարը պետք է բարձրացնի աշխատանքի արտադրողականությունը և արդյունքատվությունը, միևնույն ժամանակ, այն չպետք է ունենա հայեցողական մոտեցումներ և պետք է տրվի արդյունքների և կատարողականի հիման վրա:

Առնվազն պետք է ապահովել, որ նվազագույն ամսական աշխատավարձի արժեքը մեծ լինի սպառողական զամբյուղի արժեքից կամ հավասար լինի վերջինիս: Նվազագույն ամսական աշխատավարձի մեթոդաբանության հիմքում պետք է ներդնել տնտեսական բաղադրիչներ՝ արտադրողականության և արդյունքատվության ապահովմամբ և այն չսահմանել զուտ սոցիալական կարիքներից և սոցիալական նպատակներից դրդված:

1. Աղքատությունը, զբաղվածությունը և սոցիալական խնդիրները Հայաստանում. ՀՀ Կառավարության գործունեության ուսումնասիրություն», «Լոյս» հիմնադրամ:
2. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021:
3. Հայաստանի Հանրապետության օրենքը «Նվազագույն աշխատավարձի մասին», <http://www.irtek.am/views/act.aspx?aid=23369>
4. «ՀՀ աշխատաշուկայի վերլուծություն և զբաղվածության պետական կարգավորման ծրագրային լուծումներ», «Ամբերդ» մատենաշար 40, Եր., 2021, «Տնտեսագետ» հրատարակչություն:
5. ՀՀ օրենքը «Պետական կենսաթոշակների մասին»:
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=64540>
6. ՀՀ օրենքը «Կուտակային կենսաթոշակների մասին»:
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=64546>
7. ՀՀ օրենքը «Կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին»:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1575>
8. Долгих Е.А., Статистический анализ занятости и безработицы в Российской Федерации. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук. М., 2010.
9. Ефимова Е., Установление минимальной заработной платы: зарубежный опыт и российская практика.
https://www.imemo.ru/index.php?page_id=1248&file=https://www.imemo.ru/files/File/magazines/meimo/02_2011/3-Efimova.pdf
10. Ивановская Л.А., Влияние минимальной зарплаты на рынок труда,
https://www.researchgate.net/publication/313277950_Vlianie_minimalnoj_zarplaty_na_rynok_truda
11. Ильин А. Е., К вопросу о минимальном размере оплаты труда, <http://www.m-economy.ru/art.php?nArtId=692>
12. Кремер Н. Ш., Путько Б. А., Эконометрика: учебник. - М: ЮНИТИ-ДАНА, 2002, 311 с.
13. Маилян Ф. Н., Влияние института минимальной заработной платы на рынок труда,
<https://nsu.ru/xmlui/bitstream/handle/nsu/2908/19.pdf?sequence=1&isAllowed=y>
14. Роик В. Д., Минимальная заработная плата - геном социально-трудовых отношений // Социально-трудовые исследования, 2019, № 3 (36).
15. Стройкина Н. В., Статистический анализ и прогнозирование развития рынка труда в Оренбургской области. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук. М., 2011.
16. Установление размера минимальной заработной платы в субъекте Российской Федерации. (Введена Федеральным законом от 20.04.2007 N 54-ФЗ).
<https://rulaws.ru/tk/CHAST-TRETYA/Razdel-VI/Glava-21/Statya-133/>

17. Christopher Adam and Edward Buffie, The Minimum Wage Puzzle in Less Developed Countries: Reconciling Theory and Evidence. IMF Working Papers, pp. 77. January 2020.
<https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2020/01/31/The-Minimum-Wage-Puzzle-in-Less-Developed-Countries-Reconciling-Theory-and-Evidence-48980>
18. Cobb C.W., Dauglas P.H.. Theory of Production // American Economic Review, Supplement, 1928, March.
19. European minimum wage policy: A concept for wage-led growth and fair wages in Europe Thorsten Schulten Hans Boeckler Foundation, Dusseldorf, International Journal of Labour Research, 2012, Vol. 4 Issue, pp. 86-88.
<http://nationalminimumwage.co.za/wp-content/uploads/2015/09/0204-European-minimum-wage-policy-A-concept-for-wage-led-growth-and-fair-wages-in-Europe.pdf>
20. Gindling T. H., Does increasing the minimum wage reduce poverty in developing countries? IZA, World of Labor. p.10, <https://wol.iza.org/articles/does-increasing-the-minimum-wage-reduce-poverty-in-developing-countries/long>
21. Godfrey M., Youth Employment Policy in Developing and Transition Countries, Preventions as well as Care, Social Protection: Discussion Paper No.320, 2003, World Bank, Washington, DC.
22. Granick David, Job Rights in the Soviet Union: Their Consequences, Cambridge: Cambridge University Press, 1987.
23. Holzmann R., Hinz R.P., Pension systems and reform conceptual framework, Social protection&Labor, World Bank, June 2008.
24. ILO, Minimum Wage Policy Guide, 120 p. 09, August, 2016.
https://www.ilo.org/wcmsp5/groups/public/-ed_protect/--protrav/--travail/documents/publication/wcms_508566.pdf
25. International Labour Organization 2016.
https://www.ilo.org/wcmsp5/groups/public/-ed_protect/--protrav/--travail/documents/publication/wcms_463192.pdf
26. Maqbool, M.S., Mahmood, T., Sattar, A., Bhalli, M.N., Determinants of unemployment: empirical evidence from Pakistan. Pakistan Economic and Social Review, 2013, 51(2).
27. Pensions at a Glance: Public Policies across OECD Countries, OECD 2005.
28. Richard Dickens. How are minimum wages set? IZA, World of Labor.
<https://wol.iza.org/articles/how-are-minimum-wages-set/long>
29. Stephen Bazen and John P. Martin, The Impact of the Minimum Wage on Earnings and Employment in France. <https://www.oecd.org/france/34280916.pdf>
30. UN, Department of Economic and Social Affairs Population Division, World Population Prospects 2022.
<https://population.un.org/wpp/Download/Standard/MostUsed/>
31. What Does the Minimum Wage Do in Developing Countries?A Review of Studies and Methodologies. Conditions of Work and Employment Series No. 62, p. 1. International Labour Organization 2016.
https://www.ilo.org/wcmsp5/groups/public/-ed_protect/-protrav/-travail/documents/publication/wcms_463192.pdf

32. www.armstat.am
33. www.w3.unece.org
34. www.data.worldbank.org
35. https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=Minimum_wage_statistics#Variations_in_national_minimum_wages
36. <https://wageindicator.org/salary/minimum-wage/france/archive-before-2019/minimum-wages-in-france-with-effect-from-01-01-2019-to-31-12-2019>
37. https://www.ilo.org/global/topics/wages/minimum-wages/setting-adjusting/WCMS_461287/lang-en/index.htm
38. <https://www.dol.gov/agencies/whd/minimum-wage/state>
39. <https://www.canada.ca/content/dam/esdc-edsc/documents/services/reports/SPAWID-SPLR-IssuePaper-MinWage-FINAL-EN.pdf>
40. <https://voyapon.com/minimum-wage-in-japan/>
41. <https://www.china-briefing.com/news/minimum-wages-china-2022/>
42. <https://take-profit.org/en/statistics/wages/belarus/>
43. <https://www.geostat.ge/en/modules/categories/39/wages>
44. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=2322>
45. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=94713>
46. https://www.lifeyrismal.is/static/files/images/Manadarpostar/2021-global-pension-index-report_web.pdf
47. <https://www.oecd.org/els/public-pensions/oecd-pensions-at-a-glance-19991363.htm>
48. <https://myfin.by/wiki/term/pensiya-po-vozrastu-v-belarusi>
49. https://kodeksy-by.com/zakon_rb_o_pensionnom_obespechenii/11.htm
50. <https://matsne.gov.ge/ru/document/view/27946>
51. <https://www.agenda.ge/en/news/2019/13>
52. <https://matsne.gov.ge/ru/document/view/27946?publication=29>
53. <http://www.iopsweb.org/resources/38766497.pdf>
54. <https://etalonline.by/document/?regnum=v19201596>
55. <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTISocialSecurityPayment>
56. <https://worldpopulationreview.com/country-rankings/median-age>

Ջրաղվածության կարգավորման 2021 և 2022 թվականների պետական ծրագրերի ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները

Ծրագրի (միջոցառման) անվանումը	2021 թ. ծրագրում փաստացի ընդգրկված անձանց թիվը, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող (մնարդ) ¹⁵⁷	2021 թ. պետական բյուջեից փաստացի ծախսված ֆինանսական միջոցների չափը (հազ. ՀՀ դրամ) ¹⁵⁸	2021 թ. ծրագրի աջակցությամբ աշխատանքի տեղավորվածների և (կամ) ինքնազբաղվածների թիվը (մնարդ) ¹⁵⁹	4-րդ պլանում նշված անձանցից աշխատանքի ազատված և (կամ) ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցրած անձանց թիվը (մնարդ) ¹⁶⁰	2021 թ. ծրագրով նախատեսված շահառուների թիվը (մնարդ) ¹⁶¹	2022 թ. ծրագրով նախատեսված շահառուների թիվը (մնարդ) ^{162, 163}
1	2	3	4	5	6	7
Աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորման միջնորդություն (առանց զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկելու)	Միջնորդություն ստացած և աշխատանքի տեղավորված անձանց թիվը, այդ թվում՝ զբաղվածության պետական ծրագրերի միջոցով՝ 10 117 Ուղեգրով, առանց զբաղվածության պե-		Ծրագրերի արդյունքում զբաղվածություն ձեռք բերած անձանց թիվը՝ 1 258	Ծրագրերի արդյունքում զբաղվածություն ձեռք բերած, ապա աշխատանքից ազատված կամ ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցրած անձանց թիվը՝ 11	-	-

¹⁵⁷ Աղյուսակի 2-րդ պլանի ցուցանիշների վերաբերյալ տվյալները ստացվել են ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչությունից:
¹⁵⁸ Աղյուսակի 3-րդ պլանի ցուցանիշների վերաբերյալ տվյալները ստացվել են ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչությունից:
¹⁵⁹ Աղյուսակի 4-րդ պլանի ցուցանիշների վերաբերյալ տվյալները ստացվել են ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչությունից:
¹⁶⁰ Աղյուսակի 5-րդ պլանի ցուցանիշների վերաբերյալ տվյալները ստացվել են ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչությունից:
¹⁶¹ ՀՀ Կառավարության 2020 թ. սեպտեմբերի 29-ի N 1599-Լ որոշում՝ Ջրաղվածության կարգավորման 2021 թ. պետական ծրագիր, 2-րդ հավելված:
¹⁶² ՀՀ Կառավարության 2021 թ. սեպտեմբերի 30-ի N 1589-Լ որոշում՝ Ջրաղվածության կարգավորման 2022 թ. պետական ծրագիր, 2-րդ հավելված:
¹⁶³ Աղյուսակի 7-րդ պլանի՝ ճշտված պլանի վերաբերյալ տվյալները ստացվել են ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչությունից:

	տական ծրագրերում ընդգրկվելու՝ 2 057 Բոլոր ծրագրերում փաստացի ընդգրկված անձանց թիվը՝ 3 484, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց թիվը՝ 174					
Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատագրվման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում	Ծրագրում ընդգրկվածները՝ 487, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող՝ 58 -	Փաստացի ծախսը՝ 40520.73	Աշխատանքի տեղավորված՝ 30	Աշխատանքից ազատված՝ 0	700 (ճշտված պլան՝ 487)	434 (ճշտված պլան՝ 0)
Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատագրվման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում		Փաստացի ծախսը՝ 39166.43			-	-
Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները համար դասընթացների կազմակերպում	Ծրագրում ընդգրկվածները՝ 28	Փաստացի ծախսը՝ 2564.1	Աշխատանքի տեղավորված՝ տեղեկատվություն առկա չէ	Աշխատանքից ազատված՝ տեղեկատվություն առկա չէ	28 (ճշտված պլան՝ 28)	-

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման տրամադրում	Ծրագրում ընդգրկվածները՝ 33, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող՝ 33	Փաստացի ծախսը՝ 13592.45	Աշխատանքի տեղավորված՝ 33	Աշխատանքից ազատված՝ 1	50 (ճշտված պլան՝ 40)	16 (ճշտված պլան՝ 16)
Հաշմանդամություն ունեցող անձանց ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում	Ծրագրում ընդգրկված՝ 0:	Փաստացի ծախսը՝ 0	-	-	5 (ճշտված պլան՝ 5)	3 (ճշտված պլան՝ 3)
Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում	Ծրագրում ընդգրկվածները՝ 353, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող՝ 9	Փաստացի ծախսը՝ 139000.7	Աշխատանքի տեղավորված՝ 353	Աշխատանքից ազատված՝ 4	409 (ճշտված պլան՝ 347)	367 (ճշտված պլան՝ 367)
Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում	Ծրագրերի թիվը՝ 0:	Փաստացի ծախսը՝ 0	-	-	Ծրագիր՝ 10 (ճշտված պլան՝ 0)	-
Գործազուրկին իր բնակավայրից դուրս այլ վայրում աշխատանքի տեղավորմանն աջակցության տրամադրում	Ծրագրում ընդգրկվածները՝ 0, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող՝ 0	Փաստացի ծախսը՝ 0 <i>(2021 թ-ից ծրագրի իրականացումը դադարեցվել է</i>	-	-	22 (ճշտված պլան՝ 0)	-
Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում	Ծրագրում ընդգրկվածները՝ 359, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող՝ 4	Փաստացի ծախսը՝ 69877.03	Աշխատանքի տեղավորված՝ 359:	Աշխատանքից ազատված՝ 2:	1000 (ճշտված պլան՝ 375)	489 (ճշտված պլան՝ 489)

Աշխատաշուկայում ան- մրցունակ անձանց՝ փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղ- վելու համար աջակցու- թյան տրամադրում	1. Ծրագրում ընդ- գրվածները՝ 0, այդ թվում՝ հաշմանդա- մություն ունեցող՝ 0 Փոքր ձեռնարկա- տիրական գործունե- ությամբ զբաղվելու համար՝ խորհրդա- տվություն ստացած անձանց թիվը՝ 0	Փաստացի ծախսը՝ 0 (2021 թ. ծրագիրը չի իրականացվել)	-	-	50 (ճշտված պլան՝ 0)	33 (ճշտված պլան՝ 0)
Աշխատաշուկայում ան- մրցունակ անձանց՝ փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղ- վելու համար աջակցու- թյան ծրագրի իրակա- նացման խորհրդատվա- կան ծառայությունների ձեռքբերում	Միջոցառումների թիվը՝ 475, այդ թվում՝ հաշման- դամություն ունեցող՝ 68	Փաստացի ծախսը՝ 413047.26	Անասնապահական գործունեություն սկսած անձանց թիվը՝ 475	Անասնապահական գործունեությունը դա- դարեցրած անձանց թիվը՝ 4	500 (ճշտված պլան՝ 474)	449 (ճշտված պլան՝ 449)
Աշխատաշուկայում ան- մրցունակ անձանց ան- ասնապահությամբ զբաղ- վելու համար աջակցու- թյան տրամադրում	Մեզոնային զբաղվածու- թյան խթանման միջոցով գյուղացիական տնտեսու- թյանն աջակցության տրամադրում	Փաստացի ծախսը՝ 174977.7	X	X	764 (ճշտված պլան՝ 755)	716 (ճշտված պլան՝ 716)
Աշխատաշուկայում ան- մրցունակ և մասնագի- տություն չունեցող մայրե- րի համար գործատուի մոտ մասնագիտական ու- սուցման կազմակերպում:	Ծրագրում ընդ- գրվածները՝ 106, այդ թվում՝ հաշման- դամություն ունեցող՝ 0	Փաստացի ծախսը՝ 35392.24	Աշխատանքի տեղավորված՝ 8	Աշխատանքից ազատված՝ 0	173 (ճշտված պլան՝ 120)	-

<p>Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող, աշխատանք փնտրող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում</p>	<p>Ծրագրում ընդգրկվածները՝ 567, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող՝ 2</p>	<p>Փաստացի ծախսը՝ 475215.84</p>	<p>X</p>	<p>X</p>	<p>600 (ճշտված պլան՝ 600)</p>	<p>526 (ճշտված պլան՝ 526)</p>
<p>Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում</p>	<p>0</p>	<p>Փաստացի ծախսը՝ 0</p>	<p>X</p>	<p>X</p>	<p>84 ծրագիր՝ 840 շահառուի ընդգրկմամբ (ճշտված պլան՝ 0 ծրագիր)</p>	<p>60 ծրագիր՝ 480 շահառուի ընդգրկմամբ (ճշտված պլան՝ 60 ծրագիր՝ 480 շահառուի ընդգրկմամբ)</p>
<p>Վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ապահովում</p>		<p>Փաստացի ծախսը՝ 0: <i>(2021 թ. ծրագիրը չի իրականացվել)</i></p>				

2023 թ. զբաղվածության ծրագրերի ֆինանսավորման նախատեսված չափերը (հազար ՀՀ դրամ)¹⁶⁴

Հավելված 2

Ընդամենը զբաղվածության ամենամյա ծրագիր, այդ թվում*	1,536,073.2
Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատագրված ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցում	59,312.5
Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատագրված ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում	66,300.0
Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցություն	182,250.0
Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության ծրագրի մասնակիցների ուսուցման և խորհրդատվական ծառայություններ	30,000.0
Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնություն	69,768.0
Զեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցություն	181,541.2
Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցում	215,000.0
Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցություն	580,401.5
Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում	150,000.0
Վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ապահովում	1,500.0

¹⁶⁴ «ՀՀ 2023-2025 թթ.պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր», ՀՀ Կառավարության 2022 թ. հունիսի 30-ի նիստի օրակարգի 53-րդ հարց, հավելված 1, աղյուսակ 2:

Руководитель исследовательской группы

ЗОЯ ТАДЕВОСЯН

доктор экономических наук, профессор

Консультант исследовательской группы

Ваге Буланикян

кандидат экономических наук, доцент

Состав исследовательской группы

ТАДЕВОС АВЕТИСЯН

кандидат экономических наук, доцент

ТАТЕВИК МКРТЧЯН

кандидат экономических наук, доцент

ДИАНА МАТЕВОСЯН

*Аспирант кафедры международных
экономических отношений АГЭУ*

КАМО ДАВТЯН

*Аспирант кафедры экономико-
математических методов АГЭУ*

ГАМЛЕТ МКРТЧЯН

*Аспирант кафедры международных
экономических отношений АГЭУ*

***ПОЛИТИКА ТРУДА И ЗАНЯТОСТИ И ПЕНСИОННАЯ ПОЛИТИКА
В КОНТЕКСТЕ ФОРМИРОВАНИЯ СОЦИАЛЬНОГО ГОСУДАРСТВА***

DOI: 10.52174/978-9939-61-272-0

Проблема формирования, сохранения и развития человеческого капитала является приоритетной в социально ориентированной экономике. На основе анализа взаимосвязей основных и ряда макроэкономических показателей, характеризующих рынок труда марзов РА и города Еревана, оценки их тенденций, изучения международного опыта пенсионных и трудовых отношений в данном исследовании были разработаны и представлены новые подходы к решению проблем, связанных с методологическими основами формирования зарплат государственного и негосударственного секторов РА, действующими регламентами, установлением и увеличением размеров трудовых пенсий, рекомендации по оценке государственных программ и результатов содействия занятости, а также по устранению пробелов в социальной политике и совершенствованию существующих систем в указанных сферах.

**Анализ и оценка тенденций взаимосвязей основных и других
макроэкономических показателей, характеризующих рынок труда
марзов РА и г. Еревана**

Хотя безработица и неполная занятость по-прежнему являются серьезной проблемой для многих промышленно развитых стран, они наносят гораздо больший ущерб экономике развивающихся стран. Исследования показывают, что по сравнению со странами с высоким и выше среднего уровнем дохода, уровень безработицы в Арме-

нии вызывает беспокойство. Этот показатель примерно в 4 раза выше соответствующего показателя стран с доходом выше среднего. В 2021 году уровень безработицы в Армении составил 15,0%, что по сравнению с прошлым годом снизилось на 3,2%. В 2020 году ВВП на душу населения в странах с высоким уровнем дохода составил более 50000 долларов США, тогда как в странах с низким уровнем дохода - 2056 долларов США, что примерно в 24 раза меньше, чем в странах с развитой экономикой.

Анализ структуры ВВП по областям РА и городу Еревану показывает, что 58.4% ВВП приходится на Ереван, что оправдано, так как 37% населения Армении сосредоточено в столице. Это соответствует концентрации производственной, научно-технической и в целом экономической деятельности населения. Можно предположить, что производство валовой продукции в Армении крайне поляризовано. Еще более тревожным является то, что по объему производства ВВП разница между столицей Ереваном и Араратской областью, находящейся на втором месте, достигает 750%. Самый низкий удельный вес ВВП имеет Вайоц Дзорский марз, что обусловлено как небольшой территорией, так и нехваткой ресурсов. В Тавушском марзе, занимающей достаточно большую территорию и имеющей все предпосылки для развития сельского хозяйства и туризма, ситуация социально-экономического развития также неудовлетворительна.

Изучение доли занятых, постоянного населения и ВВП показывает, что столица лидирует по всем трем позициям. 29% от общего числа занятых приходится на город Ереван, в Араратской и Армавирской марзах проживает около 9% населения, однако по показателю занятости доля Армавира в общей численности населения на 2% больше, чем в Араратском марзе. В Армавире производится около 5,9% ВВП, а в Арарате - на один процентный пункт больше. Интересно, что только в Ереване и Сюнике показатель удельного веса постоянного населения меньше показателя ВВП, в остальных марзах картина противоположна.

Самый высокий показатель ВВП на душу населения также зафиксирован в столице - 3,527 тыс. драмов. Разрыв между показателями ВВП на душу населения Еревана и остальных регионов существенен.

В соответствии со стратегией развития региона РА на 2016-2025 гг, ВВП на душу населения к 2025 году в каждом отдельно взятом регионе превысит 60% от среднереспубликанского показателя ВВП на душу населения. Однако изучение соотношения ВВП на душу населения в марзах РА и ВВП на душу населения на уровне республики в 2016-2019 гг. показывает, что еще 36,3% марзов Армении, в том числе Тавуш, Ширак, Лори Гегаркуник отстают от установленного стандарта. На основе метода наименьших квадратов был сделан также прогноз с линейной зависимостью, из которого следует, что в прогнозируемый период марзы сохраняют 60%-ный порог, а Гегаркуник и Лори, по всей вероятности, не смогут достичь поставленной цели.

С момента обретения независимости численность постоянного населения нашей страны неуклонно сокращается, что, в частности, остро отражается на населении трудоспособного возраста. Сокращение указанной части населения и, параллельно с этим, увеличение удельного веса населения старше трудоспособного возраста как в настоящем, так и в будущем формируют серьезные вызовы в плане экономического развития.

По состоянию на 2021 год Армения занимает 113-е место среди стран мира по показателю плотности населения (на 1 кв. км 100 человек). Столица является самой гу-

стонаселенной территорией - 4896 человек на 1 кв. км. Из других регионов сравнительно густо заселены Араратская, Армавирская и Котайкская марзы.

С точки зрения распределения трудовых ресурсов существует значительная поляризация: около 30% трудовых ресурсов приходится на столицу, с долей безработных около 41% лидирует также Ереван. Эта тенденция сохраняется и во всех других регионах. Почти 70% трудовых ресурсов в Армении распределено в 36% территориальных единицах РА. За 2018-2019 гг. количество трудовых ресурсов в Ереване увеличилось примерно на 89,7 тыс., однако естественный прирост населения за тот же период составил всего 2,5%, в 2019 году, по сравнению с 2018 годом, естественный прирост составил 140 человек.

Параллельно увеличилась численность населения пенсионного возраста: с 171,4 тыс. в 2018 году достигнув 173,4 тыс. человек в 2020 году. В 2020 году наблюдается рост трудовых ресурсов в Тавушской, Вайоц Дзорской, Лорийской, Араратской и Арагацотнской марзах, при этом в вышеуказанных регионах практически нет изменений в численности пенсионеров.

По показателю занятости лидирует Армавирский марз - 68.3%, за ней следуют Сюникский - 61.9% и Арагацотнский марз - 56.6%. Уровень безработицы остается самым высоким в Ереване, который в 2020 году составил 23,6%, такой же показатель был зафиксировано в Тавушском марзе. Самый низкий уровень безработицы зафиксирован в Гегаркуникском марзе, хотя уровень занятости - второй самый низкий после Тавуша.

В 2019 году самый высокий показатель валового внутреннего продукта в Армении в расчете на одного занятого был зафиксирован в столице - 184.4%, несмотря на то, что уровень занятости в Ереване, по сравнению с лидирующим Армавиром, ниже на 21.6%.

В 2020 году из числа 1052 тысяч занятых 566 тысяч или 53,8% были мужчинами. Самый высокий рост занятости женщин в марзах за период мониторинга был зафиксирован в Арагацотнской области: в среднем этот показатель составил около 53%. Высокий показатель среднего роста занятости женщин зафиксирован также в Вайоц Дзоре и Тавуше, соответственно 36.0% и 24.0%. В Ереване в 2020 году, по сравнению с 2018 годом, число занятых женщин увеличилось на 27,3 тыс.

В сентябре 2022 года среднемесячная зарплата составила 236.743 драмов и по сравнению с аналогичным периодом прошлого года увеличилась на 100.0%. В первом квартале 2022 года, по сравнению с тем же периодом, уровень заработной платы во всех марзах увеличился.

В 2020 году уровень бедности в сравнении с 2019 годом вырос на 0.6 процентных пункта и составил около 27%. Уровень бедности в Гегаркунике и Шираке достигает 48.1% и 42.9% соответственно, то есть бедность в Гегаркунике выше среднего по стране на 21.1 процентных пункта. В Сюникском марзе уровень бедности составляет 6,0%, что на 21 процентный пункт ниже среднего по стране, также высок уровень зарплаты - 269.784 драмов. За рассматриваемый период только в 3 марзах РА зафиксировано снижение уровня бедности (Сюник, Котайк, Лори), в остальных картина не положительная.

Можно констатировать, что географическое положение территориальных единиц, природно-климатические условия, социально-экономические особенности Арме-

нии обусловили асимметрию развития территориальных единиц. Экономическое развитие в основном сконцентрировалось в Ереване, затем в Сюнике, частично в Котайке.

Статистический анализ показателей рынка труда РА и моделирование взаимосвязи между макроэкономическими показателями

Для количественной оценки волны сезонности были рассчитаны индексы сезонности числа занятых, безработных и номинальной заработной платы по месяцам на основе соответствующих временных рядов 2012-2021 гг. Индекс сезонности рассчитывается на основе агрегирования значений, зарегистрированных в разные годы в данном сезоне. Для получения относительного показателя - индекса, это агрегированное значение делится на агрегированное значение, выражающее общую тенденцию для всех сезонов.

Сезонный спад занятости в Армении приходится на январь, до августа он относительно стабилен, сезонности нет, а начиная с сентября - пик сезонности занятости. Сезонный пик безработицы приходится на апрель, а в остальные месяцы сезонная волна безработных стабильна. Сезонные пики заработной платы - июль и декабрь, а в остальные месяцы сезонная волна стабильна. Несмотря на то, что сезонный пик занятости начинается с сентября, сезонность безработицы стабильна. Таким образом, эластичность заработной платы – занятости - безработицы в Армении проявляется только в декабре, то есть, в целом, не самый влиятельный фактор.

Моделирование безработица – ВВП

Для моделирования связи ВВП и безработицы была применена модель «ARIMAX», что означает модель с авторегрессионной, интегрированной, скользящей средней и экзогенными переменными. Зависимой переменной модели является количество безработных (тысяча человек). Регрессорами модели являются реальный ВВП (млн. драмов) и отставание от 1-го числа безработных. Коэффициент эластичности - 0,26.

Полученный результат свидетельствует о том, что рост ВВП в Армении на 1% предполагает сокращение безработных на 0,26%. Данная модель также позволяет делать прогноз безработицы. Так, в конце 2022 года Армения планирует зафиксировать экономический рост на 7%, следовательно, в 2022 году только за счет экономического роста число безработных сократится на 1,8%. Количество безработных в декабре 2021 года составило 58 тыс., из которых 1,8% составляют 1070 человек.

Используя эмпирические удельные веса и идеи совокупного/накопительного ВВП по регионам, был рассчитан размер сокращения экономического роста – безработицы по выше оцененной модели. Значительная часть экономического роста приходится на Ереван, следовательно, большее сокращение числа безработных будет рассматриваться в Ереване, а наименьшее - в области Вайоц Дзор.

Занятость-демографический индекс

Одним из ключевых факторов, определяющих динамику занятости, являются демографические процессы. Цель оценки влияния демографических факторов на уровень занятости - выяснить, в какой степени и как демографический показатель каждой группы влияет на занятость. Моделируя влияние факторов, можно сделать сценарный анализ и прогнозы: насколько изменение демографического показателя будет способствовать росту или снижению занятости, к какому фактору чувствительна занятость РА, какие факторы будут нацелены, чтобы применяемая политика была эффектив-

ной? Для решения этой задачи был использован метод главных компонент. Во-первых, были выбраны показатели количественной характеристики указанных факторов, в частности, половой состав - соотношение женщина/мужчина, соотношение село/город, возрастной состав-коэффициент загруженности, темп прироста миграции, численность населения. Исходя из специфики факторов (статистики населения), использовались годовые временные ряды, которые охватывают 1999-2021 гг. Используя метод основных компонент, был построен демографический индекс, который несет в себе влияние всех факторов в соответствующих весах. Затем была рассчитана связь между занятостью и демографическим индексом (корреляционно-регрессионный анализ). Расчеты показали, что демографический индекс на 42.92% обуславливает динамику занятости в РА, а вес каждого компонента демографического индекса можно рассчитать: вес в индексе $\times 0.4292$.

Проведенный анализ показывает, что нацеленность на стимулирование роста и качества жизни сельского населения является существенной задачей для Армении, поскольку это напрямую улучшит уровень занятости в Армении, следовательно, приведет к росту общего благосостояния населения.

Прогноз занятости

Был осуществлен также прогноз занятости РА по двум сценариям. Согласно указанному прогнозу, один сценарий рассматривается без COVID-19 и войны, другой - без последствий COVID-19 и войны. Несмотря на воздействие двух ударных волн, прогнозы из построенной модели имеют тенденцию к росту, то есть, согласно модели, число занятых будет увеличиваться, но не в том темпе, в котором он вырос бы, если бы ряд сохранил свою тенденцию и не подвергся шоку. Сопоставляя прогнозы с фактическими данными, доступными с мая 2021 года по март 2022 года, можно утверждать, что занятость РА в среднем на 5.08% больше, чем сценарий шокового прогноза, то есть она гораздо быстрее восстанавливается или, что то же самое, модель была точной на 95%.

Моделирование связи занятости и показателей макросистемы

Для моделирования связи занятости и макроэкономических показателей построена система регрессионных уравнений, содержащая 2 уравнения. Одно - уравнение, построенное на функции Кобба-Дугласа, другое - отрывок из концепции гравитационной модели торговли. В результате моделирования получается, что рост ВВП на одну единицу приводит к росту товарооборота на 0,51 единицы, рост заработной платы на одну единицу приводит к росту ВВП на 26,582,473 единицы, а рост капитала на одну единицу - к росту ВВП на 0,65 единицы. Расчет кросс-коэффициента заработная плата-торговый оборот показывает, что рост зарплаты в долларах приводит к росту внешнеторгового оборота на 13.557.061 долларов, в частности, к росту экспорта на 3.931.548 долларов и импорта на 9.625.514 долларов. Отметим также, что в исследуемый период влияние роста заработной платы в результате инфляции на ВВП в среднем ежегодно снижается на 913.579 долларов, то есть влияние инфляции составляет 3.4% в год.

Мониторинг коэффициентов эластичности ВВП к зарплате по марзам показывает, что сравнительное преимущество экономического потенциала Еревана очевидно. Рост зарплаты в один доллар оказывает значительное влияние также на рост объемов ВВП Сюникской, Араратской, Котайкской и Армавирской областей, однако в областях с

недостаточным экономическим потенциалом указанное влияние не существенно.

Анализ, оценка текущих результатов политики занятости и государственных программ по обеспечению занятости РА и решения по увеличению предметного потенциала

